

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից աշխարհում բանկային գործունեության զարգացման բնութագրերն են միջազգայնացման միտումները, որոնց հիմքում ընկած են համաշխարհային տնտեսության մեջ խորացող ինտեգրման գործընթացները, և որի դրսևորումներից է նաև միջազգային ֆինանսաբանկային համակարգի ձևավորումը՝ ազդելով համաշխարհային ինտեգրման գործընթացների վրա: Մակայն մյուս կողմից, փոփոխ ազատ շարժը կարող է հանգեցնել առանձին երկրներում տնտեսական և ֆինանսաբանկային համակարգի ճգնաժամերի, որոնք հաճախ տարածվում են ազգային սահմաններից դուրս:

Միջազգայնացումը տնտեսավարման ընթացքում տնտեսական գործունեության ծավալումն է ազգային սահմաններից դուրս, և օտարերկրյա տնտեսավարող սուբյեկտի ներգրավումը տվյալ տնտեսավարող սուբյեկտի՝ ազգային սահմաններում իրականացվող տնտեսական գործունեությանը: Միջազգային ինտեգրումը դրսևորվում է մի քանի եղանակով: Եղանակներից ամենատարածվածը և հինը ապրանքների միջազգային առևտուրն է, որը թույլ է տալիս բարձրացնել տնտեսավարման արդյունավետությունը միջազգային մասնագիտացման միջոցով, ընդ որում, ներկայումս առավել կարևորվում է ծառայությունների առևտուրը: Միջազգային ինտեգրման մյուս եղանակներն են՝ *այլանսների, համատեղ ձեռնարկությունների և մասնաճյուղերի միջոցով գործունեության ծավալումը*: Ինտեգրման վերին աստիճան կարելի է համարել *վերազգային (անդրազգային) ընկերությունների զարգացումը*, որոնք թեև ստեղծվել են որոշակի երկրում, բայց գործում են աշխարհով մեկ: Այս ընկերությունների գործունեությունը սկիզբ դրեց գլոբալացման ժամանակակից միտումներին, որոնք հիմնականում պայմանավորված են առկա տնտեսական և քաղաքական միջավայրով:

Էական տարբերություններ կան *վերազգային կորպորացիաների և վերազգային բանկերի* միջև: *Վերազգային կորպորացիաների գործունեությունն* ենթադրում է տեխնոլոգիական գործընթացի աստիճանականություն. մի երկրում ՎԿ մասնաճյուղերն իրականացնում են արտադրանքի նախնական մշակում, մեկ ուրիշ երկրում՝ մշակման հաջորդ փուլը, երրորդ երկրում՝ արտադրանքի վերջնական հավաքումը, չորրորդ երկրում՝ դրանց իրացումը: Իսկ **վերազգային բանկերը** բանկային ծառայությունները մատուցում են ամբողջական տեսքով, աստիճանականություն տեղի չի ունենում, քանի որ նմանօրինակ ծառայությունները պահանջում են գործողությունների միաժամանակյա կատարում և հաճախորդի ու ծառայություն մատուցողի անմիջական շփում (հաղորդակցություն): Այնուամենայնիվ, *ՎԲ կարող են ընդգրկել միջազգայնացման տարրեր, քանզի կարող են վարկավորել այլ երկրների հաճախորդներին՝ օգտագործելով (տրամադրելով) մեկ այլ երկրից ներգրավված միջոցները*:

Գլոբալացումը տնտեսական ինտեգրման և միջազգայնացման այնպիսի մակարդակ է, երբ ազգային տնտեսությունների միջև փոխկապվածությունը հասնում է այն աստիճանի, որ ձևավորվում է միասնական տնտեսական միջավայր, համաշխարհային մակարդակով մրցակցող և համագործակցող տնտեսավարող սուբյեկտներ ու միասնական շուկա՝ համապատասխան տնտեսական և քաղաքական նախադրյալների առկայության դեպքում:

Ֆինանսական միջնորդությունն ընդհանրապես և բանկային գործունեությունը մասնավորապես ունեն զարգացման ներքին տրամաբանություն: Ֆինանսական միջոցներ (կապիտալ) կուտակելու և դրանք արդյունավետ տեղաբաշխելու գործառույթն իր էությունով չի ընդունում տարածքային, ազգային կամ քաղաքական սահմաններ: *Բանկերը, սպասարկելով հաճախորդներին, արդեն իսկ ծավալում են միջազգային գործունեություն: Միջազգային բանկային ծառայությունների առկայությունը նվազեցնում է այլ ոլորտների միջազգային գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, խրախուսում է միջազգային բազմատարրերակումը և նպաստում միջազգային ներդրումներին*:

20-րդ դ. ընթացքում համաշխարհային տնտեսությունը կրեց մի շարք զգալի փոփոխություններ՝ կապված ռազմաքաղաքական դաշտի զարգացումների հետ, որոնք ազդեցին նաև բանկային գործունեության վրա: Երկու համաշխարհային պատերազմները, բազմաթիվ հեղափոխությունները և գաղութատիրական համակարգի փլուզումը մշտապես ձևափոխել են խաղի կանոնները, ինչի հետևանքով բանկերն «սկսեցին վերադառնալ» միջազգային ոլորտ միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ հստակեցվեցին խաղի կանոնները և սկսեցին գործել միջազգային ֆինանսական կազմակերպությունները: Բանկային գործունեության միջազգայնացումը նոր որակ ստացավ, երբ առանձին բանկային ընկերություններ, համատարած գլոբալացման միտումների ներքո, սկսեցին վերափոխվել վերազգային կառույցների: Բանկային գործունեության միջազգայնացմանը նպաստող

գործունեների ազդեցության ներքո փոխվեցին միջազգային բանկային համակարգի կառուցվածքը, մասնակիցները, գործելակերպը: Քաղաքական գործունեների ազդեցությունը զգալի էր բանկային ոլորտում, քանի որ տնտեսական քաղաքականության գործիքների զարգացման արդյունքում բանկային համակարգերը դարձան տնտեսության զարգացման կարևոր օղակ: Ջարգացող տեխնոլոգիաները, տեղեկատվության հոսքերի արագությունը և ցածր գինը մեծապես ազդեցին միջազգային բանկային համակարգի կառուցվածքի վրա: Ջարգացած երկրների բանկերն սկսեցին ողջ աշխարհի բանկային համակարգերը դիտարկել որպես գործունեության միասնական շուկա: Ձևավորվեցին խոշորագույն բանկեր. *առաջ քաշվեց ֆինանսական ունիվերսալ կառույցի զաղափարը:*

Բանկային համակարգը, որպես ֆինանսական հոսքերն ապահովող միջնորդ, գտնվում է գլոբալացման պայմաններում կատարվող փոփոխությունների կենտրոնում: **Բանկային բիզնեսի տրանսֆորմացիայի վրա ազդում են հետևյալ գործոնները.**

- ✓ *միջազգային առևտրի ընդլայնումը*, որը նպաստում է բանկերի գործառնությունների ընդլայնմանը,
- ✓ *վերազգային ընկերությունների գործունեության մասշտաբի ընդլայնումը*, որը նպաստում է ինովացիոն բանկային ծառայությունների առաջացմանը,
- ✓ *տնտեսական սուբյեկտների գործունեության ունիֆիկացիան (միասնականացումը) համաաշխարհային և ազգային ֆինանսական շուկաներում*,
- ✓ *ազգային բանկային համակարգի աճող կախվածությունը կապիտալի միջազգային շուկայից*,
- ✓ *համաաշխարհային ֆինանսական շուկայում մրցակցության ուժեղացումը ինչպես բանկերի միջև, այնպես էլ բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների միջև*,
- ✓ *ազգային տնտեսության ազատականացման աստիճանը*,
- ✓ *բանկային վերահսկողության ստանդարտացումը*,
- ✓ *տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը:*

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Միջազգային բանկային բիզնեսն իրենից ներկայացնում է բանկերի միջազգային ֆինանսական գործունեությունը, որը դրսևորվում է օտարերկրյա կոնտրագենտների և համաաշխարհային ֆինանսական շուկաներում բանկերի գործառնությունների իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ *միջազգային բիզնեսն անցել է զարգացման 5 փուլ՝ առևտրային դարաշրջան, էքսպանսիայի դարաշրջան, կոնցեսիայի դարաշրջան, ազգային պետությունների դարաշրջան, գլոբալացման դարաշրջան:* Միջազգային բանկային բիզնեսի տրանսֆորմացիան գլոբալացման պայմաններում հետևյալն է՝

- *բանկային բիզնեսի վերակողմնորոշում ավանդականից նորարարականի (ինովացիոնի),*
- *բանկերի՝ որպես ֆինանսական միջնորդի դերի ուժեղացում,*
- *միավորումների և միաձուլումների գործընթացի ակտիվացում բանկային շուկայում,*
- *բանկերի կենտրոնացումը համաաշխարհային խոշոր ֆինանսական կենտրոններում,*
- *բանկային բիզնեսի ունիվերսալացում (բազմակողմանիություն),* այսինքն՝ գլոբալ ունիվերսալ ֆինանսական հաստատությունների հիմնում (*ֆինանսական հանրախանութներ*, որոնք կտրամադրեն ծառայությունների լայն սպեկտր):

Միջազգային բանկային բիզնես իրականացնող բանկերին առաջադրվում են մի շարք պահանջներ՝ ֆինանսական ծառայությունների որակի միջազգային ստանդարտների պահպանում, բանկային ինովացիոն գործառնությունների զարգացում, միջազգային և ազգային ֆինանսական շուկաների մրցակցային դիրքի պահպանում, բանկային մենեջմենթի բաժր որակ:

Քանի որ յուրաքանչյուր տնտեսական գործունեություն ուղեկցվում է դրամական հոսքերով, անհրաժեշտ է այնպիսի միջազգային համակարգի առկայություն, որը թույլ կտա ապահովել դրամի հոսքը երկրների միջև ընդունելի ժամկետներում և ընդունելի գներով: Ըստ այդմ՝ ազգային բանկային համակարգերը ներդրեցին **միջազգային էլեկտրոնային փոխանցումների համակարգը:**

Միջազգային բանկային համակարգը այն բոլոր ազգային բանկային հաստատությունների ամբողջությունն է, որոնք գործունեություն են ծավալում ազգային սահմանների ներքո և ազգային սահմաններից դուրս ազգային ու այլ երկրների արժույթներով, միասնական կազմակերպական աստիճանակարգության ներքո:

Միջազգային բանկն իրենից ներկայացնում է տարբեր երկրների իրավասության սահմաններում գտնվող տարբեր կազմակերպարարական ձևերով բազմաթիվ բանկային հաստատությունների մի ամբողջություն, որոնք շաղկապված են սեփականության միասնական համակարգով ու կառավարվում են կենտրոնացված կարգով, և որը համաշխարհային մակարդակով ներկայացնում է միջազգային բանկային համակարգը:

Անհրաժեշտ է տարբերել «բանկերի միջազգային գործարքներ» և «միջազգային բանկային գործունեություն» հասկացությունները:

Ազգային սահմաններում գործող բանկերի միջազգային գործարքների հասկանիշներն են՝ թղթակցային հաշիվների լայն ցանցը, միջազգայնորեն ընդունված վճարային գործիքների օգտագործումը, օտարերկրյա հաճախորդների սպասարկումը:

Բանկերի միջազգային գործարքների նպատակը ներքին հաճախորդների միջազգային գործունեության և օտարերկրյա հաճախորդների ներքին ֆինանսական գործարքների սպասարկումն է:

Վերջին տարիներին միջազգային բանկային համակարգի զարգացման ընթացքը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով՝ բանկերի եկամուտների աղբյուրների տեսակարար կշռի շարժ դեպի ոչ տոկոսային եկամուտներ, տարատեսակ ֆինանսական միջնորդների կենտրոնացում, մեկ կազմակերպական կառուցվածքի ներքո ֆինանսական խմբերի ստեղծում, բանկային հաստատությունների խոշորացում, միջազգային մրցակցության ուժեղացում, կարգավորման դաշտերի և տեխնոլոգիաների մերձեցում:

Սկզբնապես բանկերի եկամուտների մեծ մասը բաժին էր ընկնում տոկոսային գործառնություններին արդյունքում ձևավորված եկամուտներին: Որքան բարձր էին տնտեսությունում իրական տոկոսադրույքները, այնքան բարձր էր բանկերի տոկոսային եկամուտը: Սակայն 20-րդ դ. 80-ական թթ. սկզբին զարգացած ազգային բանկերը հայտնվեցին ծանր կացության մեջ. առկա էր ցածր տնտեսական աճ, բարձր գնաճ, աճող գործազրկություն, հետևաբար չաշխատող վարկեր: Այլընտրանքային ֆինանսավորման և ներդրման հնարավորությունների ձևավորումը նվազեցրեց հաճախորդների ընդհանուր ծավալը, որն էլ հանգեցրեց բանկերի տոկոսային եկամուտների նվազմանը: Ուստի բանկերն սկսեցին փնտրել եկամուտների այլ աղբյուրներ՝ փորձելով բարձրացնել ոչ տոկոսային հասույթի մակարդակը: Տարիների ընթացքում ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռն աճեց: Նույն ժամանակահատվածում ակտիվացավ տարբեր բնույթի ֆինանսական միջնորդություն իրականացնող ընկերությունների միաձուլումների գործընթացը, որը պետք է բարձրացնեք գործունեության արդյունավետությունը՝ կենտրոնացնելով գործառնությունները: Առաջ քաշվեց **ֆինանսական հանրախանութի** գաղափարը, ըստ որի՝ *հաճախորդը, այցելելով ընկերության մասնաձյուղ, կարող էր ստանալ ծառայություններ ֆինանսական ոլորտի ցանկացած հատվածից*. Ստեղծվել են **խմբեր**, որոնք ներառում են *սպահովագրական, անշարժ գույքի, կենսաթոշակային, հավատարմագրային կառավարման, բանկային և ներդրումային ընկերություններ*: Բանկերը սկսեցին «ներթափանցել» այլ ֆինանսական միջնորդների գործունեության ոլորտ՝ առաջարկելով ոչ ավանդական ֆինանսական ծառայություններ, որն էլ հանգեցրեց միասնական ֆինանսական միջնորդության դաշտի ձևավորմանը, որտեղ ֆինանսական միջնորդները մրցակցում են հաճախորդների համար: Միջպրոֆիլային միաձուլումներից բացի ակտիվացան առևտրային բանկերի միաձուլումները: Ձևավորվեցին **խոշոր բանկեր** լայն աշխարհագրական ցանցով և հաճախորդների մեծ քանակով՝ պայմանավորված մրցակցային պայմանների խստացմամբ, ծախսերի կրճատման և եկամուտների բարձրացման անհրաժեշտությամբ: *Միաձուլումների հիմնական նպատակը առավել եկամտաբեր շուկաներ մուտք գործելն է, որի արդյունքում խոշորագույն բանկերը դառնում են միջազգային բանկային ընկերություններ և մրցակցում համաշխարհային մակարդակով*: Միջազգային բանկային համակարգը գործում է մրցակցային խիստ պայմաններում, հիմնական մասնակիցները գտնվում են գերիշխող դիրքերում:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ

- Գոյություն ունի միջազգային բանկային բիզնեսի կազմակերպման 2 ուղղություն՝
- այլ երկրներում առանց բանկային ստորաբաժանումների հիմնադրման և
- բանկային ստորաբաժանումների (գրասենյակների) միջոցով:

Միջազգային բանկային բիզնեսի իրականացումն այլ երկրներում **առանց բանկային ստորաբաժանումների հիմնադրման** վկայում է միջազգային բիզնեսում բանկերի ցածր աստիճանով ներգրավվածության մասին: Այս դեպքում միջազգային բանկային գործառնություններն իրականացվում են պարբերականությամբ, որը չի պահանջում օտարերկրյա ինստիտուցիոնալ միավորի բացում: Հաճախ միջազգային բանկային բիզնեսի վարման այս ձևն իրականացվում է բանկի կազմակերպչական կառուցվածքում միջազգային կազմակերպչական ստորաբաժանումների ներդրման միջոցով (օրինակ, բանկի արժութային դեպարտամենտը, օտարերկրյա բանկերի հետ թղթակցային հարաբերությունները, միջազգային գործառնությունների կատարումը թղթակցային միջբանկային ուղիների միջոցով, գործառնությունների իրականացումը համաշխարհային և ազգային արժութային շուկաներում և այլն):

Թղթակցային հարաբերությունների հաստատումը օտարերկրյա բանկերի հետ այլ երկրներում բիզնեսի ընդլայնման ամենապարզ ձևն է: Բանկի այդպիսի ռազմավարությունը թույլ է տալիս ֆինանսական ծառայություններ տրամադրել այն երկրներում, որտեղ նրանք չունեն իրենց գրասենյակները կամ նրանց թույլատրված է գործունեություն իրականացնել միայն տեղի բանկերի միջոցով:

Միջազգային բանկային բիզնեսի կազմակերպումն այլ երկրներում **բանկային ստորաբաժանումների (գրասենյակների) միջոցով** իրականացվում է այլ երկրներում

- ❖ **բանկի ոչ գործառնական ստորաբաժանումների (օտարերկրյա ներկայացուցչություն) և**
- ❖ **բանկի գործառնական ստորաբաժանումների (մասնաճյուղեր, դուստր, համատեղ բանկեր) բացման միջոցով:**

Բանկի միջազգային կազմակերպչահիստիտուցիոնալ միավորի ստեղծման նպատակահարմարությունը պայմանավորված է գործունեության ընդհանուր նպատակներին հասնելու ներդրմամբ, որը շահույթի մաքսիմալացումն է:

Բանկի ներկայացուցչությունը բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող ստորաբաժանումն է, որը ներկայացնում է բանկը (ներկայացնում է բանկի շահերը և իրականացնում նրանց պաշտպանությունը), ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ: Ներկայացուցչությունը բանկային գործունեություն և օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու իրավունք չունի: ***Բանկերը կիրառում են այս ռազմավարությունը նոր ֆինանսական շուկաներ մուտք գործելու համար, հաճախ ռիսկային, կամ էլ իրականացնում են այն երկրներում, որտեղ օտարերկրյա բանկերին արգելված է բացել մասնաճյուղեր կամ դուստր ընկերություններ:***

Հիմնականում ներկայացուցչությունները հավաքագրում են ֆինանսատնտեսական տեղեկատվություն երկրների վերաբերյալ, նպաստում դրական իմիջի ձևավորմանը, գործնական շփումներ հաստատում պոտենցիալ հաճախորդների հետ: Հաճախ ներկայացուցչությունների բացումը նախորդում է բանկերի մասնաճյուղերի կամ այլ առանձնացված գործառնական ինստիտուցիոնալ միավորի բացմանը:

Բանկի մասնաճյուղը բանկի՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և բանկի գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն և /կամ օրենքով նախատեսված ֆինանսական գործառնություններ է իրականացնում: **Օտարերկրյա բանկի մասնաճյուղը** բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ է իրականացնում լիցենզիայի հիման վրա (մասնաճյուղ բացելու համար անհրաժեշտ է տվյալ երկրի պետական մարմինների և ԿԲ թույլտվությունը): Մասնաճյուղերի լայն ցանցը հնարավորություն է տալիս զարգացած միջազգային գործունեությանը համապատասխան ապահովել բանկային ծառայությունները (մասնաճյուղերի բացում համաշխարհային ֆինանսական կենտրոններում, օֆշորային տարածքներում): Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը ակտիվորեն մրցակցում են այլ վարկային կազմակերպությունների հետ, միաժամանակ իրականացնում է միջազգային ֆինանսական գործառնություններ:

Միջազգային բանկային բիզնեսի վարման ձևերից է նաև **դուստր բանկերի բացումը: Դուստր է համարվում այն բանկը**, որի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի և փայերի վերահսկիչ փաթեթը պատկանում է գլխամասային բանկին, կամ էլ վեջինս հնարավորություն ունի կանխորոշել որոշումները, ընդունված դուստր բանկի կողմից՝ համաձայն նրանց միջև կնքված պայմանագրի: ***Դուստր բանկերի բացման նպատակահարմարությունը հիմնավորվում է միջազգային մրցակցային դիրքի բարելավման, այլ առավելությունների ստացման անհրաժեշտությամբ: Դուստր բանկերը բացվում են այն երկրներում, որտեղ***

արգելված է օտարերկրյա բանկի մասնաճյուղի բացումը: Դուստր բանկը ստեղծվում է տվյալ երկրի նորմատիվ ակտերով, այն նաև հանդիսանում է իրավաբանորեն ինքնուրույն միավոր: Բանկի գլխամասը պետք է ունենա նախնական կապիտալ նրա հիմնադրման համար: Դուստր բանկը գործում կապիտալի և ներգրավված միջոցների հիման վրա:

Միջազգային բանկային բիզնեսի իրականացման ձևերից է նաև համատեղ բանկերի հիմնադրումը: Ի տարբերություն դուստր բանկի՝ **համատեղ բանկ հիմնադրող բանկը** չի տնօրինում բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը: **Համատեղ բանկը հաճախ հիմնվում է մի քանի վարկային կազմակերպությունների կողմից, որոնք կիսում են սեփականությունը և սահմանազատում բանկի կառավարումը:** *Սյու ձևը գերադասելի է այն երկրներում, որտեղ արգելված է մասնաճյուղերի բացումը կամ սահմանափակված է օտարերկրյա կապիտալի մասնակցությունը:* Համատեղ բանկի ստեղծումը հնարավորություն է տալիս ոչ մեծ վարկային կազմակերպություններին կազմակերպել իրենց մասնակցությունը առանձին շուկաներում:

Մշակելով բանկային գործունեության տարածքային դիվերսիֆիկացիայի ռազմավարություն՝ բանկերը պետք է ուսումնասիրեն բանկային շուկան, որտեղ ուզում են ներկայացված լինել:

Միջազգային բանկային բիզնեսի կազմակերպման բարձրագույն աստիճանը հանդիսանում են վերազգային բանկերը: Համաշխարհային տնտեսության գլոբալացումը, կապիտալի կենտրոնացման գործընթացների ուժեղացումը, բանկային ոլորտում ապակարգավորման աճող միտումները նպաստեցին նոր տիպի *միջազգային բանկի՝ վերազգային բանկի* ստեղծմանը: **Միջազգային կամ վերազգային բանկն իրենից ներկայացնում է տարբեր երկրների իրավասության սահմաններում գտնվող տարբեր կազմակերպատիրավական ձևերով բազմաթիվ բանկային հաստատությունների մի ամբողջություն, որոնք շաղկապված են սեփականության միասնական համակարգով ու կառավարվում են կենտրոնացված կարգով, և որը համաշխարհային մակարդակով ներկայացնում է միջազգային բանկային համակարգը:**

ՎԲ-երն իրենցից ներկայացնում են մասշտաբային ֆինանսավարկային կոմպլեքսներ, որոնք տարբերվում են իրենց գործունեության գլոբալ տարածքային դիվերսիֆիկացիայով, տրամադրում են ծառայությունների լայն սպեկտր հաճախորդներին՝ հանդիսանալով տարբեր երկրների ռեզիդենտներ: ՎԲ-երն ազդեցություն են ունենում գլոբալացման գործընթացի արագացման վրա՝ ձևավորելով գլոբալ ռազմավարություններ: ՎԲ-երի գլոբալ ռազմավարությունների բնութագրական կողմերն են՝ *կապիտալի միավորումը, գլոբալ մարքեթինգային մրցակցային ռազմավարությունների ստեղծումը, գլոբալ թղթակցային հարաբերությունների ու հաշիվների համակարգի ստեղծումը:*

ՎԲ-երի միջազգային գործունեությունը ձեռք է բերել մի շարք **առանձնահատկություններ՝**

- ✓ ՎԲ-երը՝ որպես մենաշնորհներ բանկային ծառայությունների ներքին և համաշխարհային շուկաներում,
- ✓ ՎԲ-երի գործունեության վառ արտահայտված միջազգային ուղղվածությունը՝ շնորհիվ այլ երկրներում տրամադրվող բանկային ծառայությունների և իրականացվող գործառնությունների բարձր տեսակարար կշռի,
- ✓ որպես ամբողջական մեխանիզմ՝ կազմակերպատիրատուի ստորաբաժանումների լայն ցանցի առկայությունը,
- ✓ բանկի միջնորդական գործառնության գլոբալ բնույթը,
- ✓ ՎԲ-երի ռեսուրսների ներգրավման աղբյուրների և տեղաբաշխման ուղղությունների աճող աշխարհագրական դիվերսիֆիկացիան,
- ✓ բանկային գործունեության վերակազմակերպումը,
- ✓ ՎԲ-երի մասնակցությունը աշխարհի հիմնական ֆինանսական կենտրոններում:

ՎԲ-երը հասել են կապիտալի կենտրոնացման բարձր մակարդակի, ունեն ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և այլ կառույցների գլոբալ ցանց, հանդես են գալիս որպես կապիտալի շարժի հիմնական միջնորդներ: Ավելացնելով մասշտաբները, ընդլայնելով ծառայությունների շրջանակը՝ ՎԲ-երը «ճնշում» են ազգային բանկերին բանկային ծառայությունների համաշխարհային և ազգային շուկաներում՝ իրականացնելով տարածքային էքսպանսիա: ՎԲ-երի գործունեությունը բազմատեսակ է՝ տարբեր արժույթներով մեծածավալ դրամական միջոցների մոբիլիզացիա, մուլտիարժույթային վարկերի տրամադրում, գործառնություններ արժեթղթերի, արժույթային շուկաներում, խորհրդատվական, տրաստային, տեղեկատվական գործառնություններ: Խոշոր ՎԲ-երը հանդիսանում են լիդերներ բանկային ծառայությունների շուկայում:

ԱՄՆ-Ի ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Դրամավարկային համակարգի ձևավորումը ժամանակակից ԱՄՆ-ի տարածքում տեղի է ունեցել մինչև Դաշնային պահուստային համակարգի ստեղծումը: 1690թ. Մասաչուսեթյան ծոցի գաղութն առաջինը թողարկեց թղթե կարճաժամկետ պարտատոմսեր, որոնք իրենցից ներկայացնում էին բանկոտների և կարճաժամկետ պարտատոմսերի նման մի բան, որի նպատակն էր ֆինանսավորել Կանադայում ռազմական հետախուզությունը: Սակայն դա մեկանգամյա փորձ էր, և շրջանառության մեջ շարունակվեցին օգտագործվել անգլիական ֆունտ-ստեռլինգն ու իսպանական արծաթե դոլարները:

ԱՄՆ դոլարը, որպես ազգային դրամական միավոր, Կոնգրեսի կողմից շրջանառության մեջ է դրվել 1785թ-ին անկախության համար պատերազմից հետո (1775-1783թթ.):

ԱՄՆ Կոնգրեսը միավորված գաղութների (նահանգների) անունից որոշում ընդունեց ձևավորել Միավորված Նահանգների Առաջին բանկը և ազգային դրամական միավորի թողարկման իրավունք տրվեց վերջինիս: Ստեղծվեց առաջին դրամատունը Ֆիլադելֆիայում, որը պետք է հատեր արծաթե դոլարներ և պղնձյա ցենտներ՝ համապատասխան իսպանական արծաթե դրամների կշռին:

1791թ. ԱՄՆ Դաշնային կառավարությունը Առաջին բանկի հիմնադրման դեպքում ներդրեց կանոնադրական կապիտալի որոշակի մասը և խոստացավ, որ 20 տարվա ընթացքում ոչ մի բանկի չի ապահովի փաստաթղթով (**չարտեր**, որը վկայում է բանկային գործունեության լիցենզիայի մասին), որը թույլ կտար իրականացնելու բանկային կանոնադրության համապատասխան բանկային գործունեություն:

1811թ. առաջացավ լիցենզիայի երկարաձգման հարցը, որն ընդդիմության կողմից հանդիպեց «դիմադրության»: Վերջիններս պահանջում էին բանկերի քանակի ավելացում:

Միացյալ Նահանգների Առաջին բանկը լուծարվեց, և անմիջապես ստեղծվեցին բազմաթիվ բանկեր՝ հասնելով 88-ի: Հաջորդ 3 տարիների ընթացքում տրամադրվել էր 120 նոր չարտեր:

Բանկերի գործունեության հիմնական լուրջ խնդիրը քլիրինգի բացակայությունն էր (1812-1913թթ.): Նախքան այդ քլիրինգն իրականացնում էր Առաջին բանկը, և 1816թ. Ֆինանսների նախարար Ջեյմս Դալասն առաջարկեց ստեղծել ԱՄՆ-ի Երկրորդ բանկը, որի նոր գործառույթներից էր առանց նահանգների կառավարության համաձայնության ներկայացուցչությունների բացումը: Սակայն դա առաջ բերեց քաղաքական դժգոհություն, որոնք ավել սրվեց 1819թ. բանկային ճգնաժամից հետո: Այն պայմանավորված էր բանկոտների մեծաքանակ թողարկմամբ: Դրամավարկային ոլորտում հարաբերական կայունությունը պահպանվեց մինչև 1836 թ-ը, երբ ավարտվեց ԱՄՆ Երկրորդ բանկի գործունեության ժամկետը (չարտերը): Այն ևս առաջ բերեց բանկերի քանակի ավելացման, որի հետևանքն էր նաև վարկի հասանելիության մատչելիությունը՝ ուղեկցվող վարկային խնդիրներով: Արդյունքում տեղի էր ունենում պետական հողերի սպեկուլյացիա /առք-վաճառք/: Ճգնաժամը տևեց մինչև 1840թ-ը, և յուրաքանչյուր նահանգի խնդիրն էր կարգավորել վարկային հիմնախնդիրները: Առաջնահերթ խնդիրն էր՝ պայքարել լրացուցիչ էմիսիայի դեմ: Բարդությունը կայանում էր նրանում, որ թողարկված բանկոտները բանկերի հաշվարկով միանգամից չպետք է մարվեին: Արդյունքում, 1859թ. շրջանառության մեջ գտնվում էր 5400 տեսակի բանկոտ /պարտատոմս/:

Դրամավարկային համակարգում արմատական փոփոխություններ տեղի ունեցան 1861-1865թթ-ին՝ «Քաղաքացիական պատերազմի» ժամանակ, երբ հարավային հատվածի բանկերը խզեցին հարաբերությունները հյուսիսային հատվածի բանկերի հետ:

1864թ. Գանձարանի քարտուղար Մոլոմոն Չեյզը մշակեց և իրականացրեց համազգային բանկային օրենք, ըստ որի, սահմանվեցին բանկերի հիմնադրման պայմանները (նվազագույնը 5 փայտեր, 50 հազ. դոլար կանոնադրական կապիտալ), բանկերը նաև պետք է ապահովեին իրենց էմիսիան կառավարության պարտատոմսերի դեպոնացմամբ: Դրամավարկային համակարգի ոչ շատ էլաստիկությունը և նրա թույլ ազդակը անհրաժեշտություն առաջացրեցին մշակելու Կենտրոնական բանկի մասին օրենքը և բարեփոխելու բանկային համակարգը:

Մինչև 20-րդ դարի սկիզբը ԱՄՆ-ում հաճախ բանկերի սնանկացումների արդյունքում առաջանում էին տնտեսական ճգնաժամեր: 1907թ. ճգնաժամը պատճառ հանդիսացավ ԱՄՆ Կոնգրեսի կողմից Ազգային Դրամավարկային հանձնաժողովի ստեղծման համար:

Դրամավարկային քաղաքականություն մշակելու և բանկային համակարգի գործունեությունը կարգավորելու նպատակով 1913թ. ընդունվեց ԱՄՆ-ի «Դաշնային պահուստային համակարգի» մասին օրենքը (ԱՄՆ նախագահ Վիլսոնը ստորագրեց), որով հիմք դրվեց Դաշնային պահուստային համակարգի

(բանկի) ձևավորմանը (գրասենյակը՝ Վաշինգտոն): Այդ ժամանակ ԱՄՆ-ում գործում էր 20 հազար բանկ, որից 7000 էմիսիոն ազգային բանկեր էին, մնացածը գործում էին իրենց նահանգների օրենքներով և փոքր թողարկելու իրավունք չունեին:

ԱՄՆ-ի ողջ տարածքը բաժանված էր 12 շրջանների, որոնցից յուրաքանչյուրում գործում էր Դաշնային պահուստային բանկ 4 մլն դոլար կապիտալով: Այսպիսով, Դաշնային պահուստային բանկի առանձնահատկությունն ու ինքնատիպությունը կայանում են նրանում, որ լինելով ինչպես կենտրոնացված՝ միևնույն ժամանակ բաղկացած էր լայն ինքնուրույնություն ունեցող 12 Դաշնային պահուստային տարածքային բանկերից: Ի տարբերություն այլ երկրների կենտրոնական բանկերի՝ այն ստեղծվել է առևտրային բանկերի կողմից և պատկանելով նրանց՝ իրականացնում էր բանկային համակարգի գործունեության վերահսկողությունը:

Դաշնային պահուստային համակարգը իր մեջ ներառում է 2 կոմիտե՝

1. Բաց շուկայական գործառնությունների գծով դաշնային կոմիտե,
2. Դաշնային խորհրդատվական խորհուրդ:

Դաշնային պահուստային բանկը ղեկավարում է բանկի տնօրենների խորհուրդը, որը բաղկացած է 2 տարին մեկ 14 տարի ժամկետով Կոնգրեսի համաձայնությամբ ԱՄՆ նախագահի կողմից նշանակվող 7 անդամներից: Խորհուրդը պատասխանատու է երկրում դրամաշրջանառության և բանկային համակարգի կարգավորման ու վերահսկման համար: Բանկի տնօրենների Խորհուրդը և տարածքային պահուստային բանկերի ղեկավարները միասին կրում են բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության գծով պատասխանատվությունը: Բանկն ունի երկրի գործադիր իշխանությունից անկախ կարգավիճակ, սակայն գտնվում է օրենսդիր մարմնի՝ Կոնգրեսի մշտական վերահսկողության տակ:

ԱՄՆ-ում Դաշնային պահուստային բանկի հիմնական խնդիրը տնտեսության աճի ապահովումն է՝ պահպանելով գնաճի ցածր մակարդակը:

ԱՄՆ-ում Դաշնային պահուստային բանկի գործառնություններն են՝ դրամավարկային քաղաքականության մշակումը և իրականացումը, բանկային հաստատությունների վերահսկողությունն ու գործունեության կարգավորումը, որն ուղղված է բանկերի և ամբողջ ֆինանսական համակարգի հուսալիության ապահովմանը, առևտրային բանկերի համար պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանումը, հաշվարկային տոկոսադրույքների սահմանումը, պետական արժեթղթերի առք ու վաճառքի քաղաքականության իրականացումը, օտարերկրյա բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողությունը և նրանց հետ փոխհարաբերությունների կարգավորումը, բանկերի միաձուլումները հավանության արժանացնելը, երկրում վճարահաշվարկային հարաբերությունների կարգավորումը, ֆինանսաբանկային ոլորտին վերաբերվող օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալը, դրամանիշեր շրջանառության մեջ բաց թողնելը և շրջանառությունից հանելը /ԱՄՆ Դրամաշրջանառության վերահսկիչի հետ միասին/, բաց շուկայում գործառնությունների իրականացումը, ԱՄՆ տարածքում և արտասահմանում պահուստային բանկերի մասնաճյուղերի ստեղծման գծով որոշման կայացումը, ինչպես նաև ԱՄՆ Կոնգրեսում պահուստային բանկերին ներկայացնելը:

Պահուստային բանկերը հաշվետու են յուրաքանչյուր շաբաթ Խորհրդին: Վերջինս ընդհանրացնում և մշակում է տեղեկատվությունը, ապա հրապարակում հաշվետվությունը շաբաթվա վերջում:

Պահուստային համակարգը պատասխանատու է ԱՄՆ-ի ֆինանսական և տնտեսական քաղաքականության համար, իսկ նպատակը՝ դրամաշրջանառության ճկուն համակարգի ապահովումն է, ինչպես նաև բանկային համակարգի նկատմամբ վստահության ապահովումը:

Բաց շուկայական գործառնությունները հանդիսանում են Դաշնային պահուստային համակարգի հիմնական գործիքը: Բաց շուկայական գործառնությունների գծով կոմիտեն պատասխանատվություն է կրում ողջ գործարքների կատարման համար: Կառավարության և դաշնային գերատեսչությունների արժեթղթերով գործարքները կրճատում կամ ավելացնում են ավանդային հաստատությունների պահուստային ֆոնդերը: Կոմիտեն ցանկացած գործարքի համար տալիս է թույլտվություն և ինքն էլ կառավարում է այն այլ երկրների արտարժույթի շուկաներում:

Դաշնային խորհրդատվական խորհուրդը իրականացնում է խորհրդատվական ժողով Կառավարողների խորհրդի հետ բանկային և տնտեսական հարցերով: Դաշնային պահուստային բանկի անդամ 12 բանկերն առևտրային բանկերի համար հանդիսանում են վերջին ատյանի վարկատու: Դաշնային պահուստային բանկերի անդամներ են Դաշնային պահուստային համակարգի անդամ բանկերը, որոնք պարտավոր են իրենց ընդհանուր կապիտալի մի մասը մշտապես պահել

փայամասնակցության ձևով: Թեև Դաշնային պահուստային համակարգն իր էությամբ անկախ է ԱՄՆ գործադիր իշխանությունից, բայց հանդիսանալով անդամ բանկերի սեփականությունն, այն գտնվում է վեջիններիս /կառավարության/ որոշակի ազդեցության տակ:

20-րդ դարի կրթին Ամերիկյան բանկային համակարգի առանձնահատկություններից էր կենտրոնացված էմիսիոն բանկի բացակայությունը:

1863-64թթ. Ստեղծվել է Ազգային բանկերի համակարգը: Սահմանվել է այդ բանկերի կապիտալի նվազագույն չափը, հաշվետվություն ներկայացնելու կարգը, պարտադիր պահուստավորման նորմատիվը:

ԱՄՆ բանկային համակարգը բաղկացած է 3 հարթության բանկերից՝ **դաշնային, նահանգային և մունիցիպալ բանկեր**: *Դաշնային բանկերը* գործում են համապետական /դաշնային/ օրենսդրության շրջանակներում, *նահանգայինը*՝ տվյալ բանկի գտնվելու նահանգի օրենսդրության շրջանակներում, իսկ *մունիցիպալ բանկերի* գործունեությունը կարգավորվում է բանկի գտնվելու քաղաքի /մունիցիպալիտետի/ օրենքներով:

ԱՄՆ-ում Դաշնային պահուստային համակարգի ստեղծումը զգալիորեն առաջ մղեց երկրի բանկային համակարգը, որը մինչ այդ չունեւ կենտրոնացված կարգավորիչ վերահսկողական կառույց:

Բանկային վերահսկողության տեսանկյունից ԱՄՆ-ի համակարգը կարելի է բնութագրել իբրև ամենախիստ համակարգերից մեկը: Երկրում բանկային վերահսկողության հիմքում ընկած են բանկերի ակտիվ ստուգումները: Վերահսկողության նպատակով ԱՄՆ-ում կիրառվում են բանկերի վարկանիշային CAMELS և Բանկային գործունեության համեմատական վերլուծությունների (UBPR) համակարգերը:

Բացի Դաշնային պահուստային բանկից ԱՄՆ ֆինանսաբանկային համակարգը ներառում է առևտրային և ներդրումային բանկերը /նշված տարբերակումը հանվել է 1999թ./, խնայողական բանկերը, փոխատվական-խնայողական ասոցիացիաները, փոստային խնայողական դրամարկղները, ֆինանսական ընկերությունները, վարկային միությունները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, սոցիալական ապահովության հիմնադրամները, փոխադարձ վարկավորման ընկերակցությունները, ավանդների ապահովագրման հաստատությունները և նման բնույթի այլ կառույցները: ԱՄՆ բանկային համակարգում իրենց ուրույն տեղն ունեն օտարերկրյա բանկերն ու բանկերի մասնաճյուղերը:

ԱՄՆ-ում բոլոր ֆինանսական միջնորդները բաժանվում են դեպոզիտային և ոչ դեպոզիտային ընկերությունների: Ֆինանսաբանկային հաստատությունների յուրաքանչյուր տեսակի համար տարբեր նահանգներում սահմանված են գործունեության առանձին սահմանաչափեր և նորմատիվներ: Ժամանակակից պայմաններում ԱՄՆ-ի բոլոր բանկերը պետք է մտնեն Դաշնային պահուստային համակարգի մեջ, որոշակի պահանջներին հետևելու պայմանով: Դաշնային պահուստային համակարգի անդամ լինելն ունի մի շարք առավելություններ. բանկերը հնարավորություն ունեն օգտվելու վարկային ռեսուրսներից և վճարահաշվարկային ծառայություններից:

ԱՄՆ բանկային համակարգի առանձնահատկություններից է 1933թ. ստեղծված ԱՄՆ Ավանդների ապահովագրման դաշնային կորպորացիան, որի ստեղծմամբ աշխարհում սկիզբ դրվեց ավանդների կենտրոնացված ապահովագրությանը: Կորպորացիայի գործունեությունն ուղղված է պաշտպանելու փոքր ավանդատուների շահերը և զերծ պահել բանկային համակարգը ցնցումներից ու ճգնաճամբներից:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մեծ Բրիտանիայի բանկային համակարգը հանդիսանում է առավել հարուստ և հին պատմություն ունեցող համակարգերից մեկը, որն առանձնանում է իր մասնագիտացված վարկային ինստիտուտներով: Անգլիայում երկար ժամանակ բանկային գործունեության վերահսկողությունը բանկերի և Անգլիայի բանկի (կենտրոնական բանկի) միջև խորհրդակցական բնույթ էր կրում, այսինքն՝ բանկերն Անգլիայի բանկի հետ միասին իրականացնում էին վերահսկողությունը, ներկայացնում էին հաշվետվություններ և պատասխանատվություն կրում դրանց արժանահավատության համար: Այս ոչ ֆորմալ համակարգն արդյունավետ գործեց մինչև 20-րդ դարի 70-ականները: Եվ միայն 1979թ. ընդունված "Բանկերի մասին" օրենքով Մեծ Բրիտանիայում կանոնակարգվեց "բանկ" հասկացության կիրառումը, ըստ որի երկրում բանկերի գործունեությունը հնարավոր է միայն Անգլիայի բանկի թույլտվության հիման վրա (ոչ թե արտոնագրի):

Բանկերի քանակի ու բանկային ծառայությունների տեսականու զգալի աճը անհրաժեշտություն առաջացրեց ստեղծել նոր երկկողմանի վերահսկողության համակարգ՝ ֆորմալ բնույթ տալով բանկերի գործունեության վերահսկողությանը և բանկային գործունեությունը կարգավորող նորմատիվների սահմանմանը, առաջին հերթին բանկերի ակտիվների որակի ու վատորակ վարկերի գծով պահուստների ձևավորման գծով:

Երկնակարգակ բանկային համակարգն առաջինը ձևավորվել է Մեծ Բրիտանիայում, երբ 1694թ. Անգլիայի բանկն ստացավ թղթադրամներ թողարկելու մենաշնորհային իրավունք, որոնք պարտադիր ընդունվում էին բոլոր վճարումների ժամանակ:

Բանկային համակարգի օղակներն են՝ Անգլիայի բանկը, առևտրային բանկերը և մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտները:

Մեծ Բրիտանիայի բանկային համակարգի հիմնական օղակը Անգլիայի բանկն է, այնուհետև առևտրային բանկերն ու մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտները:

Անգլիայի բանկի կառավարիչը, նրա տեղակալները և տնօրենները /16/ պաշտոնապես նշանակվում են Թագուհու /միապետի/ կողմից, սակայն փաստացի ընտրվում և նշանակվում են Գանձապետարանի կանցլերի /Ֆինանսների նախարարի/ կողմից: Նշված 16 տնօրեններից ընդամենը 4-ն են աշխատում Անգլիայի բանկում մշտական հիմունքներով, մնացած 12-ը ներկայացնում են տարբեր առևտրային բանկերը, արդյունաբերությունը, գիտական աշխարհը, արհմիությունները:

Անգլիայի բանկը հիմնվել է 1694թ. որպես բաժնետիրական ընկերություն: 18-րդ դարի կեսերից սկսեց իրականացնել Կենտրոնական բանկին հատուկ գործառույթներ և հանդես գալ որպես Կառավարության բանկ: 1946թ. Անգլիայի բանկն ազգայնացվեց Լեյբորիստների կողմից, որոնք նրա սեփականատերերին վճարել էին ահռելի գումարներ. արժեթղթերը փոխանակել էին պետական պարտատոմսերով, և վերջիններս էլ իրենց արժեքով քառակի անգամ ավել էին բաժնետիրական կապիտալի անվանական արժեքից:

Անգլիայի բանկն իրականացնում է Կենտրոնական բանկին բնորոշ բոլոր գործառույթները՝ հանդիսանում է առևտրային բանկերի բանկը, կառավարության բանկը, թողարկում է արժույթը, սպասարկում պետական պարտատոմսերը, իրականացնում արժույթային գործառնություններ և վերահսկում դրանք, պետության անունից կառավարում երկրի ոսկու ու արժույթային պահուստները, իրականացնում վերահսկողություն վարկային կազմակերպությունների, բանկերի նկատմամբ, տալիս է խորհրդատվություն Կառավարությանը դրամավարկային քաղաքականության հարցերի շրջանակներում, հանդես գալիս վերջին ատյանի վարկատու և այլն:

Անգլիայի բանկն իրավասու է ուղղակիորեն վարկեր տրամադրել երկրի կառավարությանը՝ բյուջեի ընթացիկ պակասուրդը մեղմելու նպատակով: Անգլիայի բանկն ինքնուրույն է իրականացնում երկրում դրամավարկային քաղաքականությունը, որի հիմնական խնդիրը գնաճի ցածր մակարդակի ապահովումն է, սակայն Ֆինանսների նախարարն իրավասու է Անգլիայի բանկին ուղղակի հրահանգներ տալ դրամավարկային քաղաքականության վերաբերյալ: Ի տարբերություն այլ երկրների կենտրոնական բանկերի՝ Մեծ Բրիտանիայում ԿԲ անկախ չէ իր կարգավիճակով, ինչը բացառիկ երևույթ է զարգացած երկրի համար, սակայն միաժամանակ կախված չէ Կառավարությունից:

Մեծ Բրիտանիայում, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, բանկային համակարգի գործունեությունը ուղղակի և սերտ կապի մեջ է երկրի ֆինանսական հատվածի հետ:

Բանկային համակարգի մաս են կազմում (երկրորդ օղակը հանդիսանում են) առևտրային բանկերը, որոնք պատմականորեն մասնագիտացվել են ավանդների ներգրավման գծով, և շատ հաճախ անվանում են ավանդային /դեպոզիտային/ բանկեր: Դեպոզիտային գործառնություններից բացի բանկերը տամադրում են կաճաժամկետ վարկեր, սպասարկում են արտաքին առևտուրն ու միջազգային ֆինանսավարկային գործարքները, կառավարում են ավանդատուների միջոցները, ինչպես նաև կատարում են տարբեր տեսակի գործառնություններ (այդ թվում՝ արժեթղթերի տեղաբաշխում, ֆինանսական խորհրդատվություն, գույքի կառավարում): Այս բանկերն անվանում են նաև մանրածախ բանկեր: Որոշ դեպոզիտային բանկեր այլ կերպ կոչվում են «քլիրինգային» (փոխադարձ վճարահաշվարկային) բանկեր, որոնք խոշոր բաժնետիրական բանկեր են և անվանում են նաև «Մեծ քառյակ»:

Համակարգի մաս են կազմում նաև Բրիտանական Համագործակցության բանկերը, որոնք հանդիսանալով միջազգային բանկեր՝ տնօրինում են գործակալություններ, և ամենատարածվածն են աշխարհում: Վերջիններս կատարում են միջազգային ֆինանսավարկային տարբեր գործարքներ:

Դեպոզիտային բանկերին են վերաբերում նաև *ֆինանսական տները*, որոնք հիմնականում տրամադրում են սպառողական վարկեր: Բանկային համակարգը ներառում է նաև *առևտրային տները*, որոնք ձևավորվել են առևտրային ձեռնարկությունների հիմքով և հետագայում սկսել են իրականացնել բանկային գործառնություններ: Ներկայումս այդ բանկերն իրականացնում են արտաքին առևտրի ֆինանսավորում, լիզինգային, ֆակտորինգային և այլ գործառնություններ:

Երկրի բանկային համակարգում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում *հաշվարկային տները*, որոնք հիմնականում կատարում են դրամական շուկայում կարճաժամկետ գործարքներ և իրականացնում են դրամական շուկայի գնային կարգավորումը: *Կոնսորցիոնալ բանկերը* ֆինանսավարկային ինստիտուտներ են մի քանի բանկերի մասնակցությամբ՝ ընդգրկելով ծայրահեղ դեպքում 2 երկիր, սակայն դրանցից ոչ մեկը չի տիրապետում բաժնետոմսերի հսկիչ փաթեթին: *Շինարարական և վարկային կոոպերատիվները* հավաքագրում են բնակչության խնայողությունները և հիմնականում տրամադրում հիփոթեքային վարկեր:

Խնայողական բանկերն ու փոխատվական-խնայողական միություններն իրականացնում են առևտրային բանկերի բոլոր գործառնությունները, միայն մի տարբերությամբ, կարող են հավաքագրել խնայողություններ փոստային ցանցի միջոցով: Մեծ Բրիտանիայում նույնպես հատուկ նշանակություն ունեն օտարերկրյա բանկերը և նրանց մասնաճյուղերը:

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Շվեյցարիայի բանկային համակարգը համարվում է աշխարհի ամենակայուն և ապահովներից մեկը: Երկարաժամկետ դրամական ապահովման և բանկային գաղտնիքի իրականացվող քաղաքականությունը Շվեյցարիային դարձրեցին երկիր, որտեղ ներդրողներն առավել վստահ են իրենց միջոցների անվտանգության համար: Արդյունքում երկրի տնտեսությունը կախման մեջ է գտնվում օտարերկրյա ներդրողների մշտական հոսքերից: Շվեյցարիան բանկերի երկիր է: Շվեյցարական բանկային համակարգը ներառում է շուրջ 500 բանկային կազմակերպություն:

Շվեյցարիայի բանկային համակարգը ներառում է 2 ենթահամակարգ՝ **պետական** (Շվեյցարիայի ազգային բանկ և կանտոնների (վարչատարածքային միավորների) բանկեր) և **մասնավոր բանկերի** ենթահամակարգ:

Շվեյցարիայի բանկային համակարգը **եռամակարդակ** կառույց է: *Բոլոր շվեյցարկան բանկերը բաժանվում են 3 հիմնական մակարդակների՝*

- **խոշոր ազգային բանկեր և խոշորագույն բանկեր,**
- **կանտոնների (վարչատարածքային միավոր), տեղական և խնայողական բանկեր** (հիմնականում աշխատում են իրենց տարածքների ավանդատուների հետ, տրամադրում վարկեր, իրականացնում հաշվարկադրամարկդային գործառնություններ),
- **մասնավոր կամ այլ բանկեր** (որոնց հիմնական գործունեությունը ներդրումային պորտֆելների կառավարումն է):

Շվեյցարիայի վարկային համակարգի մաս են կազմում նաև **ֆինանսական ընկերությունները**, որոնք լինում են 2 տիպի՝

- ❖ **ընկերություններ, որոնք գովազդում են իրենց ավանդներ ներգրավելու նպատակով ու պետք է համապատասխանեն դաշնային բանկային օրենսդրության պահանջներին**
- ❖ **ընկերություններ, որոնք չեն ընդունում ավանդներ /դեպոզիտներ/, բայց իրականացնում են այլ բանկային գործառնություններ:**

Շվեյցարական բանկերը ունիվերսալ բանկեր են, որոնք իրականացնում են առևտրային և արժեթղթերով գործառնություններ (հիմնականում խոշոր բանկերը և կանտոնների բանկերը): **Մասնագիտացված բանկերը** հիմնականում տարածքային բանկերն են, խնայողական դրամարկդերը, կոոպերատիվ ապահովագրման բանկերը, փոքր կանտոնների բանկերը, որոնք իրականացնում են հիփոթեքային ու խնայողական գործառնություններ: Միջբանկային գործառնություններ հիմնականում իրականացնում են խոշոր բանկերը:

Շվեյցարիայի բանկային համակարգի առանձնահատկություններից մեկը **բանկերի և ներդրումային ընկերությունների գործունեության նկատմամբ խիստ վերահսկողությունն** է: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Շվեյցարիայում բանկերի սնանկության դեպք չի արձանագրվել: Բանկերի նկատմամբ

վերահսկողությունը ունի եռաստիճան կառուցվածք և իրականացվում է Դաշնային բանկային հանձնաժողովի, Ազգային բանկի ու Շվեյցարական բանկային ասոցիացիայի կողմից:

Բանկերի գործունեությունը, դրանց կարգավորումը և վերահսկումը իրականացվում է “Բանկերի և խնայողական բանկերի մասին” և “Բանկային գործունեության մասին” Դաշնային բանկային օրենքների շրջանակներում /ընդունված 1934թ/, որի **հիմնական նպատակը հաճախորդի շահերի պաշտպանությունն է:**

Բանկային լիցենզիան տրվում է Դաշնային Բանկային հանձնաժողովի կողմից միայն այն դեպքում, եթե բանկը համապատասխանում է Օրենքի բոլոր պահանջներին:

Շվեյցարական բանկերի բարձր վարկանիշը պայմանավորված է նաև **բանկային գաղտնիքով:** 14-րդ դ-ում շատ երկրների քաղաքացիներ օգտվում էին շվեյցարական բանկերի ծառայություններից՝ փորձելով պահպանել իրենց խնայողությունները կառավարություններից: Ֆրանսիական թագավորները Շվեյցարիայի բանկերի առաջին հաճախորդներն էին: 1713թ. Ժնևյան խորհրդի կողմից սահմանված կանոնները նախատեսում էին, որ բանկիրը պարտավոր է գրանցել իր հաճախորդներին ու նրանց գործառնությունները, սակայն այդ տեղեկատվությունը չի թույլատրվում տրամադրել 3-րդ անձին՝ առանց քաղաքային խորհրդի թույլտվության: Բանկային ավանդների գաղտնիության հիմք է համդիսացել 1934թ. ընդունված “Բանկային գործունեության մասին” օրենքը: Շվեյցարիայում ավանդների գաղտնիությունը պաշտպանված է քաղաքացիական և քրեական իրավունքի նորմերով: Այն բանկը, որը չի պահպանում իր հաճախորդների գաղտնիքները, բանկային ավանդների գաղտնիությունը, կարող է զրկվել լիցենզիայից, իսկ աշխատակիցները կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության (մինչև 6 ամիս կամ 50000 ֆրանկ տուգանքով): Բանկային տեղեկատվությունը հրապարակվում է կառավարական մարմիններին այն դեպքում, եթե ապացույցներ կան հաճախորդի՝ քրեական հանցագործությանը առնչության վերաբերյալ: Շվեյցարական բանկերի գաղտնիությունը երաշխավորում է նաև հաճախորդի անձի գաղտնիության պահպանումը: Շվեյցարիային բանկային համակարգի առանձնահատկություններից նաև Դաշնային բանկային հանձնաժողովի գործունեությունը:

Շվեյցարիայի բանկային համակարգի հիմնական գործունեության տեսակը գույքի /ավանդների/ պահպանումն ու կառավարումն է: Շվեյցարիայի բանկերը բացում են նաև “համարակալված” հաշիվներ, որոնք ունեն գաղտնիության լրացուցիչ աստիճան, և որոնց մասին տեղեկատվությունը հասանելի է միայն բանկի բարձրագույն ղեկավարությանը:

Շվեյցարիայի բանկային համակարգը միշտ ասոցացվում է հուսալիության, պրոֆեսիոնալիզմի և գաղտնիության հետ: Բանկերի աշխատանքի համակարգը կառուցված է այնպես, որ գործնականում սնանակցումները բացառված են: Վերջիններս չեն կիրառում դեպոզիտային հաշիվների սկզբունքը. եկամտի ապահովումը ստացված և վճարված տոկոսների տարբերության հաշվին, չեն փնտրում բարձր ռիսկային ներդրման օբյեկտներ: Բանկերը հազվադեպ են վարկեր տրամադրում: Բանկիրները ավանդատուների միջոցները կառավարում են ըստ հաճախորդների հանձնարարականների և շահերի, որի հաշվին էլ ձևավորվում է բանկերի շահույթը:

Շվեյցարիայի բանկային համակարգի հիմնական առավելություններից են երկրի չեզոքությունն ու կայունությունը, շվեյցարական ֆրանկի կայունությունը, շվեյցարական բանկերի կայուն ֆինանսական դրությունը, հարուստ փորձը և բանկային գաղտնիքը պահպանելու ավանդույթները:

Ներկայումս Շվեյցարիայի բանկային համակարգի վստահության խաթարման խնդիրներից է Շվեյցարիայի կոնֆլիկտը ԱՄՆ-ի և ԵՄ երկրների հետ՝ պայմանավորված հարկերից խուսափելու հարցերով: Վերջին 10 տարիներին ԱՄՆ համառությամբ պահանջում է իշխանություններից ամերիկացի հաճախորդների մասին տեղակատվության բացահայտում: Ճնշումների արդյունքում եկել են համաձայնություն, որը սպառնալիքի տակ է դնում բանկային գաղտնիքի գոյությունը և տնտեսության այդ կարևորագույն ոլորտի արդյունավետությունը:

Կանտոնների բանկերը հանդիսանում են կիսապետական /խառը/ կազմակերպություններ, որոնք իրականացնում են բանկային գործառնություններ և վերահսկվում Շվեյցարիայի որևէ կանտոնի /26 կանտոն/ իշխանությունների կողմից: Կանտոնների բանկերը հանդիսանում են աշխարհում ամենահուսալի բանկերը: Նրանք ի հայտ են եկել կանտոնների տնտեսության զարգացման անհրաժեշտության արդյունքում՝ պետական աջակցությամբ շահավետ վարկավորման միջոցով: Ներկայումս այդ բանկերի գործունեությունն իրականացվում է կանտոնների սահմաններում, բայց ազգային մակարդակով վերջիններս սերտ կապված են միմյանց հետ:

Տարածքային բանկեր և խնայողական դրամարկղեր - Վերջիններս իրենց գործունեությամբ նման են կանտոնների բանկերի գործունեությանը: Տարբերվում են ըստ կազմակերպական ձևի ու սահմանափակ աշխարհագրական գործունեությամբ:

Կոոպերատիվ ապահովագրման բանկեր – այս բանկերի հիմնական հաճախորդները միջին եկամուտով մասնավոր անձինք և փոքր ձեռնարկություններն են: Այս բանկերի գործունեության ոլորտը տոկոսադրույքների տարբերության վրա հիմնված գործառնություններն են:

Մասնավոր բանկերի գործունեության հիմնական ուղղություններից են ակտիվների կառավարումը, արժեթղթերով գործառնությունները:

Օտարերկրյա բանկերի մասնաձյուղերը հիմնականում իրականացնում են միջբանկային գործառնություններ այլ երկրների հետ:

Շվեյցարիայի ազգային բանկը, որը հիմնադրվել է 1907թ., երկրի կենտրոնական բանկն է: Շվեյցարիայի ԿԲ-ը հանդիսանում է հատուկ կարգավիճակով բաժնետիրական ընկերություն՝ համաձայն գործող “Շվեյցարիայի ԿԲ-ի մասին” դաշնային օրենքի (ի տարբերության այլ երկրների ԿԲ-երի, այն պետական բանկ չէ): Շվեյցարիայի ազգային բանկի բաժնետոմսերը գնանշվում են բորսայում (2/3-ի բաժնետերեր են կանտոնները, կանտոնների բանկերը, այլ պետական հաստատությունները, իսկ մնացած մասինը՝ մասնավոր անձինք): **Շվեյցարիայի ազգային բանկի հիմնական գործառնություններն են՝ գների կայունության ապահովումը (գնաճի մակարդակը առավելագույնը տարեկան 2%), կանխիկ փողի էմիսիան և դրամաշրջանառության կարգավորումը, դրամավարկային քաղաքականության իրականացումը, վճարահաշվարկային համակարգի կատարելագործումը, միջազգային պահուստների կառավարումը, ֆինանսական համակարգի կայունության ապահովումը, բանկերի ներգրավված ու տեղաբաշխված ռեսուրսների կառավարումը**, հանդիսանում է Կոնֆեդերացիայի բանկը: Ազգային բանկի հիմնական խնդիրը արժութադրամային քաղաքականության իրականացումն է՝ համաձայն երկրի շահերին:

Դրամավարկային քաղաքականության շրջանակներում իրականացվող գործառնություններն են՝ 3 տարվա կտրվածքով գնաճային կանխատեսումների կազմումը, տոկոսային միջակայքի սահմանումը, որը հանդիսանում է ֆրանկով արտահայտված 3 ամիս ժամկետով դեպոզիտների ԼԻԲՈՐ տոկոսադրույքը, ՌԵՊՈ գործառնությունները: **Բանկի հիմնական առանձնահատկությունն այն է, որ զարգացած երկրների կենտրոնական բանկերից միակն է, որն իրականացնում է ոսկով ապահովված դրամական էմիսիա /40%/:** Թեև ոսկով ապահովվածությունը մասնակի է, այնուամենայնիվ, հոգեբանորեն դրա նշանակությունը շատ կարևոր է ազգային արժույթի /շվեյցարական ֆրանկի/ կայունությունն ապահովելու գործում: Փողի էմիսիան իրականացնում է Շվեյցարիայի ԿԲ-ը, իսկ մանրադրամները հատվում են դրամահատման հաստատությունում:

Շվեյցարիայի ազգային բանկը կազմված է մարմիններից, որոնք իրականացնում են վերահսկողություն Շվեյցարիային ազգային բանկի գործունեության նկատմամբ: Վերջիններս են՝ Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկային խորհուրդը և Ռեկզիոն հանձնաժողովը: Տնօրինությունը հանդիսանում է Շվեյցարիայի ազգային բանկի բարձրագույն ղեկավարման գործադիր մարմինը: Շվեյցարիայի ազգային բանկն իր գործունեությունն իրականացնում է **Դաշնային բանկային հանձնաժողովի և Բանկիրների շվեյցարական ասոցիացիայի** հետ համատեղ: **Դաշնային բանկային հանձնաժողովը** հանդիսանում է վարչարար օղակ, որը անկախ է Դաշնային խորհրդից, Ազգային բանկից: Հանձնաժողովը վերահսկում է բանկերի կողմից “Բանկային գործունեության մասին” օրենքին համապատասխանությունը: Այն կոչված է պաշտպանելու բաժնետերերի շահերը: Նրա որոշումները ենթակա են պարտադիր կատարման: **Բանկիրների շվեյցարական ասոցիացիան** ինքնուրույն մարմին է, որը ներկայացնում է Շվեյցարիայի բանկերի շահերը օտարերկրյա կազմակերպություններում, Շվեյցարիայի ազգային բանկում և կառավարությունում:

Ֆինանսական շուկաների նկատմամբ վերահսկողություն իրականացնում է **Վերահսկողության շվեյցարական ծառայությունը**, որը պետական մարմին է և ստեղծվել է 2007թ.: Վերջինիս գործունեությունն ուղղված է վարկատուների և ներդրողների իրավունքների /շահերի/ պաշտպանությանը ու Շվեյցարիայի ֆինանսական շուկայի կայունության ապահովմանը: Այն ֆինանսավորվում է նրա վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունների կողմից և լիովին անկախ է. ծախսերը ծածկվում են վերահսկվող կազմակերպություններից հավաքագրված վճարների և տուրքերի հաշվին: Վերահսկողության մարմինը անուղղակիորեն նպաստում է շվեյցարական ֆինանսական շուկայի մրցունակության աճին:

1993թ-ից գործունեություն է ծավալում նաև **Շվեյցարիայի Բանկային հաշտարարի /օմբուդսմենի/ հիմնադրամը**, որը ստեղծվել է Բանկիրների շվեյցարական ասոցիացիայի կողմից: Շվեյցարիային ազգային բանկը հանդիսանում է արժույթային շուկայի առանցքային մասնակից, քանի որ նշանակալի դեր է խաղում արտարժույթի և քրոս-փոխարժեքների ազդեցության ոլորտում:

ԿԱՆԱԴԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Երկրի ԿԲ հանդիսանում է Կանադայի բանկը, որը հիմնադրվել էր որպես բաժնետիրական ընկերություն 1934թ. և սկսեց գործել 1935թ-ի մարտից: Երեք տարի հետո Կանադայի բանկն ազգայնացվել է: Կանադայի բանկի գործունեության նպատակները սահմանվում են նրա Կանոնադրությամբ՝ վարկային և դրամական հոսքերի կարգավորում, ազգային դրամական միավորի փոխարժեքի կայունության ապահովում, պետության տնտեսական և ֆինանսական բարեկեցության խթանում:

Կանադայի բանկը թողարկում և շրջանառության մեջ է դնում ազգային արժույթը, կառավարում առևտրային բանկերի դրամարկղային պահուստները, կարգավորում բանկերի միջև հաշվարկներն ըստ քլիրինգային հաշիվների, կարգավորում պետության պահուստները և այլն: Կանադային բանկը հանդիսանում է Դաշնային կառավարության գործակալը, կառավարում է պետության արժեթղթերը, նրա դրամարկղային միջոցները, սակայն չի գնում առևտրային բանկերի արժեթղթերը, չի վարկավորում և չի ընդունում ավանդներ ֆիզիկական ու իրավաբանական անձանցից:

Կանադային բանկը բանկային համակարգի կարևորագույն օղակն է հանդիսանում, իսկ մնացած օղակներն են առևտրային բանկերը կամ ինչպես կոչվում են *արտոնյալ բանկերը*: Նրանք մեծ ազդեցություն են ունենում երկրում մասնավոր ներդրումների և սպառողական ծախսերի վրա՝ վարկավորելով առևտրային, արդյունաբերական և այլ ձեռնարկությունները: Առևտրային բանկերը ձևավորվել են կենտրոնացման սկզբունքով, այսինքն՝ տեղի է ունեցել միաձուլում և կլանում, նրանց թիվը կրճատվել է, բայց ֆինանսական հզորությունն աճել: Կանադայի առևտրային բանկերը հանդիսանում են դեպոզիտային բանկեր, ընդունում են ցպահանջ ավանդներ, հաշվառում մուրհակներ, բացում խնայողական և ժամկետային հաշիվներ: Առևտրային բանկերի պասիվներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խնայողական հաշիվները, որոնք օգտագործվում են վարկային գործառնությունների իրականացման նպատակով: Բանկերն իրենց եկամտի մեծ մասը ապահովում են միջազգային գործառնությունների հաշվին:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ճապոնիայի բանկային համակարգն ունի որոշակի առանձնահատկություններ: Երկրի կյանքում մեծ ազդեցություն ունեն հեռավոր արևելքին ներհատուկ ավանդույթները, ազգաբնակչության կոլեկտիվ գործունեության և կոլեգիալ որոշումներ ընդունելու հակվածությունը: Ազգային առանձնահատկություններից է նաև միջոցները խնայելու ճապոնացիների համեմատաբար բարձր հակվածությունը: Ճապոնիան հանդիսանում է ոչ միայն արևելյան, այլև համաշխարհային ֆինանսական կենտրոն, հետևաբար նաև զարգացած ու հուսալի բանկային համակարգի առկայություն: Ֆինանսական կենտրոն լինելուց բացի, Ճապոնիան համաշխարհային առևտրի ֆինանսավորման գծով նույնպես առաջիններից է աշխարհում: 20-րդ երկրորդ կեսին Ճապոնիայի արդյունաբերական ընկերությունների խմբերում ձևավորվում էին *“ձայբացուները”*: *Չրանք արդյունաբերական ընկերությունների և նրանց սպասարկող (հիմնականում և նրանց պատկանող) բանկի համախումբ են, որի շնորհիվ արդյունաբերական կապիտալը և ազատ միջոցները, շրջանառվելով բանկերով, վարկերի ու ներդրումների ձևով ուղղվում են դեպի այդ նույն ընկերությունները*: Արդյունքում, մի կողմից զարգանում և մեծանում է բանկային համակարգը, մյուս կողմից՝ ընկերություններն ապահովվում են հիմնական ու շրջանառու միջոցները համալրելու համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրներով: Այս մոդելը կարող է վտանգվել ոչ արդյունավետ կառավարման պատճառով խոշոր բանկերի ֆինանսական վիճակի վատթարացմամբ:

Ճապոնիայի առանձնահատկություններից է նաև, որ մեծ է երկրի գործադիր իշխանության ազդեցությունը բանկային համակարգի վրա:

Առաջին բանկերը Ճապոնիայում ի հայտ են եկել 1868թ, որոնք հիմնականում փոխանակման մասնավոր գրասենյակներ էին, որոնք միավորում էին փոխանակումը բանկային գործի հետ: Եվ միայն

հեղափոխությունից հետո սկսեց ձևավորվել Ճապոնիայի կապիտալիստական վարկային համակարգը: Բանկային համակարգն ստեղծվել է ազգային բանկերի մասին օրենքների հիման վրա /1872 և 1897թթ/, համաձայն որի կազմակերպվել են առևտրային բանկերը: 1927թ բանկային ճգնաժամի հետևանքով տեղի ունեցան բանկերի սնանկացումներ և մեծ բանկերի կողմից կլանումներ: Արդյունքում բանկերի քանակը կրճատվեց կրկնակի: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին բանկերի քանակը կրճատվեց պետության կողմից կոշտ վերահսկողության հետևանքով: **Ճապոնիայում բանկերը** չեն ազգայնացվել, այլ 1950-ական թթ. ֆինանսավարկային ինստիտուտների հետ միասին ստեղծվել է պետական հաստատությունների ցանց:

Ճապոնիայի բանկային համակարգի կարևոր առանձնահատկություններից է բանկերի տեսակների հստակ տարանջատումը: **Ճապոնիայի բանկային համակարգը կազմված է մասնավոր, պետական և կոոպերատիվ ինստիտուտներից:** Վերջիններս, ըստ գործառնությունների կատարման բնույթի, բաժանվում են **Էմիսիոն (Ճապոնիայի Բանկ), առևտրային բանկերի և մասնագիտացված ֆինանսավարկային ինստիտուտների:**

Կառուցվածքային առումով Ճապոնիայի բանկային համակարգը (բացի Ճապոնիայի Բանկից) ընդգրկում է առաջատար դիրքեր զբաղեցնող **քաղաքային բանկերը** (խոշորագույն բանկերն են, որոնք տնօրինում են բանկային համակարգի ավանդների զգալի մասը, վարկավորում են արդյունաբերական կոնցեռներին, իրավունք ունեն ճապոնական բորսայում արժեթղթերով առևտուր իրականացնել), **տարածաշրջանային (պրեֆեկտուրաների) բանկերը** (դրանց գործունեությունը սահմանափակված է տարածքային հատկանիշով, հիմնականում զբաղվում են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմամբ, մասամբ ներգրավում են նաև խնայողական ավանդներ), **երկարաժամկետ վարկավորման բանկերը** (համագործակցում են խոշորագույն ձեռնարկությունների հետ, մասամբ դրանք հիփոթեքային բանկեր են), **հավատարմագրային բանկերը** (զբաղվում են միջոցների հավատարմագրային կառավարմամբ՝ ձեռնարկությունների գույքի կառավարում, ֆինանսական կառավարում, և երկարաժամկետ ներդրումների իրականացմամբ), **պետական հատուկ բանկերը, պետական ֆինանսական ընկերությունները** (պատասխանատու են պետական միջոցների նպատակային օգտագործման համար), **պետական փոստային-խնայողական դրամարկղները, մասնավոր վարկային ասոցիացիաները, վարկային կոոպերատիվները, ժամկետային խնայողական դրամարկղերը, ինչպես նաև օտարերկրյա բանկերը:** Բանկը պետք է կազմակերպվի որպես բաժնետիրական ընկերություն և ունենա նվազագույնը 1 մլրդ իեն կանոնադրական կապիտալ:

Ճապոնիայի Բանկը հիմնադրվել է 1882թ որպես բաժնետիրական ընկերություն և իրականացնում է Էմիսիոն բանկերին բնորոշ գործառնությունները: Բանկի հիմնական խնդիրը գնային կայունության ապահովումն է համապատասխան դրամավարկային քաղաքականության իրականացման միջոցով, ինչպես նաև կանխիկի թողարկումը: Ճապոնիայի դրամավարկային քաղաքականությունը մշակում և իրականացնում է **Ճապոնիայի Բանկը որպես անկախ հաստատություն՝** համապատասխան օրենսդրությանը: Այն հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալը, կառավարության անունից կառավարում է պետական ֆոնդերը, զբաղվում արժույթաֆինանսական գործունեությամբ, որն ուղղված է իենի փոխարժեքի կայունացմանը: Բանկը ֆինանսների նախարարի համաձայնությամբ կարող է իրականացնել արժույթի առքուվաճառք, տրամադրել վարկեր կամ իրականացնել այլ գործառնություններ օտարերկրյա ԿԲ-երի անունից և այլ կազմակերպությունների անունից: Ճապոնիայի Բանկը վերահսկում է բանկային ոլորտը և ապահովում է վճարահաշվարկային համակարգի գործունեության կայունությունը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը վարկերի քանակական չափորոշումն էր, որն էլ կապիտալի հոսքի կարգավորման դեպքում տոկոսադրույքի դեր էր կատարում: Կոշտ կարգավորվում էին բանկային վարկավորման շուկայում հիմնական տոկոսադրույքները: Վարկի քանակական չափորոշումը վարկերի չափերի վերահսկումն է, որը բանկը տրամադրում է այլ ֆինանսավարկային ինստիտուտներին, ինչպես նաև վարկային էքսպանսիայի կառավարումն է, այսինքն՝ բանկերի կողմից իրենց հաճախորդներին տրամադրվող իրացվելի ռեսուրսների նկատմամբ վարչարարական վերահսկումն է: Ճապոնիայի Բանկի դրամավարկային քաղաքականության հիմնական միջոցներն են հաշվարկային տոկոսադրույքի ճշգրտումը, պարտատոմսերի և մուրհակների առքուվաճառքի ծավալների կարգավորումը, պարտադիր պահուստավորման գումարը:

Թեև **Ճապոնիայի Բանկը** ինքնուրույն է վարում դրամավարկային քաղաքականությունը, սակայն այդ ծրագիրը մինչև ուժի մեջ մտնելը պետք է հավանության արժանանա ֆինանսների նախարարի կողմից:

Ճապոնիայի Բանկը դրամավարկային քաղաքականության ծրագրի իրականացման շրջանակներում կարգավորում է դրամաշրջանառությունը և սահմանում հաշվարկային տոկոսադրույքը: Մակայն բանկային համակարգի գործունեությունը կարգավորող հիմնական գործիքներից պարտադիր պահուստավորման նորմատիվի կառավարումը Ճապոնիայի Բանկն իրավասու չէ կատարել միանձնյա: Նորմատիվի ցանկացած փոփոխություն պետք է նախապես հավանության արժանանա երկրի ֆինանսների նախարարի կողմից: Արժեթղթերի բաց շուկա գործնականում գոյություն չունի: Պետությունը խիստ վերահսկում էր մասնավոր բանկերի գործունեությունը: Իրականացվում էր վերավարկավորում, եթե քաղաքային բանկերը տրամադրում էին փոխառություններ ոչ ֆինանսական հատվածին դեպոզիտային միջոցները գերազանցող ծավալով:

Քաղաքային բանկերը Ճապոնիայի խոշորագույն բանկերն են, հանդիսանում են արժույթային շուկայի մասնակիցներ: Նրանց վերահսկողության տակ է գտնվում այլ ֆինանսավարկային ինստիտուտների գործունեությունը: **Տարածաշրջանային բանկերը** մեծամասամբ փոքր և միջին մասշտաբի գործառնություններ իրականացնող բանկերն են: **Երկարաժամկետ վարկավորման մասնավոր բանկերի** համար վարկային ռեսուրսների հիմնական աղբյուրներն են պարտատոմսերով փոխառությունները: Բանկերը տեղաբաշխում են շուկայում տոկոսային պարտատոմսերը և զեղչատոկոսային պարտատոմսերը:

Պետական հատուկ ֆինանսավարկային ինստիտուտները կարևոր տեղ են զբաղեցնում երկրի վարկային համակարգում: Դրանք են՝ **խնայողական դրամարկղերը, Զարգացման Ճապոնիայի բանկերը, Արտահանման-ներմուծման բանկը և ֆինանսավարկային կորպորացիաները:** **Պետական ֆինանսավարկային ինստիտուտները** ֆինանսավորում են տնտեսության այն ոլորտները, որտեղ որոշակի պատճառներով չեն աշխատում առևտրային բանկերը: Վարկերը հիմնականում արտոնյալ են՝ ցածր տոկոսադրույքով: **Խնայողական դրամարկղերը** գործում են փոստային բաժանմունքներին կից, ուստի անվանվում են **փոստային-խնայողական:** Վերջիններս ներգրավված միջոցները տրամադրում են Ֆինանսների նախարարության հավատարմագրային ֆոնդերի բյուրոյին: Ֆինանսների նախարարության հավատարմագրային ֆոնդերի բյուրոյի ռեսուրսները կազմում են պետական խնայողական դրամարկղերում բնակչության ավանդները և պետական կենսաթոշակային ֆոնդերը ու օգտագործվում են որպես պետական ձեռնարկությունների և վարկային ինստիտուտների վարկավորման աղբյուր:

Զարգացման ճապոնական բանկն իրականացնում է արդյունաբերության երկարաժամկետ վարկավորում: **Արտահանման-ներմուծման բանկը** պատկանում է պետությանը: Բանկի գործունեությունը ղեկավարում է ֆինանսների նախարարությունը: Վարկերը տրամադրվում են 6 ամսից-5 տարի ժամկետով, առանձին դեպքերում 15-20 տարի: Բանկը վարկեր է տրամադրում արդյունաբերական սարքավորումների, սև և գունավոր մետաղների ու այլ ապրանքների արտահանման նպատակով, ճապոնական ապրանքների սպառողներին, ճապոնական ընկերություններին, կառավարությանը, այլ երկրների բանկերին, պատրաստի արտադրանքի ներմուծման ֆինանսավորման համար: **Ֆինանսավարկային կորպորացիաները** մասնագիտացված են տնտեսության առանձին ճյուղերի վարկավորման գծով (գյուղատնտեսություն, անտառատնտեսություն, բնակարանաշինարարություն և այլն), ինչպես նաև այն շրջանների, որոնք տնտեսապես զարգացած չեն: Այդ վարկերը տրամադրվում են արտոնյալ պայմաններով: 80-ական թթ. իրականացվել են վարչարարաֆինանսական բարեփոխումներ, որոնք նախատեսում էին պետության մասնակցության սահմանափակում հասարակական վերարտադրության գործընթացում, և աստիճանաբար տեղի ունեցավ այդ կորպորացիաների ապապետականացում: **Վարկային կոոպերատիվները** մասնագիտացված են նույն գործունեությամբ, ինչ ֆինանսավարկային կորպորացիաները: Կոոպերատիվներն ըստ անդամների կազմի լինում են գյուղատնտեսական և քաղաքային: **Գյուղատնտեսական կոոպերատիվի** անդամներն են գյուղացիները, իսկ **քաղաքային կոոպերատիվինը՝** փոքր և միջին արդյունաբերողների և առևտրային ձեռնարկությունների սեփականատերերը: Ազգային վարկային ինստիտուտների հետ համատեղ ճապոնիայում գործում են մեծ քանակությամբ **օտարերկրյա բանկեր**, որոնց գործունեության ոլորտը սահմանափակ է: **Ներդրումային ընկերությունները** իրականացնում են հավատարմագրային գործառնություններ: Նրանք վերահսկում են բրոքերային ընկերությունների կողմից արժեթղթերով գործառնությունների իրականացումը: **Լիզինգային ընկերությունները** ստեղծվել են 1963թ., որոնք առաջարկում են վարձակալության մեքենաներ, սարքավորումներ, համակարգիչներ:

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Չինաստանի ժամանակակից բանկային համակարգի հիմքերը դրվել են 1978թ-ին սկսած տնտեսական բարեփոխումների արդյունքում: Մինչ բարեփոխումները չինական բանկային համակարգն ամբողջովին պետական էր և մեկուսացված էր համաշխարհային գլոբալ համակարգից: Չինական բանկերի գործունեությունն ուղղված էր չինական կենտրոնացված պլանային տնտեսությունը սպասարկելուն: Չինական բանկային համակարգի բարեփոխումների հիմնական նպատակն էր ստեղծել խթաններ, որ բանկերը դառնան իրական առևտրային և կարողանան գործել շուկայական, միջակցային պայմաններում: Մակայն չինական բանկերին լիովին անկախություն տրված չէ: Նրանք պետք է ենթարկվեն իշխանությունների հրահանգներին, որոնք շատ հաճախ բացասական ազդեցություն են ունենում բանկերի ֆինանսատնտեսական գործունեության վրա:

Չինաստանում գործում են մի քանի տիպի բանկեր, որոնք տարբերվում են ըստ սեփականության ձևի և կառուցվածքի ու շուկայում սեզմենտավորվածության: Մակայն կարգավորման տեսանկյունից **չինական բանկերն ունիվերսալ բանկեր են:**

Բանկերի առաջին գլխավոր խումբը լիովին պետական սեփականություն հանդիսացող բանկերն են: 2005թ-ից սկսած պետական բանկերի «կապիտալացման» արդյունքում պետական բանկերը վերածվում էին բաժնետիրական ընկերությունների (միայն Չինաստանի գյուղատնտեսության զարգացման բանկը, Չինաստանի զարգացման բանկը և Չինաստանի արտահանման և ներմուծման բանկը մնացին ամբողջովին պետական սեփականություն հանդիսացող բանկեր): Այս բանկերից յուրաքանչյուրն իրականացնում է պետական ծրագրերի սպասարկում:

Երկրորդ խումբ բանկերն են «կապիտալացված» առևտրային բանկերը, որոնք վերափոխվել են բաժնետիրական ընկերությունների, սակայն պետությունը դեռևս գլխավոր բաժնետերերից է: Վերջիններիս բաժնետոմսերի գերակշիռ մասը պատկանում է Չինաստանի Ժողովրդական բանկին (Կենտրոնական բանկ) և ֆինանսների նախարարությանը: Եթե նախկինում այն բանկերն իրականացնում էին իշխանությունների ծրագրերի սպասարկումը, ապա «կապիտալացվելուց» հետո էականորեն դիվերսիֆիկացրել են իրենց գործունեությունը, և գործունեություն են ծավալում Չինաստանի սահմաններից դուրս: Այս բանկերը Չինաստանի ամենազարգացող բանկերն են, քանի որ ընդլայնում են իրենց ծառայությունների ցանկը:

Երրորդ խումբն են կազմում տեղական բանկերը, որոնց բաժնետերերն են տեղական ու մունիցիպալ իշխանությունները: Այս խմբի բանկերի գործունեությունն ուղղված է տեղական ծրագրերի ու նախագծերի իրականացմանը: «Կապիտալացման» գործընթացի արդյունքում տեղական իշխանություններն այս բանկերի հիմնական բաժնետերերն են:

Չորրորդ խումբն ամբողջովին առևտրային բանկերն են, որոնք ստեղծվել են իրականացված բանկային բարեփոխումների ընթացքում: Դրանց բաժնետերերի հիմնական մասը մասնավոր սեփականատերեր են, ըստ որի այդ **բանկերը կոչվում են մասնավոր բանկեր:**

Կարգավորման դաշտի տեսանկյունից նույնպես բարեփոխումներն արմատապես փոխել են չինական բանկային համակարգը: Կարգավորող մարմինները չորսն են: Կենտրոնական բանկի գործառույթները կատարում է Չինաստանի Ժողովրդական բանկը, որը դրամավարկային քաղաքականության պատասխանատուն է: Իսկ բանկերի գործունեության վերահսկողությունը իրականացնում է բանկային համակարգի կարգավորման հանձնաժողովը: Ֆինանսական համակարգի գործունեության կարգավորման մյուս կարևոր մարմինն է Արտարժույթի փոխարկման պետական ծառայությունը, որը պատասխանատու է արտարժույթային գործարքների վերահսկման, ինչպես նաև արտարժույթային պահուստների կառավարման համար:

Օտարերկրյա բանկերի գործունեության կարգավորման տեսանկյունից չինական համակարգը էական փոփոխվել է: 2001թ.-ին Չինաստանն, անդամագրվելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), պարտավորվեց ֆինանսական համակարգը դարձնել ավելի բաց, որով և հնարավորություն ընձեռվեց օտարերկրյա բանկերին մուտք գործել իր շուկա: Ընդհանուր առմամբ օտարերկրյա բանկերի կարգավորումն իրականացվում է ազգային բանկերի կարգավորման սկզբունքով: Մակայն կան դեռևս որոշակի սահմանափակումներ ինչպես գործառույթների շրջանակի, այնպես էլ կարգավորման նորմատիվների տարբերակման տեսանկյունից:

Չինաստանի արտաքին տնտեսական կապերը շարունակաբար ընդլայնվում են, որը երթադրում է, որ այս երկրի բանկային համակարգը պետք է ավելի ինտեգրվի զարգացած երկրների բանկային համակարգերին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Ի տարբերություն այլ տարածաշրջանների ու երկրների՝ Եվրոպան բանկային համակարգի գործունեության և դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից ունի կարևոր առանձնահատկություններ: Այստեղ բանկային գործունեության կարգավորումն գտնվում է տվյալ երկրի իշխանությունների իրավասության ներքո՝ եվրոպական ընդհանուր տնտեսական համագործակցության շրջանակներում, մինչդեռ դրամավարկային քաղաքականությունը կենտրոնացված է և իրականացվում է **Եվրոպական կենտրոնական բանկի /Եվրաբանկի/** իրավասության շրջանակներում:

1988թ. հունիսին Եվրոպայի Խորհրդի կողմից հռչակվեց տնտեսական միություն ստեղծելու ծրագիրը: 1990թ. հուլիսի 1-ին կայացավ տնտեսական և դրամական միավորման գործընթացի առաջին քայլը՝ անդամ երկրների միջև վերացվեցին կապիտալի շարժի արգելքները: 1994թ. հունվարի 1-ից սկսեց օրծել Եվրոպական դրամավարկային ինստիտուտը, որի հիմնական երկու խնդիրներն էին անդամ երկրների կենտրոնական բանկերի միջև համագործակցության ուժեղացումն ու ընդհանուր դրամավարկային քաղաքականության կոորդինացումը, հետագայում՝ միասնական կենտրոնական բանկի ստեղծումը:

1995թ. դեկտեմբերին սահմանվեց Եվրոպական միասնական արժույթը՝ եվրոն և հայտարարվեց կիրառման ժամկետը՝ 1999թ. հունվարի 1-ը: Այնուհետև 1996թ. հաստատվեց եվրո դրամանիշերի տեսքը և որոշվեց նրանց կանխիկ շրջանառությունը սկսել 2002թ. հունվարի 1-ից: Եվրոպական երկրների կառավարությունների ղեկավարների կողմից ընդունված որոշման համաձայն նոր ստեղծվող և կարգավիճակով անկախ Եվրոպական կենտրոնական բանկի վրա է դրվում միասնական արժույթին քաղաքականության իրականացումը և կարգավորումը:

Եվրոպական կենտրոնական բանկը Եվրամիության և եվրագոտու կենտրոնական բանկն է: **Եվրոպական կենտրոնական բանկը /Եվրաբանկը/** հիմնադրվել է 1998թ. հունիսի 1-ին՝ «Եվրոպական միության մասին» համաձայնագրով: Այն իրավասությեկտությամբ օժտված վերալետական կառույց է: **Նրա կազմի մեջ մտնում են Եվրամիության բոլոր անդամ-երկրների ներկայացուցիչները:** ԵԿԲ-ն գործում է լիովին անկախ (անկախ է ԵՄ մնացած մարմիններից): Ոչ ԵԿԲ, ոչ Եվրահամակարգի ազգային կենտրոնական բանկերը, ոչ էլ այդ հաստատությունների որոշում կայացնող մարմինների որևէ անդամ չեն կարող խնդրել կամ ցուցումներ ստանալ որևէ այլ մարմնից: ԵՄ հաստատությունները և անդամ-պետությունների կառավարությունները պարտավոր են հարգել այս սկզբունքը և չփորձել ազդել ԵԿԲ-ի կամ ազգային կենտրոնական բանկերի վրա:

ԵԿԲ հիմնական խնդիրը եվրոյի գնողունակության ապահովումն է և եվրագոտում գնային կայունության ապահովումը: Միասնական բանկի աշխատանքն ուղղված է միասնական եվրո արժույթի հանդեպ բարձր վստահության ապահովմանը: Իր խնդիրներն իրականացնելու նպատակով Եվրաբանկը սերտորեն համագործակցում այդ երկրների ազգային կենտրոնական բանկերի հետ (հիմնականում բանկային գործունեության կարգավորման հարցերի շուրջ) և նպաստում է այդ երկրների բանկային համակարգերի զարգացմանն ու գործունեության արդյունավետության բարձրացմանը: ԵԿԲ կոչված է կառավարելու եվրոն՝ ԵՄ միասնական արժույթը և պահպանելու գների կայունությունը, պատասխանատու է ԵՄ-ի տնտեսական ու արժույթային քաղաքականության մշակման և կենսագործման համար: Իր դերը կատարելու համար ԵԿԲ համագործակցում է Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգի հետ /ԿԲԵՀ/, որն ընդգրկում է ԵՄ 27 պետությունները: Մակայն մինչ օրս այդ երկրներից միայն 19-ն են ընդունել եվրոն: Այդ 19 երկրները (ներկայումս եվրո արժույթը որպես շրջանառության միջոց օգտագործող Եվրոպայի երկրները) միասին կազմում են «եվրոյի գոտին», իսկ դրանց կենտրոնական բանկերը, Եվրոպական կենտրոնական բանկի հետ մեկտեղ կազմում են «Եվրահամակարգը»:

Եվրահամակարգը ներառում է Եվրոպայի կենտրոնական բանկը և այն երկրների կենտրոնական բանկերը, որոնք եվրագոտու կազմի մեջ են: Եվրահամակարգը և Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգը կգոյակցեն, քանի դեռ գոյություն ունեն եվրագոտուց դուրս ԵՄ անդամ-երկրներ:

Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգը ֆինանսական կարգավորման վերազգային մարմին է, որը միավորում է Եվրոպական կենտրոնական բանկը և Եվրամիության անդամ-երկրների

ազգային կենտրոնական բանկերը /27 երկիր/: Կենտրոնական բանկերի եվրոպական համակարգը ստեղծվել է գնային կայունության ապահովման համար, ինչպես նաև բնակչության զբաղվածության բարձր մակարդակի ու կայուն ոչ ինֆլյացիոն տնտեսական աճի ապահովման նպատակով:

Սերտորեն փոխգործակցելով ազգային կենտրոնական բանկերի հետ՝ ԵԿԲ նախապատրաստում և կյանքի է կոչում Եվրահամակարգի՝ որոշում կայացնող մարմինների՝ Կառավարիչների խորհրդի, Գործադիր խորհրդի և Գլխավոր խորհրդի կողմից կայացվող որոշումները:

ԵԿԲ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է: Ընտրելով դրամավարկային քաղաքականության կոնկրետ ռազմավարություն՝ ԵԿԲ սահմանում է գնային կայունությունը (սպառողական գների ինդեքսը եվրագոտում կազմում է 2 տոկոսից ցածր):

Եվրագոտին արժույթային միություն է, որը միավորում է ԵՄ 19 երկիր և որոնց պաշտոնական արժույթը եվրոն է: Այս երկրներն իրավունք ունեն թողարկել «եվրո» դրամանիշեր: ԵԿԲ պատասխանատու է Եվրագոտու դրամավարկային քաղաքականության համար:

Եվրաբանկի հիմնական գործառույթներն են՝ եվրագոտու արժույթային քաղաքականության մշակումը և իրականացումը, եվրագոտու երկրների պաշտոնական փոխանակման պահուստների կառավարումը, եվրո դրամանիշերի էմիսիան, հիմնական տոկոսադրույքների սահմանումը, եվրագոտում գնային կայունության ապահովումը (2 տոկոսից ոչ բարձր գնաճի մակարդակի ապահովում միջնաժամկետ հեռանկարում), պաշտոնական արժույթային և ոսկու պահուստների կառավարում, արտարժույթային փոխանակման գործառնությունների իրականացում, վճարահաշվարկային համակարգերի նորմալ գործունեության ապահովում:

Բոլոր հիմնական հարցերը, որոնք վերաբերում են Եվրոպական բանկի գործունեությանը, լուծվում են *ԵԿԲ Կառավարիչների խորհրդի և Գործադիր խորհրդի կողմից: Երրորդ ղեկավար մարմինը Գլխավոր խորհուրդն է: Կառավարիչների խորհուրդը* հանդիսանում է ԵԿԲ որոշումներ ընդունող գլխավոր մարմինը: Կառավարիչների խորհուրդը բաղկացած է Գործադիր խորհրդի 6 անդամներից և Եվրագոտու 19 երկրների ազգային կենտրոնական բանկերի կառավարիչներից: Չայնի իրավունք ունեն միայն Կառավարիչների խորհրդի անդամները: Որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների դեպքում մեծ կշիռ ունի Նախագահի քվեն: Կապիտալին, շահույթի բաշխմանը վերաբերող հարցերը որոշվում են քվերակությամբ, իսկ ձայների կշիռը համամասնական է ԵԿԲ կանոնադրական կապիտալում ազգային բանկերի բաժինների: Կառավարիչների խորհրդի պարտականությունների մեջ են մտնում դիրեկտիվ որոշումների ընդունումը, Եվրագոտում դրամավարկային քաղաքականության մշակումը:

Գործադիր խորհուրդը բաղկացած է 6 անդամից (այդ թվում՝ ԵԿԲ նախագահը, փոխնախագահը): Թեկնածուներն առաջադրվում են Կառավարիչների խորհրդի, հավանության արժանանում՝ Եվրախորհրդարանի և եվրագոտու մեջ մտնող երկրների ղեկավարների կողմից: Գործադիր խորհրդի գործառույթներն են՝ Կառավարիչների խորհրդի նիստի կազմակերպումը, դրամավարկային քաղաքականության իրականացումը, ԵԿԲ ընթացիկ հարցերի կարգավորում և այլն: *Գլխավոր խորհուրդը* կազմված է ԵԿԲ նախագահից և փոխնախագահից, ինչպես նաև ԵՄ անդամ-երկրների ազգային կենտրոնական բանկերի կառավարիչներից: Գլխավոր խորհուրդը կգործի, քանի որ ԵՄ անդամ-երկրներից ոչ բոլորն են կիրառում եվրոն որպես սեփական արժույթ: Գլխավոր խորհրդի գործառույթներն են՝ դրամավարկային քաղաքականության կոորդինացումը (եվրո չկիրառող երկրների), վիճակագրական տեղեկատվության հավաքագրումը, հաշվետվության տրամադրումը և այլն:

ԵԿԲ գործունեության ոլորտներն են՝ ֆինանսական ինստիտուտներին վարկերի տրամադրումը (այդ թվում՝ լոմբարդային), տարբեր ֆինանսական գործիքներով գործառնությունները բաց շուկայում, նվազագույն պահուստային պահանջների սահմանում վարկային ինստիտուտների համար: Տոկոսադրույքների կառավարման, իրացվելիության ապահովման և դրամակավարկային քաղաքականության ուղղության վերաբերյալ տեղեկացման նպատակով ԵԿԲ բաց շուկայում կիրառում է հետևյալ գործառնությունները.

- ❖ *վերաֆինանսավորման հիմնական գործառնություններ* – իրացվելիության ստեղծման ռեպո գործարքներ (նպատակը ֆինանսական հատվածի համար վերաֆինանսավորման հիմնական ծավալի ապահովումն է, իրականացվում է յուրաքանչյուր շաբաթ, մարման ժամկետը՝ 2 շաբաթ),

- ❖ *վերաֆինանսավորման երկարաժամկետ գործառնություններ* – իրացվելիության ապահովման ռեպո գործարքներ (նպատակը լրացուցիչ և երկարաժամկետ միջոցներով ապահովումն է, իրականացվում է ամիսը մեկ անգամ, մարման ժամկետը՝ 3 ամիս),
- ❖ *ճշգրտող գործառնություններ* – իրականացվում են անհրաժեշտության դեպքում՝ իրացվելիության անսպասելի տատանումները մեղմելու նպատակով,
- ❖ *կառուցվածքային գործառնություններ* – պարտքային սերտիֆիկատների, թողարկում, ռեպո և ֆորվարդային գործարքներ (նպատակը ԵՄ ֆինանսական հատվածի կառուցվածքային դիրքորոշման կարգավորումն է):

ԵԿԲ-ի անկախությունը նպաստում է գների կայունության ապահովմանը: ԵԿԲ ունի իր սեփական բյուջեն: ԵԿԲ իրավունք ունի ինքնուրույն որոշել իր գործիքակազմը և նրանց կիրառման ժամկետը՝ արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացման համար: ԵԿԲ հրապարակայնորեն հայտարարում է դրամավարկային քաղաքականության իր ռազմավարության մասին, որը քաղաքականությունը դարձնում է կանխատեսելի միջնաժամկետ հատվածում:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Եվրոպական բանկային համակարգում իր ուրույն տեղն ունի **Ֆրանսիայի բանկային համակարգը**: Ֆրանսիայի բանկային համակարգի առանձնահատկություններից են խոշոր բանկերի ազգայնացումը և ապապետականացումը, ինչպես նաև սեփականության ձևերի ու սեփականատերերի բազմազանությունը: Մասնավորապես 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո կտրուկ զարգացան պետական և խառը /կիսապետական/ վարկային կազմակերպությունները: 1945-1985թթ. Ֆրանսիայի բանկային համակարգը զարգացել է հետևյալ ուղղություններով՝

1. Մասնավոր բանկերի ազգայնացում և մասնագիտացված պետական կազմակերպությունների ստեղծում: 2-րդ Համաշխարհային պատերազմի տարիներին պետությանը պատկանում էին Խնայողական և ավանդախնայողական դրամարկղերը: 1945թ. ազգայնացվեցին Ֆրանսիայի բանկը և 4 ավանդային բանկ: 1982թ. դրությամբ ազգայնացվել է 36 բանկ:
2. Խառը բնույթի /կիսապետական/ վարկային կազմակերպությունների ստեղծում, երբ կապիտալի ձևավորմանը մասնակցում են պետությունը և մասնավոր հատվածը /այլ բաժնետերեր/:
3. Բանկային գործի պետական կարգավորումը իրականացվում էր ՖԲ-ի և մասնագիտացված պետական մարմինների կողմից, որոնցից են Ազգային վարկային խորհուրդը /ստեղծվել է միաժամանակ 1945թ. Բանկերի ազգայնացման մասին օրենքի ընդունմամբ/ և Բանկային վերահսկողության կոմիտեն /ստեղծվել է 1941թ./: Ազգային վարկային խորհրդի միջոցով պետությունն իրականացնում է վարկային քաղաքականություն: Վերջինս նաև սահմանում էր ԱԲ-երի ՊՊ նորմատիվը, իրացվելիության գործակիցը, տոկոսադրույքը և այլն:

Ֆրանսիայի բանկային համակարգը երկաստիճան է և բացի Ֆրանսիայի բանկից ներառում է առևտրային բանկերն ու մասնագիտացված ֆինանսավարկային կազմակերպությունները /հիփոթեքային, արտաքին առևտրի բանկերը, գործարար /ներդրումային/ և խնայողական բանկերը, ապահովագրական և ֆինանսական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները և այլն/:

Ֆրանսիայի բանկը /կենտրոնական բանկը/ հիմնադրվել է 1800թ. երկրի առաջին կոնսուլ Նապոլեոն Բոնապարտի հրամանագրով՝ որպես մասնավոր բաժնետիրական ընկերություն: Մինչև 19-րդ դ-ի կեսերը այն միակ բաժնետիրական ընկերությունն էր երկրում: 145 տարվա ընթացքում ՖԲ-ը գործում էր որպես մասնավոր բաժնետիրական բանկ, սակայն փաստացի կապված էր պետության հետ: Մինչ 1936թ. Ֆրանսիայում տեղի ունեցած բազմաթիվ քաղաքական ցնցումները շրջադարձային փոփոխության էին ենթարկում երկրի կենտրոնական բանկը և բանկային համակարգը: 1945թ. դեկտեմբերին ընդունված օրենքով ՖԲ-ը ազգայնացվեց: Նրա բաժնետիրական կապիտալը /250մլն ֆրանկ/ հետ է գնվել /հատուցվել է/ 20 տարվա ընթացքում պարտատոմսերի փոխանակման ճանապարհով /բարձր՝ 3 տոկոս փոխարժեքով/: Իրականացված բանկային համակարգի բարեփոխման արդյունքում Ֆրանսիայի բանկն անցավ երկրի կառավարության ենթակայության տակ: Նախագահը նշանակում էր ՖԲ-ի կառավարչին և նրա 2 տեղակալներին, իսկ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը՝ Գլխավոր խորհրդի 9 անդամներին: 20-րդ դ-ի կեսերին ՖԲ-ը վերջնականապես վերափոխվեց ԿԲ-ի: 1967թ., երբ Ֆրանսիայում ներդրվեց պարտադիր

պահուստավորման համակարգը, մնացած այլ վարկային կազմակերպությունները ԿԲ-ում պահում էին իրենց կապիտալի մի մասը՝ սահմանված նորմատիվների համաձայն: ՖԲ-ում պահվում էին նաև պաշտոնական ոսկեարժույթային պահուստները: Բանկն ունի մասնաճյուղերի լայն ցանց ողջ երկրում /մոտ 234 մասնաճյուղ/, որի շնորհիվ երկրում իրականացվում է վճարահաշվարկային հարաբերությունների արդյունավետ կարգավորումը: Բանկի հիմնական խնդիրը երկրում **դրամավարկային քաղաքականության մշակումն ու իրականացումն է՝ ուղղված գների կայունության ապահովմանը:** ՖԲ-ի կողմից պետությանը ուղղակի վարկավորման ծավալը որոշվում է Բանկի կառավարչի և ՖԷ նախարարի միջև պայմանավորվածությամբ: Դրամավարկային քաղաքականության տարբեր գործիքների միջոցով ԿԲ-ը կարգավորում է տնտեսությունը: Այն նաև հանդիսանում է անկանխիկ հաշվարկների կենտրոն: Վերջինս այլ մարմինների հետ իրականացնում է երկրի դրամավարկային համակարգի վերահսկողությունը: 1945թ. որպես ԿԲ իրականացնում էր առևտրային բանկի գործառույթներ. սպասարկում էր առևտրաարդյունաբերական հաճախորդներին, վարկավորում էր էմիսիայի միջոցով: 2-րդ Համաշխարհային պատերազմից հետո գործառնությունների ծավալը կրճատվեց, մեծացավ վարկային կարգավորման դերը՝ իրականացնելով բաց շուկայական գործառնություններ՝ կարգավորելով հաշվարկային տոկոսադրույքի միջոցով: ՖԲ-ը հանդիսանում է կառավարության բանկը, սպասարկում է պետական գանձապետարանի ընթացիկ հաշիվը, իրականացնում է պետական պարտքի սպասարկում, վարկեր տրամադրում կառավարությանը: Մինչև 1992թ. ՖԲ-ը ենթարկվում էր ՖԷ նախարարությանը: 1993թ. "ՖԲ-ի կանոնադրության մասին" օրենքով ԿԲ-ը ստացավ լիիրավ անկախություն, մասնավորապես դրամավարկային քաղաքականության իրականացման դեպքում՝ գների կայունության ապահովման համար: Հիմնական գործիքներից է տոկոսային քաղաքականությունը՝ պահպանելով վարկերի տոկոսադրույքների որոշակի մակարդակը: Սակայն Եվրոպական կենտրոնական բանկի ստեղծումից հետո Ֆրանսիայի բանկի դերը զգալիորեն նվազել է և այն ավելի շատ օժանդակում է Եվրաբանկի գործունեությանը: Ֆրանսիայի բանկը մեծ դեր է կատարում բանկային տեղեկատվական համակարգի աշխատանքում՝ ապահովելով տնտեսության բնականոն գործունեությունը:

Ֆրանսիայի բանկային համակարգի մյուս օղակները: Առանձնացնում են **3 տիպի բանկեր**՝ կախված ավանդավարկային գործառնությունների ժամկետից և կապիտալի մասնակցության աստիճանից: Ազգայնացված **ավանդային բանկերը** կարևոր օղակ են Ֆրանսիայի բանկային համակարգում և նրանց շահերը խաչվում են մասնավոր կապիտալի հետ: Այդ բանկերն օգտվում էին պետական երաշխիքից: 1966թ. մի շարք բանկային տներ դասվեցի ավանդային բանկերի խմբին և մասնագիտացված էին շինարարական և սպառողական վարկերի գծով: Առևտրային բանկերի խմբին են դասվում նաև **հաշվարկային տները**, որոնք մասնագիտացված են կարճաժամկետ ավանդավարկային և արժույթային գործառնությունների գծով: **Գործարար /ներդրումային/ բանկերը** մասնագիտացված են կապիտալի մասնակցության և ձեռնարկությունների կառավարման գծով, զբաղվում էին հիմնականում երկարաժամկետ վարկավորմամբ ու ֆինանսավորմամբ: Մինչև 1945թ. բոլոր ԱԲ-երը կարող էին իրականացնել փոխատվական և ներդրումային գործառնություններ: 1946թ. մայիսից օրենքով սահմանվեցին ակտիվային և պասիվային գործառնությունների սահմանները ավանդային ու գործարար բանկերի համար: Ավանդային բանկերն իրավունք ունենին ներգրավել ցպահանջ ավանդներ անսահմանափակ ծավալով, իսկ ժամկետային ավանդները՝ առավելագույնը 2 տարվա կտրվածքով: Գործարար բանկերը կարող էին ներգրավել երկարաժամկետ ավանդներ՝ 2 տարուց ավելի ժամկետով: Ավանդային բանկերն իրավունք չունեին ավանդներն օգտագործել առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների կապիտալում /միայն սեփական կապիտալի հաշվին/: 1966-67թթ. բանկային բարեփոխումների արդյունքում այդ սահմանափակումները կրճատվեցին: Արդյունքում, դեպոզիտային բանկերը կարող էին ներգրավել 2 տարուց ավելի ժամկետով ավանդներ, իսկ վարկերի առավելագույն ժամկետը սահմանվեց 7 տարի: 1984թ. բանկերը բաժանվեցին դեպոզիտային, գործարար /ներդրումային/ և միջնաժամկետ ու երկարաժամկետ վարկավորման բանկերի՝ ունիվերսալ բանկ կարգավիճակով /ավանդային, վարկային և հավատարմագրային գործառնությունների իրականացում/: Օտարերկրյա բանկերի քանակը 70-ական թթ. համեմատաբար քիչ էր, հիմնականում ամերիկյան և անգլիական բանկերն էին: 1990-ական թթ. արդեն գործում էր 40 երկրի բանկի մասնաճյուղ: Օտարերկրյա բանկերի գործունեության հիմնական հատվածը արտաքին առևտրի ֆինանսական սպասարկումն է, նաև վարկային գործառնությունները:

Ֆրանսիայում զարգացած է նաև վարկային կոոպերատիվ հաստատությունների համակարգը: Վարկային կոոպերատիվները, որոնք միավորում են մանր արդյունաբերողներին և առևտրականներին,

անվանում են ազգային բանկեր: Վերջիններս տրամադրում են դրամարկղային /կարճաժամկետ/ վարկեր, մուրհակների հաշվառմամբ վարկեր, երկարաժամկետ վարկեր և այլն: Ֆինանսական այլ ընկերություններ իրավունք չունեն և չեն կարող ներգրավել ցպահանջ և ժամկետային ավանդներ բնակչությունից: Նրանք տրամադրում են սպառողական, լիզինգային, անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Եվրոպական բանկային համակարգում իր կարևոր տեղն ունի **Գերմանիայի Դաշնային Հանրապետության բանկային համակարգը**: Այն ունի հարուստ ավանդույթներ, բնակչության կողմից նպաստող մտածելակերպ և կրթական մակարդակ, բարձր հեղինակություն ունեցող կենտրոնական բանկ /Բունդեսբանկ/ ու բանկային հասանելի և արդյունավետ մոդել, որը ծառայություններ է մատուցում երկրի ողջ տարածքում, և առանձնանում է բանկերի միջև խիստ մրցակցության առկայությամբ: Բանկերի բարձր հեղինակությունը հիմնականում պայմանավորված են բանկային համակարգի և տնտեսության իրական հատվածի միջև սերտ կապով, ինչպես նաև վերահսկողության արդյունավետությամբ և աշխատակիցների բարձր որակավորմամբ:

Գերմանիայի ԿԲ-ը հիմնադրվել է 1765թ. որպես "Թագավորական", 1846թ.-ից՝ "Պրուսական", 1871-ից՝ "Կայսերական" բանկ: "Կայսերական բանկը" բաժնետիրական ընկերություն էր՝ 180 մլն մարկ կապիտալով: Բաժնետերերը շահույթից ստանում էին 3,5 տոկոսը: ԿԲ-ի կառավարումը մինչև 1924թ. իրականացվել է ռեյխսկանցլերի, բանկի նախագահի և կառավարության կողմից: 1924թ. բանկն անկախացավ կառավարությունից: 1948թ. հիմնվեց գերմանական տարածքների /հողերի, դաշնությունների/ պետական բանկը, որը գործունեություն էր ծավալում միայն տարածքների /հողերի/ ԿԲ-երի, կառավարության և օտարերկրյա ԿԲ-երի հետ: 1957թ. ԿԲ-երը, օրենքով սահմանված կարգով, միավորվեցին, որի արդյունքում ձևավորվեց **Գերմանիայի Դաշնային բանկը /Բունդեսբանկը/**: Յուրաքանչյուր տարածք /հող/ ունի գլխավոր կառավարման օղակ՝ տարածքի ԿԲ: Բունդեսբանկը հանդիսանում է պետական իրավաբանական անձ, որն անուղղակիորեն կախված է Դաշնությունից: Այնուամենայնիվ Բունդեսբանկը չի պատկանում Դաշնության իշխանության մարմիններին, չի ենթարկվում ոչ կառավարությանը, ոչ պառլամենտին, այլ միայն Բունդեսբանկի մասին օրենքին: Այսինքն՝ Գերմանիայի Բունդեսբանկին օրենսդրությամբ տրված է անկախություն երկրի քաղաքական իշխանություններից: Բունդեսբանկի և կառավարության իրավասությունները հստակ սահմանազատված են. Բունդեսբանկը պատասխանատու է դրամավարկային քաղաքականության, իսկ կառավարությունը՝ ֆիսկալ քաղաքականության համար: Բունդեսբանկի տարեկան հաշվետվությունը հրապարակվում է ի գիտություն: Նրա կառավարմանը մասնակցում է տարածքային /հողատարածքային/ բանկ, որի ներկայացուցիչները մենաշնորհ կերպով վերահսկում են Բունդեսբանկի գործառնությունները:

Բունդեսբանկն ունի կառավարման երկմակարդակ համակարգ: Նրա կառավարման մարմիններն են՝ ԿԲ-երի խորհուրդը և Տնօրենների խորհուրդը: ԿԲ-երի խորհուրդը բարձրագույն ղեկավար մարմինն է, որը որոշում է արժույթավարկային քաղաքականությունը, գործառնությունների և բանկի խորհրդի գործունեության ընդհանուր ուղղությունները: Խորհրդի կազմում ընդգրկված են տարածքի բանկերի գործադիր մարմինը և նախագահները: Տնօրենների խորհուրդը պատասխանատու է դրամավարկային քաղաքականության իրականացման համար համապատասխան դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով, բանկի գործունեության կառավարման կազմակերպման, այլ իրավասությունների համար, որոնք բխում են բանկի գործառնություններից: Տնօրենների խորհրդի անդամներն են՝ նախագահը, փոխնախագահը և կառավարման 8 անդամները, որոնց նշանակում է ԳԴՀ-ի նախագահը կառավարության ներկայացմամբ 8 տարի ժամկետով: ԿԲ-ի գերմանական մոդելը հանդիսանում է բազային Կենտրոնական Եվրոպայի այլ երկրներում:

Բունդեսբանկի հիմնական գործառնություններն էին՝ փողի էմիսիան, ոսկով և արտարժույթով գործառնությունները, բյուջեի դրամարկղային սպասարկումը, պետությանը և միջազգային կազմակերպություններին վարկավորումը, հաշվառման քաղաքականությունը, բանկային պահուստների ու դրամական զանգվածի կարգավորումը և այլն: Չնայած Բունդեսբանկն իրավունք ունի Գերմանիայի կառավարությանը կարճաժամկետ վարկեր տրամադրել, այնուամենայնիվ, այն համարվում է աշխարհի կենտրոնական բանկերից ամենաանկախը: Օրենսդրությամբ Բունդեսբանկն իր կարգավիճակով

հավասարեցված է երկրի բարձրագույն դաշնային իշխանություններին /մասնավորապես Ֆինանսների նախարարությանը/: Գերմանիայում բանկերի վերահսկողական գործառնությունները տրված են 1934թ. հիմնադրված և Ֆինանսների նախարարությանը ենթակա Վարկային վերահսկողության դաշնային ծառայությանը: Այս տարանջատման նպատակը առևտրային բանկային գործունեությանը կենտրոնական բանկի միջամտության բացառումն է: Բացի բանկերի մի շարք նորմատիվներ սահմանելուց, այդ ծառայությունը նաև իրականացնում է բանկերի լիցենզավորումը և ընթացիկ վերահսկողությունը: Մինչև 1999թ. Բունդեսբանկն ուներ բանկային համակարգի վրա ազդելու մեկ հիմնական գործիք՝ պահուստավորման նվազագույն նորմատիվ: Ինչպես եվրո արժույթի գոտու մյուս երկրների կենտրոնական բանկերը, այնպես էլ Գերմանիայի Բունդեսբանկը 1999թ. հունվարի 1-ից Եվրոպական կենտրոնական բանկին է հանձնել երկրում դրամավարկային քաղաքականության իրականացման իրավասությունը, այդ թվում՝ բաց շուկայական գործիքների և պարտադիր պահուստավորման նորմատիվի կիրառումը: Սակայն Բունդեսբանկը շարունակում է կատարել կարևոր խորհրդատվական գործառնություններ. կարգավորում է երկրում վճարահաշվարկային հարաբերությունները և սերտորեն համագործակցում Եվրոբանկի հետ: Քանի որ վերջինիս կառուցվածքը բավականաչափ ապակենտրոնացված է, ապա եվրոյի գոտու մնացած երկրների նման Գերմանիայի Բունդեսբանկը դեռ որոշակի ինքնուրույնությամբ հետևում է պարտադիր պահուստավորման նորմատիվի պահպանմանը, կատարում է գործարքներ բաց շուկայում և արժույթային միջամտություններ /ինտերվենցիաներ/: Գերմանիայում մեծ ուշադրություն է դարձվում բանկերի հուսալիության պահպանմանը՝ հնարավորինս խուսափելով բանկային ճգնաժամերից: Այդ նպատակով ներդրված է ավանդների կամավոր ապահովագրության և բանկերի միջոցների պահուստավորման համակարգը:

Գերմանիայի բանկային համակարգն ընդգրկում է Բունդեսբանկը, ունիվերսալ առևտրային բանկերը, խնայողական բանկերը, կոոպերատիվ կենտրոնական բանկերը, վարկային կոոպերատիվներ, հատուկ նշանակության բանկեր /պետական հիփոթեքային բանկերը/, փոստային, կոմունալ բանկերը և այլ մասնագիտացված բանկերը, օտարերկրյա բանկերի մասնձյուղերը: Գերմանիայում կան ինչպես մասնավոր, այնպես էլ պետական բանկեր: Վերջիններիս կապիտալը համալրվում է պետության կողմից, որն, ըստ մասնավոր բանկերի, անհավասար պայմանների մեջ է դնում բանկային համակարգի այդ երկու հատվածները: Գերմանիայի բանկային համակարգի հաջորդ օղակը **առևտրային բանկերն են:** 19-րդ դարի 70-ական թթ. Գերմանիայի վարկային համակարգում գերիշխող դիրք էին զբաղում **մասնավոր բանկերը:** 19-րդ երկրորդ կեսից ստեղծվեցին **բաժնետիրական բանկեր:** Մասնաձյուղերի ընդլայնումը տեղի էր ունենում հիմնականում ինքնուրույն բանկերի “կլանման” ճանապարհով: **Առևտրային բանկերի խմբերին են դասվում նաև մասնավոր բանկիրները, որոնք մասնավոր առևտրային բանկեր են, չունեն բաժնետիրական ընկերության իրավական կարգավիճակ,** բայց համարվում են ազդեցիկ: **Տարածաշրջանային բանկերը** ըստ մասշտաբի միջին բանկեր են, որոնց գործունեությունը գտնվում է պետական բանկերի վերահսկողության դաշտում: **Գերմանիային առևտրային բանկերն ընդհանուր առմամբ ունիվերսալ բանկեր են,** իրականացնում են բոլոր գործառնությունները, այդ թվում՝ արժեթղթերով գործառնությունները, բացառությամբ հիփոթեքային վարկերի:

Առևտրային բանկային համակարգի հիմքը կազմող ունիվերսալ բանկերն իրենց հերթին երեք տեսակի են՝ **ազգային նշանակության բանկեր, տարածաշրջանային բանկեր և բանկային տներ,** որոնց գործունեության հիմնական ոլորներն են արժեթղթերով գործառնությունները, բնակչության միջոցների կառավարումը, անշարժ գույքի հետ գործարքները և այլն: Գերմանիայում մեծ է բանկային համակարգի կապը արդյունաբերության հետ: Գրեթե բոլոր խոշոր բանկերի ղեկավարները միաժամանակ հանդիսանում են խոշոր արդյունաբերական ընկերությունների ղեկավար մարմինների անդամներ՝ դրանով իսկ ազդեցություն ունենալով վերջիններիս վրա: Նման փոխկապակցվածության արդյունքում տնտեսության մեջ բանկերի և այլ ընկերությունների շահերը սերտ կապված են՝ բացառելով տնտեսությանը և ազատ մրցակցությանը խոչընդոտող անբարեխիղճ միաձուլումներն ու մենաշնորհների առաջացումը: Գերմանիայում առանձնահատուկ զարգացում է ապրում բանկերի կողմից իրականացվող ապահովագրական գործունեությունը:

Գերմանիայի վարկային համակարգը բաղկացած է նաև վարկային ինստիտուտներից, որոնք ունեն հատուկ մասնագիտացվածություն: Դրանք են՝ **խնայողական դրամարկղերը, հիփոթեքային բանկերը, պետական վարկային հաստատությունները, սպառողական վարկավորման բանկերը, վարկային ընկերությունները, ապահովագրական, ներդրումային ընկերությունները, ժիրոբանկերը:**

Խնայողական դրամարկղերն առաջացել են 18-րդ դ-ի երկրորդ կեսին: Ներկայումս խնայողական դրամարկղերը հանդիսանում են պետական, որոնց պարտավորությունների համար պատասխանատու են համայնքային և քաղաքային իշխանությունը: Նրանց պասիվները բնակչության խնայողություններն են, իսկ սեփական կապիտալը բաղկացած է պահուստներից: Հիմնական ակտիվային գործառնություններից է երկարաժամկետ հիփոթեքային վարկավորումը:

Գերմանիան հիփոթեքային վարկավորման հայրենիքն է: **Հիփոթեքային քանկերը** տրամադրում են երկարաժամկետ վարկեր անշարժ գույքի գրավադրմամբ՝ արդյունաբերական և բնակարանային շինարարության նպատակով: Փոխառության միջոցները ձևավորվում են արժեթղթերի վաճառքից:

Պետական վարկային հաստատությունների թվին են դասվում **Վերականգնման քանկը** (որը **պետական ներդրումային քանկ** է, և նպատակը տնտեսության բոլոր ճյուղերի միջնաժամկետ ու երկարաժամկետ վարկերով ապահովումն ու տնտեսության վերականգնումն է, ներդրումների ու արտահանման գործառնությունների վարկավորումը), **Արտահանման քանկը** (մասնագիտացված է արտահանման գծով միջնաժամկետ և երկարաժամկետ վարկերի տրամադրման գործում), **Գյուղատնտեսական քանկը:**

Վարկային ընկենություններն առաջացել են 11-րդ դարում և դրանց հիմնական առևտրականներին, մանր արդյունաբերողներին կարճաժամկետ վարկերի տրամադրումն է: Ներդրումային ընկերություններն իրացնում են իրենց բաժնետոմսերը /սերտիֆիկատները/ և ներգրավված միջոցների հաշվին գնում այլ կազմակերպությունների բաժնետոմսերը: **Ժիրոքանկերը** պետական հաստատություններ են, որոնք իրականացնում են հաշվարկներ հաճախորդների միջև անկանխիկ ձևով:

ԻՏԱԼԻԱՅԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Իտալիայի բանկային գործը ձևավորվել Հռոմում: Մ.թ.ա. 7-րդ դարում արդեն գործում էին հաստատություններ (կազմակերպություններ), որոնք իրականացնում էին դրամական ավանդների ներգրավման, դրամական միջոցների փոխանցման, պարզ հիփոթեքային վարկերի տրամադրման, աճուրդների կազմակերպման և իրականացման գործառնություններ: Միջին դարերում և Վերածննդի ժամանակաշրջանում բանկերն իրենցից ներկայացնում էին հասարակական հաստատություններ (կազմակերպություններ), որոնք վերցնում էին հարկեր և իրականացնում որոշ բանկային գործառնություններ: Վերջիններս գտնվում էին հոգևորականների հովանու ներքո և «պայքարում» էին վաշխառության դեմ:

Իտալիայի բանկային համակարգը բաղկացած է **կենտրոնական բանկից և առևտրային բանկերից:** Այն կարելի է բաժանել 2 խմբի:

1. **Կարճաժամկետ վարկավորման ինստիտուտներ**, որոնք ներառում են հետևյալ հիմնական խմբերը՝ **ազգային շահերի բանկեր, հասարակական իրավասության բանկեր** (վերջիններս իրավաբանական անձ են և ունեն ֆինանսական ինքնուրույնություն, բայց հանդիսանում են պետական սեփականություն, իրականացնում են առևտրային գործունեություն, ստանում բյուջետային տրանսֆերտներ, ներգրավում կապիտալի շուկայից միջոցներ՝ պետական հաստատություններից վարկերի ու պարտատոմսերի թողարկման միջոցով), **միջին և փոքր առևտրային բանկեր**, որոնք վարկավորում են միջին ու փոքր բիզնեսին և հողատերերին, **կոոպերատիվ բանկեր**, որոնք աշխատում են կոոպերատիվների ու արհեստավորների հետ, **խնայողական դրամարկղեր, արհեստագործական և գյուղատնտեսական ինստիտուտներ:**

2. **Մասնագիտացված միջին ու երկարաժամկետ վարկային ինստիտուտներ**, որոնք ստեղծվել պետության կողմից՝ տնտեսության տարբեր ճյուղերի վակավորման նպատակով: Նրանց կապիտալը ձևավորվել է պարտատոմսերի թողարկման հաշվին: Միջին ու երկարաժամկետ վարկավորման ինստիտուտները միջոցները ձևավորում են միջին ժամկետային փոխառությունների թողարկման և ավանդների հաշվին: Իտալիայի բանկային համակարգի առանձնահատկությունը ԱԲ-երի և մասնագիտացված վարկային ինստիտուտների փոխգործողությունն է (կրկնակի միջնորդությունը): 90-ական թթ-ից սկսած պետական բանկերի ապապետականացման գործընթացն աշխուժացավ:

Իտալիայում **բանկային գործունեության կարգավորման մարմինների համակարգը** ներառում է **խնայողությունների և վարկերի գծով կոմիտեն** (իրականացնում է վերահսկողության գործառնույթ

խնայողությունների, վարկային և արժույթային գործառնությունների նկատմամբ), **Իտալիայի Բանկը** (կատարում է տեխնիկավարչարարական մարմնի դեր և առանձնահատկությունն այն է, որ չի վերահսկում պետական վարկային ինստիտուտների արտաքին տնտեսական գործունեությունը):

Պարտադիր պահուստների մի մասը պետք է գտնվի ԿԲ-ում, իսկ մնացած մասը մնում է ԱԲ-երում և կարող է ուղղվել պետական արժեթղթերի ձեռքբերմանը: Վերջին 10 տարիներին Բանկային ոլորտում տեղի են ունեցել բազմաթիվ միավորումներ (կոնսոլիդացիաներ): Անբավարար կապիտալը, ֆինանսական գործառնությունների իրականացման անարդյունավետությունը «ստիպեցին» Բանկերին միավորվել (167 միաձուլում և կլանում), սակայն դա ոչ միշտ էր բարձրացնում Բանկային բիզնեսի շահութաբերությունը:

Ի դեպ, Իտալիայի ԿԲ-ի որոշմամբ օտարերկրյա ֆինանսական ինստիտուտներին արգելված էր տիրապետել իտալական Բանկերի բաժնետոմսերի հսկիչ փաթեթին: Այսինքն՝ երկրի ֆինանսական ինստիտուտները պետք սովորեին ինքնուրույն լուծել իրենց խնդիրները՝ չդիմելով օտարերկրյա մասնագետների օգնությանը:

1893թ. հիմնվեց **Իտալիայի ազգային Բանկը**՝ որպես բաժնետիրական ընկերություն: Այն հանդիսանում է Եվրոպական համակարգի ԿԲ-երի անդամ: 1895թ.-ից Բանկի իրականացում է գանձապետական գործառնություններ: Միայն 1926թ. Իտալիայի Բանկը փոքր թողարկելու մենաշնորհային իրավունք ստացավ, ինչպես նաև վարկային համակարգի և լիրայի փոխարժեքի նկատմամբ վերահսկողության իրականացման իրավունք: 1936թ. Բանկն ազգայնացվեց Մուսոլինիի կառավարության կողմից և սկսեց իրականացնել «Բանկերի Բանկի» գործառույթներ, այսինքն՝ վակեր տրամադրել Բանկերին: Նրա հիմնական գործառույթներն են՝ պաշտոնական ոսկեարժույթային պահուստների ձևավորումն ու պահպանումը, պետական հաշիվների վարումը, վարկերի տրամադրումը վարկային կազմակերպություններին և կառավարությանը, վերահսկողության իրականացումը վարկային կազմակերպությունների նկատմամբ:

Բանկի ղեկավար մարմինը Բարձրագույն խորհուրդն է, որն ընտրվում է բաժնետերերի ժողովի կողմից, և որը կյանքի է կոչում Վարկերի և խնայողությունների գծով միջնախարարական կոմիտեի որոշումները: Բանկը ղեկավարում է Կառավարիչների խորհուրդը, որը նշանակվում է Բարձրագույն խորհրդի կողմից: Կառավարիչների խորհուրդը կազմված է 12 տնօրեններից: Կառավարիչներն ընտրում են Բարձրագույն խորհրդի կոմիտե, որը կազմված է կառավարչից, գլխավոր տնօրենից, նրա տեղակալից և 4 տնօրեններից: Կառավարիչը, գլխավոր տնօրենը, նրա տեղակալը պետք է հավանության արժանանան նախարարների խորհրդի կողմից և հաստատվեն երկրի նախագահի կողմից:

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Միջազգային հաշվարկների համակարգը (ՄՀՀ) կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից տնտեսության վճարային ենթակառուցվածքում: ՄՀՀ միջոցով իրականացվում է ֆինանսական շուկայի և տնտեսության իրական հատվածի մասնակիցների հաշվարկների կարգավորումը: ՄՀՀ գործունեությունը գտնվում է կենտրոնական Բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, որոնք ձգտում են ապահովել այդ կառույցների տեխնիկական բարեփոխումները, բարձրացնել նրանց արդյունավետությունը և անվտանգությունը: Պատմականորեն վարկային կազմակերպությունների միջև հաշվարկները և նրանց դրամական պարտավորությունների կարգավորումը իրականացվել են երկկողմ թղթակցային համաձայնությունների համակարգի շրջանակներում: Միջբանկային կապերի ընդլայնմանը զուգընթաց զարգացել են բազմակողմ թղթակցային համաձայնությունները, որտեղ հաշվարկային գործակալի դեր կատարել է երրորդ մասնակիցը՝ խոշոր առևտրային բանկը (ԼՈՐՈ հաշվի վարողը վարկային կազմակերպությունների համար): Վերջիններս իրականացրել են փոխադարձ հաշվարկներ առանց հատուկ թղթակցային հաշիվներ բացելու, որը նպաստում էր ծախսերի տնտեսմանը և հաշվարկների արդյունավետության բարձրացմանը: Աստիճանաբար հաշվարկային կենտրոնի դերն անցավ երկրի կենտրոնական Բանկին, որտեղ առևտրային բանկերի մեծամասնությունն ունի իր հաշվարկային և պահուստային հաշիվները: Միջբանկային հաշվարկների համակարգում կարևոր տեղ են զբաղեցնում հատուկ կառույցները, որոնք մասնագիտացված են խոշոր դրամական փոխանցումների իրականացման ուղղությամբ: Վերջիններս հայտնի են որպես «**մեծածախ վճարային համակարգեր**» կամ «**խոշոր գումարների վճարման համար նախատեսված համակարգեր**» անվանումով: Միջբանկային

հաշվարկների «մեծածախ» համակարգում կիրառվում են տեխնիկական առաջընթացի նվաճումները՝ վճարման տեղեկատվության մշակման և փոխանցման համար, որը թույլ է տալիս ապահովել հաշվարկների բարձր արագություն ու ճշտություն, կրճատել հաշվարկային ռիսկերը:

Կախված բիզնես-գործընթացների կազմակերպումից, իրացվելիության և ռիսկի աստիճանից ու հաշվարկների եզրափակման առանձնահատկություններից՝ առանձնացնում են ՄՀՀ երկու հիմնական տեսակ՝ համախառն հաշվարկների համակարգեր ռեալ ժամանակի ռեժիմում (Real Time Gross Settlement – RTGS) և տարկետված (ժամկետի երկարաձգմամբ) գուտ հաշվակների համակարգեր (Deferred Net Settlement – DNS):

RTGS համակարգում գումարի փոխանցումն իրականացվում է ռեալ ժամանակի ռեժիմում՝ հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում: DNS համակարգի հիմքում ընկած է նետտինգի (գուման) սկզբունքը, այսինքն՝ հաշվարկների մասնակիցների փոխադարձ պահանջների հաշվանցումը: Այս դեպքում փոխանցումները կատարվում են ոչ թե համակարգ մուտքագրման պահին, այլ ֆիքսվում և կուտակվում են գործառնական օրվա ընթացքում, իսկ օրվա վերջում յուրաքանչյուր մասնակցի հաշվարկվում է գուտ դիրք՝ հաշվի առնելով դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ ստացված և ուղարկված հանձնարարականները: Հաշվարկների վերջնական արդյունքերն արտացոլվում են ԿԲ-ում բանկ-մասնակիցների հաշիվներում, իսկ վճարային համակարգում նրանց հաշիվները փակվում են գրոյական մնացորդով (գրոյական սալդո)՝ մինչև հաջորդ գործառնական օրը: Այս համակարգը հիմնականում կիրառվում է վճարային շրջանառության մանրածախ հատվածում:

ՄՀՀ հետագա զարգացման կարևոր գործընթացներից է **հիբրիդ վճարային համակարգերի** մշակումը և ներդրումը՝ **համատեղելով ռեալ ժամանակի ռեժիմում համախառն հաշվարկների և նետտինգի առավելությունները:** Հիբրիդ համակարգերից RTGS^{plus} իրականացնում է դրամական միջոցների փոխանցումը համախառն հիմքով՝ նետտինգի կիրառմամբ՝ իրացվելիության տնտեսման համար: RTGS^{plus} համակարգում հանդիպական (փոխադարձ) համախառն վճարումներն իրականացվում են ռեալ ժամանակի ռեժիմում:

RTGS օգտատերերը վճարային գործընթացի ապահովման համար իրենց հաշվում մշտապես պետք է ունենան դրամական միջոցներ, որն էլ հաճախ իրացվելիության խնդիրներ է առաջ բերում: Ուստի շատ հաճախ իրացվելիության կառավարման նպատակով բանկերը սահմանում են լիմիտներ (սահմանափակումներ), վճարման հանձնարարականների հերթերի վարման բարդ ալգորիթմներ, ստացվող դրամական միջոցների պահուստավորում անհետաձգելի վճարումների կատարման համար, վճարումների իրականացման և ընթացիկ իրացվելիության վիճակի մասին տեղեկատվության մոնիտորինգ:

TARGET - Վճարային ինստիտուտների զարգացման գործում էական դեր խաղաց տարբեր երկրների տնտեսական համակարգերի գլոբալացման գործընթացը: *Եվրագոտու ստեղծումը և նոր արժույթի՝ եվրոյի կիրառումը հիմք դրեցին TARGET (Trans-European Automated Real-Time Gross Settlement Express Transfer System) վճարային համակարգի ստեղծմանը, որը պետք միավորեր միասնական RTGS ցանցում եվրագոտու երկիր-մասնակիցներին և ապահովեր դրամական միջոցների արագ ու անխոչընդոտ փոխանցումներն այդ տարածքում:* TARGET-ը միջբանկային վճարային համակարգ է, որը թույլ է տալիս ռեալ ժամանակի ռեժիմում իրականացնել միջազգային հաշվարկներ Եվրամիության ներսում: Համակարգը բաղկացած է ազգային RTGS համակարգերից և ԵԿԲ վճարային մեխանիզմից, որոնք միմյանց հետ կապվում են կապող համակարգի օգնությամբ: TARGET-ը ռեալ ժամանակի ռեժիմում խոշոր վճարումների իրականացման դեպքում հաշվարկների անդրազգային ավտոմատ համակարգ է: Համակարգի առաջին տարբերակը ներդրվել է 1999թ. ԵԿԲ-ի կողմից և ներառում էր 16 ազգային վճարային համակարգ ու Եվրոպական Կենտրոնական բանկի վճարային մեխանիզմը: Բացի այդ, 1998թ. խոշոր եվրոպական բանկերի խմբի կողմից Եվրոպական բանկային միության հովանու տակ ստեղծվել է անդրսահմանային փոխանցումների EURO1 համակարգը՝ նախատեսված խոշոր վճարումների փոխանցման համար: Այնուհետև մշակվել է STEP1 համակարգը, որը նախատեսված էր մանրածախ վճարումների փոխանցման համար, ապա STEP2 համակարգը՝ նախատեսված եվրոյով միջազգային և ներպետական զանգվածային վճարումների համար: Եվրոյի ներդրման պահին TARGET և EURO1 համակարգերից բացի գոյություն ունեին համախառն հաշվարկների այլ համակարգեր, որոնք հիմնականում սպասարկում էին ներքին վճարային շրջանառությունը: Իր նախնական կառուցվածքով TARGET-ը գործել է մինչև 2007թ.՝ մինչև նրա վերակազմակերպումը: 2007թ. ներդրվել է համակարգի նոր տարբերակը՝ **TARGET2**, որը միավորում է ԵՄ

26 ԿԲ-երի տեխնոլոգիական ենթակառուցվածքը՝ RTGS համակարգում: Բարեփոխումների նպատակը միասնական տեխնիկական պլատֆորմի ստեղծումն ու ծառայությունների վճարման միասնականացված սկզբունքների ներդրումն էր: Միասնական տեխնիկական պլատֆորմը ապահովում են 3 երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ԿԲ-երը: TARGET2 համակարգի գործունեության **սկզբունքներն են՝ հաճախորդների հետ շփումների ապակենտրոնացվածությունը, հաշվապահական հաշվառումը, պահուստների կառավարումը և դրամավարկային քաղաքականության հետ կապված գործառնությունները:** Եվրոպական վճարային համակարգերում վճարային և հաշվարկային փոխհարաբերությունները կանոնակարգվում են միջազգային նորմերով, հասարակական և մասնավոր իրավունքի դրույթներով:

Միջազգային վճարումների արդյունավետության բարձրացման և տարբեր երկրների ազգային շուկաները մեկ միասնական շուկայում միավորելու նպատակով ստեղծվել է եվրոյով վճարումների միասնական գոտին (SEPA), որն ընդգրկում է ԵՄ 27 երկրները և Ազատ առևտրի եվրոպական միության երկրները: Ուստի 2008թ. կատարվել են փոփոխություններ վճարային համակարգում, ըստ որի լիովին վերացվել են եվրոյով ներքին և միջազգային վճարումների միջև տարբերությունները: Միասնական ստանդարտների սահմանումը նպատակ ունի պարզեցնելու վճարումները Եվրոպայում և նրա սահմաններից դուրս: Համաձայն Եվրախորհրդարանի և ԵՄ խորհրդի կողմից ընդունված որոշման՝ 2014թ. փետրվարի 1-ից բոլոր եվրոպական վճարումներն իրականացվում են միասնական ստանդարտով և համապատասխան են միասնական տեխնիկական պահանջներին:

TARGET-ը ապակենտրոնացված համակարգ է, որը հենվում է ռեալ ժամանակի ռեժիմում համախառն հաշվարկների ազգային համակարգերի վրա՝ հաշվարկների համար կիրառելով որպես արժույթ *եվրոն*: TARGET համակարգի *տարրերն են՝* ներքին վճարային համակարգերը, տեխնոլոգիական գործընթացները /կապակցող օղակ-interlinking/, ԵԿԲ գործառույթները: *TARGET համակարգի հիմքում ընկած է SWIFT* (Society for Worldwide Interbank Financial Telecommunication) միջազգային համակարգը: Համակարգի բոլոր մասնակիցները նույնականացվում են ըստ SWIFT կոդերի (BIC, IBAN): TARGET համակարգը մեծացնում է իրացվելիությունը, որը կարևոր պայման է հաշվարկների համակարգի համար: Այն նախատեսում է նրա մասնակիցների համար լրացուցիչ իրացվելի միջոցների ստացման հնարավորություն, որոնք կօգտագործվեն վճարումներ կատարելու համար:

TARGET համակարգի միջոցով մշակվող հաշվարկային գործառնություններն են՝ ԿԲ-երի գործառնությունների հետ անմիջականորեն կապված վճարումները, եվրոյով խոշոր փոխանցումների նետտինգային համակարգերի հաշվարկային գործառնությունները, քլիրինգային բանկերի միջև եվրոյով վճարումները, միջբանկային և հաճախորդների կողմից վճարումները եվրոյով: TARGET համակարգի միջոցով կարելի կատարել ցանկացած կրեդիտային փոխանցումներ: Ընդ որում գումարի փոխանցման ներքին և վերին շեմերի սահմանափակումներ չկան, և բոլոր վճարումները մշակվում են միասնական՝ անկախ գումարի չափից:

SIC (Swiss Interbank Clearing System) - Շվեյցարիայում առևտրային կառույցների և մասնավոր անձանց վճարումների հիմնական մասն իրականացվում է անկանխիկ ձևով՝ բանկի կամ փոստային բաժանմունքի միջոցով: Անկանխիկ վճարումները հենվում են 3 անկախ, բայց փոխկապակցված համակարգերի՝ *Շվեյցարիայի ազգային բանկի ժիրո-համակարգի (giro), միջբանկային քլիրինգային համակարգի և փոստային ժիրո-համակարգի* վրա: 50-ական թթ. մշակված միջբանկային քլիրինգային համակարգը հիմնվել է առևտրային բանկերի միջև փաստաթղթաշրջանառության համար, այնուհետև ներկայացվում էին էլեկտրոնային կրիչներով: 70-ական թթ. վերջին Շվեյցարիայում քննարկվում էր վճարումների նոր էլեկտրոնային համակարգի ստեղծման հարցը: Եվ 1987թ. սկսեց գործել **SIC (Swiss Interbank Clearing System) միջբանկային համակարգը, որը նախատեսված էր շվեյցարական ֆրանկով փոխադարձ հաշվարկների համար:** SIC-ի շնորհիվ շվեյցարական բանկերը արագացրել են վճարումների ընթացքը՝ միաժամանակ բարելավելով նրանց որակը, կրճատել փաստաթղթերի հոսքը՝ տնտեսելով միջոցներ, բարելավել բանկային հաշիվներում միջոցների իրացվելիության և շարժի նկատմամբ վերահսկողությունը, նվազեցրել բանկային ռիսկերը: Բանկերը կարող են ստանալ և ուղարկել վճարումներ ողջ բանկային օրվա ընթացքում, իսկ գիշերային ժամերին՝ այն մշակել: *SIC համակարգը կարող է աշխատել օրը 24 ժամ (քլիրինգային օր):* Քանի դեռ գործառնական օրվա ավարտին ձևավորվում է հաշվեկշիռը, ստացվող վճարումները մշակվում են համակարգի կողմից **ռեալ ժամանակում:** *Յուրքանցյուր վճարում ստուգվում է համակարգչի կողմից՝ կան արդյոք հաշվում համապատասխան միջոցներ գործարքի համար (առկայության դեպքում*

*իրականացվում է, իսկ բացակայության դեպքում՝ պահպանվում սպասումների թղթապանակում՝ մինչև համապատասխան ծածկույթի առկայությունը): Այս հատկանիշն էլ առանձնացնում է SIC համակարգը այլ ավանդական համակարգերից: Վճարումները մշակման համար կարող են ներմուծվել SIC համակարգ կամ ընթացիկ օրվա ընթացքում, կամ հաջորդ 2 շաբաթվա ընթացքում (10 բանկային օր) և մնում են մինչև նրանց պահանջը: Քլիրինգային համակարգի մասնկից-բանկերը կարող են հետևել բոլոր մանրամասներին, օնլայն ռեժիմում կատարել փոփոխություններ: **Ազգային բանկի դերը մասնակից-բանկերի հաշիվների և վճարումների հոսքի նկատմամբ վերահսկողությունն է:** Վճարումները մշակվում են քլիրինգային օրվա ընթացքում ստացման պահից, իսկ վերջնական հաշվեկշիռը վերահսկվում է Ազգային բանկի կողմից: Քլիրինգային օրը պայմանականորեն բաժանվում է 4 փուլի: Առաջին փուլն ավարտվում է 15.00, որից հետո համակարգ փոխանցված վճարումները մշակվում են հաջորդ օրը: Երկրորդ փուլում, 16.00 հետո, համակարգը մշակում է միայն Ազգային բանկի գործառնությունները: Երրորդ փուլը՝ քլիրինգային օրվա փակումը, վերահսկվում է Ազգային բանկի կողմից (վճարումների մշակում): Չորրորդ փուլում, բոլոր վճարումների մշակումից հետո, Ազգային բանկը ստուգում է բանկ-մասնակիցների հաշիվները և նախապատրաստվում են հաջորդ օրվան: Այդ գործընթացից հետո, 20.00 սկսվում է նոր քլիրինգային օրը: Անվտանգության նկատառումներից ելնելով յուրաքանչյուր բանկ-մասնակից ունի համակարգ մուտք գործելու իր կողը և էլեկտրոնային ստորագրությունը: Շվեյցարական բանկերի համար SIC համակարգը հանդիսանում է միջբանկային վճարումների իրականացման արդյունավետ գործիք: SIC համակարգում ներդրված է կոմիսիոն հատուցման պրոգրեսիվ սանդղակ (ցածր կոմիսիոն վճար օրվա սկզբնամասում):*

Համախառն հաշվարկների երկու խոշոր համակարգեր գործում են Կենտրոնական բանկերի համակարգի հիման վրա (BOJ-NET- Ճապոնիայի Բանկի ցանցը, որն իրականացնում է համախառն հաշվարկներ, Fedwire ամերիկյան համակարգը):

BOJ-NET- BOJ-NET համակարգը գործում է 1988թ-ից և իրականացնում էլեկտրոնային դրամական փոխանցումների գծով հաշվարկներ ֆինանսական կազմակերպությունների միջև: **Ճապոնիայի** Բանկը հանդես է գալիս որպես համախառն հաշվարկների BOJ-NET վճարային համակարգի օպերատոր՝ միջբանկային և կառավարության պարտատոմսերի հետ կապված գործառնությունների համար: Համակարգի կողմից մշակված վճարումների ծավալը և քանակությունը բնութագրում են Ճապոնիայում ֆինանսական ակտիվության մակարդակը: Ֆինանսական ճգնաժամից հետո մշակվեց միջոցների փոխանցման նախագիծ BOJ-NET համակարգում՝ ուղղված խոշոր վճարումների անվտանգության և արդյունավետության որակական մակարդակի բարձրացմանը (իրացվելիության տնտեսման և *BOJ-NET համակարգում ռեալ ժամանակում համախառն հաշվարկների հիմքով խոշոր վճարումների փոխանցման մեխանիզմների ներդրում):* 2008թ.ից ներդրվել են BOJ-NET համակարգում իրացվելիության տնտեսման մեթոդները և **քլիրինգային համակարգում իենով արժույթային հաշվարկներով վճարումներին անցումը ռեալ ժամանակում համախառն հաշվարկների,** ըստ որի հաշվարկներն իրականացվում են ավելի վաղ ժամերի՝ կրճատելով հաշվարկների համար անհրաժեշտ իրացվելիությունը: **BOJ-NET համակարգը չի նախատեսում դրամական միջոցների բացակայության դեպքում վճարման հանձնարարականների հերթագրում, այլ ավտոմատ կերպով մերժում է:** Ճապոնիայի բանկը՝ որպես համակարգի օպերատոր, *սահմանում է կանոններ, կազմակերպում նրա արդյունավետ աշխատանքը, կարգավորում վճարումների իրականացման գործընթացը և վերահսկում համակարգի աշխատանքը:* **Համակարգի մասնակիցներ** կարող են լինել *բանկերը* (պետք է ունենան հաշիվներ Ճապոնիայի Բանկում), *ձեռնարկությունները, դրամական բրոքերները:* *BOJ-NET համակարգը գործում է մասնակիցների և ՃԲ-ի միջև պայմանագրերի հիման վրա:*

FedWire - ԱՄՆ-ում գործում է երկու էլեկտրոնային վճարային համակարգ՝ **FedWire** և **CHIPS համակարգերը**, որոնք հանդիսանում են միջազգային վճարումների խոշոր համակարգեր և **իրականացնում են վճարումները ԱՄՆ դոլարով:**

FedWire ամերիկյան հաղորդակցության համակարգը, որը համախառն հաշվարկների ամենահին պետական համակարգն է (գործում է 19 դարի վերջից), ստեղծվել և կառավարվում է ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից: Այս համակարգով գործառնությունների իրականացման համար 12 դաշնային պահուստային բանկերը միավորվել են և գործում են որպես մեկ ամբողջություն: **FedWire միջոցով փոխանցումներն իրականացվում են համախառն հաշվարկների ձևով ռեալ ժամանակում՝ յուրաքանակյուր վճարում առանձին:** Բոլոր գործարքներն ավարտվում են մեկ օրվա ընթացքում, և առանց

հետկանչի իրավունքի: **FedWire** համակարգը տրամադրում է երկու հիմնական ծառայություն՝ **դրամական միջոցների փոխանցում** և **արժեթղթերի փոխանցում**: FedWire կարևոր դեր է խաղում ԱՄՆ վճարային համակարգում, քանի որ թույլ է տալիս առևտրային բանկերին իրականացնել *միջբանկային և հաճախորդների վճարումներ կարճ ժամանակում*: **FedWire համակարգի մասնակիցներն են ֆինանսական ինստիտուտները**, որոնք ունեն հաշիվներ Դաշնային պահուստային բանկում: Յուրաքանչյուր մասնակից ունի ինսանիշ կոդ: *FedWire իրենից ներկայացնում է միաժամանակ հեռահաղորդակցության և քլիրինգային համակարգ, այսինքն՝ տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս ուղարկել և ընդունել տարբեր տեսակի էլեկտրոնային հաղորդագրություններ (վճարման հանձնարարականներ), և միաժամանակ իրականացնել հաշվարկներ*:

CHIPS - CHIPS (Clearing House Interbank Payment System) հաշվարկների միջբանկային ամերիկյան քլիրինգային համակարգը հիմնվել է 1970թ. խոշոր նյույորքյան բանկերի խմբի կողմից և աշխատում էր գուտ-հաշվարկի սկզբունքով: Համակարգը նախատեսված էր ամերիկյան արժույթով անդրսահմանային փոխանցումների իրականացման համար, և հանդիսանում էր ԱՄՆ-ում դրամական փոխանցումների խոշոր մասնավոր էլեկտրոնային համակարգը: 2001թ. **CHIPS-ը վերափոխվել է ռեալ ժամանակի ռեժիմում համախառն հաշվարկների համակարգի՝ հանդիպակաց վճարումների հաշվանցման մեխանիզմի կիրառմամբ ողջ գործառնական օրվա ընթացքում**: Համակարգ մտնող դրամական միջոցների փոխանցման մասին վճարման կարգադրությունը անցնում է կենտրոնացված հերթի, որտեղ համեմատվում է ուղարկողի հաշվում առկա միջոցների և հանդիպակաց մուտքերի հետ: Եթե հնարավորություն է ստեղծվում կարգադրության վճարման, այն առանձնանում է հերթից և մարվում: Համակարգի միջով անցնող ցանկացած վճարում առանց հետկանչի է՝ անկախ նրա իրականացման ժամանակից: Պատմականորեն CHIPS-ը մասնագիտացված էր դոլարով միջազգային փոխանցումների ուղղությամբ, ներկայումս կատարվում են վճարումներ նաև ներքին շուկայում: Քլիրինգն ապահովելու համար համակարգի յուրաքանչյուր մասնակից ամրագրում է իր հաշիվը համակարգում որոշակի գումարով, որն անվանում են «ապահովագրական դեպոզիտ»: Վերջինիս չափը հաշվարկվում է շաբաթվա կտրվածքով՝ պայմանավորված գործառնությունների միջին ծավալով: *CHIPS-ը յուրաքանչյուր անդամի գծով վարում է դիրք, որն իրենից ներկայացնում է հատուկ հաշվառման ռեգիստր, որտեղ արտացոլվում է ընթացիկ սալդոն՝ ներառյալ «ապահովագրական դեպոզիտը»*: **CHIPS-ը կիրառում է դիրքերի** հետևյալ հասկացությունները՝ **բացման դիրք** (շաբաթական հաշվարկվող գումարը հավասար է «ապահովագրական դեպոզիտի» մեծությանը), **ընթացիկ դիրք** (մասնակիցների հաշվարկների սալդոն գործառնական օրվա կոնկրետ պահին), **փակման դիրք** (հաշվարկների սալդոն ընթացիկ օրվա բոլոր գործառնությունների ավարտից հետո): *Ընթացիկ դիրքը չի կարող բացասական լինել, նաև չի կարող գերազանցել բացման դիրքը ավելի քան կրկնակի անգամ*: CHIPS-ում կիրառվում է վճարումների քլիրինգի 3 եղանակ՝ *անհատական կարգով, երկկողմանի և բազմակողմանի նետտինգի իրականացում*: Օրվա վերջում «ապահովագրական դեպոզիտներն» օգտագործվում են չկատարված՝ քլիրինգ չանցած վճարումների համար: *Ցանկացած բացասական սալդո պետք է համալրվի, և փոխանցումը կատարվում է Fedwire համակարգի միջոցով*: *Ընթացիկ դիրքը համարվում է վերջնական և հավասարվում գրոյի: Չկատարված վճարումները (միջոցներ չլինելու պատճառով) համարվում են ժամկետանց և անվավեր*: CHIPS յուրաքանչյուր բանկ-անդամ ունի քառանիշ նույնականացման կոդ, համակարգի մասնակիցների հաճախորդներին և թղթակիցներին վերագրվում են՝ վեցանիշ կոդեր, կիրառվում են նաև հաշվների իդենտիֆիկատորներ (8-17 նիշ կոդեր):

BACS - BACS (Bankers Automated Clearing Services) Անգլիայի էլեկտրոնային վճարային համակարգն է (Անգլիայի միջբանկային քլիրինգային համակարգի ավտոմատ սպասարկում), որն *իրականացնում է դեբետային և կրեդիտային փոխանցումների էլեկտրոնային հաշվանցում՝ համաձայն համակարգի մասնակիցների կարգադրության՝ հաշվին կամ հաշվից միջոցների ուղղակի գրանցմամբ՝ առանց անկանխիկ գործիքների կիրառման (չեկ, այլ թղթային կրիչներ)*: *BACS կենտրոնացված վճարային համակարգ է, որը կիրառվում է տարբեր տեսակի էլեկտրոնային վճարումների մշակման համար*: Այս համակարգում առավել տարածված գործառնություններն են ստացողի բանկային հաշվին աշխատավարձի, թոշակների, պետական նպաստների ուղղակի գրանցումը, ուղղակի դեբետագրումը, միանվագ ինտերնետի և հեռախոսի վճարները, պարբերաբար վճարումների հանձնարարականները՝ մագնիսական կրիչների կամ էլեկտրոնային կապի հիման վրա: BACS համակարգում տեղեկատվության մշակումը և վճարումն

իրականացվում են 3 օրվա ընթացքում (1-ին օր՝ ուղղակի կրեդիտային և դեբետային փոխանցումների համար տեղեկատվության ստացում, փոխանցում համակարգին, ամփոփագրերի (ցուցակների) ստացում, 2-րդ օր՝ ցուցակների հիման վրա վճարողների ընթացիկ հաշիվի դեբետագրում, 3-րդ օր՝ ստացող բանկերը մշակում են տեղեկատվությունն ու հաշվեգրում դրամական միջոցները հաճախորդի հաշվին):

CHAPS - CHAPS (Clearing House Automated Payment System) Մեծ Բրիտանիայում հաշվարկների քլիրինգային համակարգ է: CHAPS համակարգը բաշխիչ ցանց է, որտեղ էլեկտրոնային վճարային հայտագրերը (ծանուցումները) փոխանցվում են անմիջականորեն հաշվարկների համակարգի մեկ անդամից՝ վճարում ուղղարկողից, հաշվարկների համակարգի մյուս անդամին՝ վճարում ստացողին (գործընթացը կատարվում է առանց Քլիրինգային պալատի մասնակցության): Յուրաքանչյուր բանկ ունի իր ստանդարտ ծրագրային ապահովումը (Gateway), որը ֆիքսում է բանկից ուղարկվող և ստացվող բոլոր վճարումները: Հաշվարկային բանկերը միմյանց ուղարկում էին վճարումների մասին հաղորդագրությունները՝ չտեղեկացնելով Անգլիայի բանկին փոխանցումների մասին: Որպեսզի CHAPS համակարգը վճարումներն իրականացնի ռեալ ժամանակի ռեժիմում, անհրաժեշտ էին փոփոխություններ: Ըստ որի՝ նոր համակարգում յուրաքանչյուր վճարում կարգավորվում է Անգլիայի բանկում՝ նախքան վճարման մասին տեղեկատվությունը կուղարկվի բանկ-ստացողին: CHAPS համակարգի կանոնները վճարումների հետևանք չեն նախատեսում: Չեն գործում գործառնությունների իրականացման սահմանափակումներ, միակ պայմանը ֆունտ ստեռլինգով վճարումների կատարումն է: Համակարգը գործում է հաշվարկների գտման հիմքով: CHAPS քլիրինգային համակարգի անմիջական մասնակիցներն են բանկերը, այդ թվում՝ Անգլիայի բանկը և հաշվարկների այլ մասնակիցներ: Բանկերը, այս համակարգի միջոցով ստանալով հաղորդագրությունը միջոցների փոխանցման մասին, պետք է կրեդիտագրվող կողմին փոխանցեն միջոցները հաղորդագրության ստացման օրը՝ պատասխանատու լինելով բոլոր փոխանցումների և միջբանկային պարտավորությունների համար:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ

Կարևորում է ֆինանսական ինստիտուտների դերը ներդրումային միջավայրի բարելավման, երկրում արժույթաֆինանսական անվտանգության բարձրացման, ազգային ու միջազգային տնտեսության զարգացման գործում: Ֆինանսական միջնորդների զարգացման գործընթացում աստիճանաբար փոխվում է դրանց կառուցվածքը՝ բանկից մինչև ինտեգրված ֆինանսական միջնորդներ:

Ֆինանսական միջնորդները ֆինանսական կազմակերպություններ են, որոնք ծառայություններ են մատուցում ֆինանսական շուկայի բոլոր հատվածներում (բանկային, ֆոնդային, ժամկետային, պարտատոմսերի շուկաներում և այլն): Այդ կազմակերպությունները վերաբաշխում են կապիտալը տնտեսության իրական հատվածում: Ֆինանսական միջնորդները գործում են վերահսկող և կարգավորող մարմինների կողմից տրված լիցենզիայի հիման վրա:

Ֆինանսական միջնորդներն են՝ բանկերը, ներդրումային, բրոքերային, ապահովագրական, կառավարող ընկերությունները, բորսաները, դեպոզիտարիատները և այլն:

Ֆինանսական միջնորդները բաժանվում են 2 կատեգորիաների՝

- **մասնագիտացված և**
- **ինտեգրված ֆինանսական միջնորդներ:**

Մասնագիտացված ֆինանսական միջնորդներն են՝ բանկերը, ոչ բանկային ֆինանսական միջնորդները (ներդրումային, ապահովագրական, լիզինգային, ֆակտորինգային, կառավարող, խորհրդատվական ընկերությունները, ֆինանսական բրոքերները, ինտերնետ-բրոքերները, հեջավորման, ոչ պետական կենսաթոշակային ֆոնդերը, Forex-ակումբները և այլն):

20-րդ դարի վերջին ի հայտ եկավ **ֆինանսական միջնորդի նոր տեսակ՝ ինտեգրված ֆինանսական միջնորդը**, որը **բանկի և ֆինանսական շուկայի այլ մասնագիտական մասնակիցների** (ապահովագրական, ներդրումային, բրոքերային, կառավարող, լիզինգային, խորհրդատվական ընկերություններ և այլն) **միավորումն է** (իրավական, մարքեթինգային կամ տարածքային): **Ինտեգրված ֆինանսական միջնորդների հիմնական խնդիրը հաճախորդի «բարեհաճ դիրքի նվաճումն է»՝ բանկային գործառնությունների և ոչ բանկային ֆինանսական ծառայությունների կոմպլեքս տրամադրման ճանապարհով** (ավանդների

ներգրավում, արժույթի փոխանակում, վարկավորում, պլաստիկ քարտերի սպասարկում, դրամական միջոցների փոխանցում, ֆոնդային շուկայում միջոցների տեղաբաշխում, ապահովագրական գործարքներ և այլն): Վերջին տարիներին ինտեգրված ֆինանսական միջնորդների ստեղծումը մի կողմից համաշխարհային միտում է, մյուս կողմից՝ առավել մրցունակ և հաճախորդամետ ռազմավարություն:

Միասնական ֆինանսական ծառայության հիմնական համաշխարհային մոդելներն են՝

1. **Դիստրիբյուտորական պայմանագիրը կամ ռազմավարական միությունը (այլանսը)** (բանկը կատարում է գործակալի գործառույթ, հանդես է գալիս որպես ստանդարտացված ապահովագրական և/կամ ներդրումային ապրանքների վաճառքի ուղի):
2. **Համատեղ ձեռնարկությունը**, որն իրենից ներկայացնում է բանկի և ապահովագրական կամ ներդրումային ընկերության միավորում (բանկին փոխկապակցված ապահովագրական կամ ներդրումային ընկերության ստեղծում (ընդհանուր բաժնետերեր), բանկի համար հատուկ ապահովագրական կամ ներդրումային ապրանքների մշակում):
3. **Միաձուլումների և կլանումների մոդելը (մոդել M&A)** (բանկը ապահովագրական կամ ներդրումային ընկերությունների լրիվ կամ մասնակի սեփականատերն է):
4. **Բանկերի կողմից նոր ապահովագրական ընկերության ձևավորումը:**
5. **Ֆինանսական սուպերմարկետների ստեղծումը** (առաջարկելով միաժամանակ տարբեր ֆինանսական ծառայություններ միևնույն ապրանքանիշով):

ԲԱՆԿԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ժամանակակից պայմաններում բանկային համակարգում տեղի ունեցող գործընթացները՝ սուր մրցակցային պայքարը, բացասական երևույթները տնտեսությունում հանգեցնում են միջին և մանր վարկային հաստատությունների «ճնշմանը, դուրս մղմանը», ու տեղի է ունենում բանկային կապիտալի կենտրոնացում և բանկային միավորումների (մենաշնորհների) ստեղծում:

Բանկային միավորումների ստեղծումը նվազեցնում է բանկի ռիսկը, ամրապնդում է դիրքը շուկայում: Միջբանկային միավորումները, կախված մասնակիցների կազմից, լինում են՝

- **զուտ բանկային միավորումներ և**
- **խառը տիպի միավորումներ՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների, այլ ֆինանսական ինստիտուտների մասնակցությամբ:**

Կախված նպատակներից՝ բանկային միավորումները լինում են՝

- **առևտրային** (շահույթի մաքսիմալացմանն ուղղված գործունեություն) և
- **ոչ առևտրային բնույթի** (հիմնական նպատակը իր մասնակիցներին տարբեր ծառայությունների տրամադրումն է): *Երկրորդ տեսակին են վերաբերում միությունները, ասոցիացիաները, լիգաները:*

Բանկային միությունների (ասոցիացիաների) հիմնական խնդիրներն են՝ իր անդամների իրավունքների պաշտպանությունը և շահերի ներկայացումը, բանկային գործի զարգացմանը մասնակցությունը, բանկերի համար կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, բանկերի միջև գործարար համագործակցության հուսալիության ապահովումը, բանկերի տեղեկատվական ապահովումը և այլն:

Բանկային մենաշնորհները բանկերի կամ բանկ-հսկաների միավորումն է, որոնց դերը մեծ է բանկային գործում և տնտեսությունում ընդհանրապես: *Բանկային մենաշնորհները կարող են հանդես գալ հետևյալ ձևերով՝ կարտելներ, տրեստներ, կոնսորցիումների (սինդիկատներ), կոնցեռներ, հոլդինգներ:*

Բանկային կարտելը բանկերի միջև համաձայնությունն է (որպես օրենք, գաղտնի)՝ գործունեության ոլորտների բաժանման, տոկոսային քաղաքականության, շահաբաժինների վճարման, վարկի պայմանների և այլնի վերաբերյալ: **Բանկային տրեստները** ստեղծվում են 2 կամ մի քանի բանկերի ամբողջական միաձուլման ճանապարհով: **Բանկային կոնցեռը** մի շարք ֆորմալ անկախ բանկերի միավորումն է՝ մեկ բանկի կամ այլ հաստատությունների վերահսկողության տակ: **Բանկային հոլդինգներն** իրենցից ներկայացնում են բանկեր կամ ինքնուրույն ընկերություններ, որոնք տիրապետում են մեկ կամ մի քանի բանկերի և ֆինանսական ինստիտուտների բաժնետիրական կապիտալի մի մասին, և որը բավարար է նրանց նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնելու համար:

Բանկային կոնսորցիումը (սինդիկատ, խոշոր բանկերի միավորում) բանկերի խումբ է, ժամանակավորապես կազմակերպված խոշոր բանկերից մեկի կողմից (կոնսորցիումի ղեկավար)՝ խոշոր վարկային, հիպոթեքային և այլ գործառնությունների համատեղ իրականացման (երբ մեկ բանկի պոտենցիալը այս կամ այն պատճառով թույլ չի տալիս այդ գործառնություններն իրականացնել ինքնուրույն) և փոխառուի անվճարունակության ղեպքում յուրաքանչյուր մասնակցի հնարավոր կորուստների նվազեցման, սահմանափակման նպատակով:

Բանկային կոնսորցիումի անդամները պահպանում են լրիվ ինքնուրույնությունը և կարող են լինել այլ բանկային միավորումների մասնակիցներ: Բանկային կոնսորցիումը ստեղծում է միասնական ֆոնդեր մասնակիցների վճարների (անդամավճարների) հաշվին, ինչպես նաև օգտվում են միջբանկային վարկերից: Բանկային կոնսորցիումի կառավարումը իրականացվում է հատուկ ստեղծված գործադիր մարմնի կամ բանկային կոնսորցիումի անդամներից որևէ մեկի կողմից: *Յուրաքանչյուր կոնսորցիումի գործունեությունն ղեկավարվում է մեկ կամ մի քանի բանկերի կողմից: Համատեղ ղեկավարման ղեպքում առանձնանում է առաջատար խոշոր բանկը (կամ բանկերը), որը ձևավորում է մասնակիցների խմբերը, մշակում ֆինանսավորման պայմանները, բանակցություններ վարում հաճախորդների հետ, ուսումնասիրում վարկավորման ներկայացված նախագծերը և դրանց հետ կապված ռիսկերը, ապահովում գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գումարի մոբիլիզացիան և լուծում համապատասխան բաժնետիրական ընկերության կազմակերպչական հարցերը:*

Բանկ-կազմակերպչի դերում հանդես է գալիս մեծածավալ պասիվներով (պարտավորություններով) բանկը, որն ունի խոշորամասշտաբ գործարքների իրականացման փորձ, որակավորված կադրեր, լայն կապեր ֆինանսավարկային հաստատությունների հետ և բարձր հեղինակություն բանկային համակարգում: **Բանկային կոնսորցիումները չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություններ:**

Բանկային կոնսորցիումները կամ մասնավոր բանկերի միջև համաձայնությունները կազմակերպվում են խոշորամասշտաբ երկարաժամկետ նախագծերի ֆինանսավորման և վարկային ռիսկերի նվազեցման համար՝ վարկային ռեսուրսների կուտակման նպատակով, ինչպես ազգային արժույթով, այնպես էլ արտարժույթով: Ընդհանուր առմամբ *բանկային կոնսորցիումների դերն աճում է նախագծային ֆինանսավորման ղեպքում:* Շատ հաճախ միջազգային նավթագազային նախագծերի ֆինանսավորման ապահովման համար հատուկ ստեղծվում են բանկային կոնսորցիումներ (սինդիկատներ), որոնք փոխգործակցում են արդյունաբերական կոնսորցիումների հետ: Խոշորամասշտաբ նախագծերի ֆինանսավորման և վարկավորման համար բանկային կոնսորցիումները մասնագիտանում են ըստ տարածքային կամ ճյուղային հատկանիշի:

Կոնսորցիումում բանկերի ներգրավման պայմանը նվազագույն մասնակցության համաձայնությունն է, որը կախված է տրամադրվող վարկի ծավալից և ռիսկի աստիճանից: Որքան նշանակալի է վարկավորման ներկայացված նախագծի ռիսկը, այնքան ավելի շատ բանկեր են որպես մասնակիցներ ներգրավվում կոնսորցիումում՝ դրանով իսկ նվազեցնելով ռիսկը յուրաքանչյուր բանկի համար:

Բանկային կոնսորցիումները սովորաբար բաղկացած են ներդրումային բանկերից, որոնք իրականացնում են արժեթղթերի էմիսիա, առևտրային բանկերից և դիլերային ընկերություններից: Բանկային կոնսորցիումները թույլ են տալիս նվազեցնել երկարաժամկետ ֆինանսավորման ռիսկը, նրանք կազմակերպվում են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: *Բանկային կոնսորցիումի ստեղծումը գործառնությունների մասշտաբի մեծացման նպատակ է հետապնդում՝ լրացուցիչ ռեսուրսների ներգրավման, ռիսկի բաշխման, գործառնությունների իրացվելիության մակարդակի պահպանման ճանապարհով:* **Կոնսորցիում-երաշխավորը բանկային կոնսորցիում է, որը տրամադրում է ստացված վարկի վերադարձի երաշխիք:** Փոխառուի հետ բանկային կոնսորցիումների հետ համագործակցությունը պարզեցնում է վարկերի երկարաձգումը:

Զարգացած երկրներում պարտատոմսերը բաշխվում են խոշոր բանկերի կամ բանկային կոնսորցիումների կողմից, որոնք գնում են մեծ քանակությամբ պարտատոմսեր թողարկողից և աստիճանաբար իրացնում դրամական շուկայում: Թողարկողը վաճառում է պարտատոմսերը բանկին անվանական արժեքից ցածր, և բանկերի եկամուտը ձևավորվում է թողարկման և շուկայական արժեքի (կուրսի) տարբերությունից: *Բանկային կոնսորցիումը ներառում է՝ առաջատար բանկ-մենեջերը, որը ձևավորում է բանկ-երաշխավորների խմբերը, և անմիջականորեն պարտատոմսեր վաճառող բանկերը:*

Չարգացած երկրների բազմաթիվ առաջատար բանկեր միաժամանակ հանդես են գալիս և նախագծի ֆինանսավորման կազմակերպչի և մեկ այլ բանկային կոնսորցիումի շարքային մասնակցի դերում: Բանկային կոնսորցիումների ներսում մրցակցային պայքար է ավելի շատ շահույթ ստանալու համար:

Առանձնացնում են **ժամանակավոր բանկային կոնսորցիումներ**, որոնք *ստեղծվում են մեկ խոշոր գործարքի ֆինանսավորման համար*, և **մշտական (մշտապես գործող) բանկային կոնսորցիումներ` հիմնադրված բանկերի կողմից հավասարության հիմքով: Վերջիններս հիմնականում ձևավորվում են արժույթային և վարկային կապիտալի շուկայում գործառնությունների իրականացման համար:**

Չնայած կոնսորցիումը և սինդիկացված (համախմբված) գործարքները սահմանափակված են ըստ ժամանակի, բայց բանկերի միջև կապերը կարող են վերականգնվել նմանօրինակ հետագա գործարքների համար, և գործնականում նկատվում է բանկային համագործակցության շարունակություն: Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց բանկային կոնսորցիումներն իրենցից ներկայացնում են բանկերի ստաբիլ միավորումներ` ոչ միայն վարկային, այլև երաշխիքային, դրամական շուկայում արժեթղթերով գործառնությունների համատեղ իրականացման համար: Կոնսորցիումի ստեղծման դեպքում բանկերը դեկավարվում են գործող օրենսդրությամբ, իսկ վարկային հարաբերությունների ձևավորման դեպքում առաջնորդվում են առևտրային նպատակահարմարությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԸ (ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏՆԵՐԸ)

Ֆինանսական սուպերմարկետները հանդես են գալիս որպես ինտեգրված ֆինանսական միջնորդներ: Հաճախորդն այսօր գլխավոր արժեքն է, ուստի ընկերությունները դիմում են ցանկացած քայլի հաճախորդներ ներգրավելու համար` ստեղծելով առավելագույնս շահավետ ու հարմարավետ պայմաններ: Նմանօրինակ մոդել է **ֆինանսական սուպերմարկետը (հանրախանութը), որի դեպքում բոլոր հնարավոր ֆինանսական ծառայությունները գործում են «մեկ տանիքի տակ»:** Մեկ վայրում, օրինակ, կարելի է համալրել բանկային հաշիվը, կատարել գործառնություններ արժեթղթերով, ապահովագրել կյանքը, վարկ ձևակերպել, սեփական միջոցների կառավարումը վստահել մասնագետներին և այլն: **Ֆինանսական ձևաչափը կարող է ընդգրկել տարբեր միջնորդական կազմակերպություններ (հիփոթեքային, ապահովագրական, բրոքերային և այլն):** Սակայն, ըստ փորձագետների, առավել արդյունավետ տարբերակ է **ֆինանսական սուպերմարկետների ստեղծումը բանկի բազայի վրա, որը կարող է համատեղել ավանդական բանկային բիզնեսը և ոչ բանկային գործառնությունները:**

Ներկայումս ֆինանսական սուպերմարկետների աշխատանքի պրակտիկան ներառում է բիզնեսի այնպիսի հիմնական ուղղություններ, ինչպիսիք են մանրածախ բանկային ծառայությունները, ապահովագրությունը, ներդրումային ապրանքները: Ֆինանսական սուպերմարկետների ուղղվածությունը բանկերի, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և այլ ֆինանսական ինստիտուտների մանրածախ ծառայությունների վաճառքի հիմնական եղանակներից մեկն է հանդիսանում:

Այսպիսով, **ֆինանսական սուպերմարկետը մանրածախ բանկի բիզնես մոդելն է` ուղղված մեկ վայրում բանկային և ոչ բանկային ֆինանսական ծառայությունների (արժեթղթերով գործառնություններ, ապահովագրություն և այլն) տրամադրմանը:**

Առաջին ֆինանսական սուպերմարկետներն ի հայտ են եկել ԱՄՆ-ում, 20-րդ դարի 20-ական թթ. սկզբին, բայց չեն զարգացել` պայմանավորված օրենսդրական սահմանափակումներով: Արևմտյան Եվրոպայում ֆինանսական սուպերմարկետները երևան են եկել 20-րդ դարի 70-80-ական թթ.` բանկերի և ապահովագրական ընկերությունների միաձուլման արդյունքում: Այդ գործընթացը ստացել է «Bancassurance - բանկային ապահովագրություն» անվանումը, այսինքն` բանկերի միջոցով ապահովագրական ապրանքների ներկայացումը: ԱՄՆ-ում և Ճապոնիայում 90-ական թթ. ֆինանսական սուպերմարկետները նոր զարգացում ապրեցին` պայմանավորված ԱՄՆ-ում բանկային և ապահովագրական գործունեության համատեղումը արգելող, 1933թ. ընդունված *Գլասս-Ստիգալի օրենքի ուժը կորցրած ճանաչումով (վերացմամբ- այն բանկային օրենք էր, որն արգելում էր առևտրային բանկերին զբաղվել ներդրումային գործունեությամբ` էականորեն սահմանափակելով բանկերի` արժեթղթերով գործառնությունների իրավունքը, և ներդնելով բանկային ավանդի պարտադիր ապահովագրման համակարգը):* Այդ սահմանափակումները վերացվեցին 1999թ. ընդունված *Գրեմ-Լիչ-Բլայլի օրենքով, որը արմատապես*

փոխեց բանկային բիզնեսի կանոնները՝ ընդլայնելով ֆինանսական, բանկային հոլդինգների, կոնգլոմերատների, սահմանափակ ունիվերսալ բանկերի ստեղծման և գործունեության հնարավորությունները (այսինքն՝ ֆինանսական հոլդինգները կարող են ունենալ սեփական առևտրային, ներդրումային բանկերը, ապահովագրական ընկերությունները, ունիվերսալ բանկերը հնարավորություն ստացան իրականացնելու առևտրային, ներդրումային, ապահովագրական, այլ ոչ ֆինանսական գործառնություններ): Ֆինանսական սուպերմարկետներն առավել զարգացած են ԱՄՆ-ում, Ճապոնիայում Եվրոպայում:

Ֆինանսական սուպերմարկետների ստեղծման մոդելները (միասնական ֆինանսական ծառայության ներկայացումը) տարբերվում են ինտեգրման աստիճանով (օրինակ, բանկը կարող է իր մանրածախ ցանցի միջոցով ապահովագրական և ներդրումային ապրանքների վաճառքի վերաբերյալ գործակալի պայմանագիր կնքել): **Հնարավոր մոդելներ են, երբ միևնույն բաժնետերերը բանկի, ներդրումային, ապահովագրական և կառավարող ընկերությունների սեփականատերերն են, տեղի ունեցող միաձուլումները և կլանումները, բանկերի կողմից նոր ապահովագրական, ներդրումային ընկերությունների հիմնումը:** Ինտեգրման ամենաբարձր մակարդակում ստեղծվում են այն ֆինանսական սուպերմարկետները, որոնք առաջարկում են միաժամանակ տարբեր ֆինանսական ծառայություններ միասնական բրենդով (ապրանքանիշով): Անցնելով միասնական ապրանքանիշի՝ ֆինանսական հաստատությունները շատ հաճախ բացառում են «բանկ» բառի օգտագործումը:

Ֆինանսական սուպերմարկետը հաճախորդներին կողմնորոշված բիզնեսի մոդել է: Ֆինանսական սուպերմարկետների ստեղծման շարժառիթը (մոտիվցիան) բիզնեսի տարբեր բաղկացուցիչների միավորումից սիներգետիկ արդյունքի (էֆֆեկտի) ստացումն է, ընդ որում, տեղի են ունենում հաճախորդների բազայի փոխանակում, սպասարկման որակի բարձրացում, ֆինանսական տնտեսում՝ պայմանավորված գործունեության մասշտաբներով, մարքեթինգային ու գովազդի ծախսերի նվազեցում և այլն: **Ֆինանսական սուպերմարկետի առանձնահատկություններն են՝ ծառայությունների տրամադրումը հաճախորդների լայն զանգվածին, բանկային ծառայությունների հասանելիությունը, փոխառուների գնահատման էքսպրես համակարգը, ռիսկերի վրա հիմնված գնագոյացումը (Risk-based pricing, այսինքն՝ վարկի տոկոսադրույքները սահմանվում են՝ կախված վարկառուի հուսալիությունից):**

Ֆինանսական սուպերմարկետների ստեղծման առավելություններն են՝ մեկ տեղում բոլոր ֆինանսական ծառայություններից օգտվելը, ֆինանսական ծառայությունների լայն շրջանակը, միջոցների և ժամանակի տնտեսումը, ծառայությունների որակի միասնական ստանդարտները, միջնորդավճարից եկամուտների աճը, ռիսկերի նվազեցումը, հաճախորդների բազայի ավելացումը, ֆինանսական ծառայությունների քանակական աճը զարգացած մանրածախ ցանցերի միջոցով, ընդհանուր ծախսերի տնտեսումը և շահութաբերության աճը, նոր ֆինանսական ապրանքների զարգացումը, տարածքային հասանելիությունը (խանութներում, առևտրային կենտրոններում), հաղորդակցման պարզությունը:

Ֆինանսական սուպերմարկետների և ավանդական բանկերի տարբերությունները տատանվում են կառավարման ոճից մինչև շինության ձևը (տարածք, տեղակայում -պարզություն, չկան հաճախորդներին աշխատակիցներից առանձնացնող զրահապատ պատուհաններ, առկա է բարեհաճ վերաբերմունք, գործում են սրճարան, մանկական սենյակներ և այլն, հաճախորդի ցանկացած խնդիր լուծում է ստանում): **Ֆինանսական սուպերմարկետներն աշխատում են «շաբաթը 7 օր, օրը 24 ժամ» սկզբունքով:** Ֆինանսական սուպերմարկետի աշխատակիցները պետք է տիրապետեն մարքեթինգի վերաբերյալ գիտելիքներին, հոգեբանական ձիրքերին, քանզի նրանք ոչ թե պարզապես ծառայություն են վաճառում հաճախորդներին, այլ լուծում են նրանց խնդիրները: Հաճախ ֆինանսական սուպերմարկետները ստորաբաժանումներ են բացում պարենային խանութներում, առևտրային կենտրոններում:

Ֆինանսական սուպերմարկետների ստեղծման դեպքում միավորվում են շուկայի լիդերները: Եվ աստիճանաբար «ջնջվում է, վերանում» «ֆինանսական միջնորդ» հասկացությունը, քանի որ «ֆինանսական հրեշները» դառնում են գլոբալ խաղացողներ, շուկա ստեղծողներ, սահմանում են խաղի կանոնները, գնագոյացումը շուկայում, ինչպես նաև ազդում են օրենսդրական բազայի և մակրոտնտեսական իրավիճակի վրա կամ ֆինանսական շուկայի վրա ընդհանրապես:

Ֆինանսական խումբ են համարվում փոխկապակցված՝ երկու կամ ավելի ֆինանսական կազմակերպությունների խումբը և վերջիններիս մայր կազմակերպություն(ներ) հանդիսացող կազմակերպություն(ներ)ը (առկայության դեպքում): Մայր կազմակերպություն է համարվում կազմակերպության նկատմամբ վերահսկողություն ունեցող կազմակերպությունը:

Կազմակերպություն են համարվում ֆինանսական խմբի մեջ մտնող ֆինանսական կազմակերպությունը և մայր կազմակերպությունը միասին:

Պատասխանատու անձ է համարվում ֆինանսական խմբի անդամ կազմակերպությունների ընտրած և ԿԲ-ի նշանակած կամ օրենքով սահմանված դեպքերում ԿԲ-ի նշանակած ֆինանսական խմբի անդամ հանդիսացող ֆինանսական կազմակերպությունը, որը պարտավոր է օրենքով և ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ժամկետներում ու պարբերականությամբ իրականացնել իրեն վերապահված գործառնությունները, որոնց չկատարման համար ենթարկվում է պատասխանատվության:

Ֆինանսական կազմակերպություն են համարվում բանկը, վարկային կազմակերպությունը, ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունը:

Կազմակերպություններն որպես ֆինանսական խումբ են որակվում (ճանաչվում) ԿԲ-ի խորհրդի որոշմամբ: Որոշման ընդունման համար հիմք կարող է համարվել ԿԲ-ի հիմնավոր կարծիքը կամ կազմակերպությունների խմբի լիազոր ներկայացուցչի՝ որպես ֆինանսական խումբ որակելու մասին դիմումը: Լիազոր ներկայացուցչի ներկայացրած դիմումը պետք է պարունակի կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու համապատասխան հիմնավորումներ, ինչպես նաև առաջարկություն պատասխանատու անձի թեկնածության վերաբերյալ կամ առաջարկ ԿԲ-ին իր նախաձեռնությամբ նշանակել պատասխանատու անձին: Կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելու կարգը, ժամկետները, լիազոր ներկայացուցչի դիմումի և հիմնավորումների ներկայացման կարգն ու ձևը սահմանում է ԿԲ-ը նորմատիվ իրավական ակտերով:

ԿԲ-ը, արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով ֆինանսական խմբի չափերից, կառուցվածքի բարդությունից և ռիսկայնությունից ելնելով, կարող է ֆինանսական խումբը դասակարգել տեսակների, ենթախմբ(եր)ի:

Կազմակերպություններին ֆինանսական խումբ ճանաչելու մասին որոշումը կայացնելուց հետո այդ որոշման կայացման համար հիմքերի վերացման դեպքում պատասխանատու անձը դիմում է ԿԲ՝ առաջարկելով դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Դիմումն ստանալու պահից 30-օրյա ժամկետում ԿԲ-ի խորհուրդը որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում 1 տարին չգերազանցող փորձաշրջան տրամադրելու վերաբերյալ: Փորձաշրջանի ընթացքում կազմակերպությունները շարունակում են համարվել ֆինանսական խումբ: Փորձաշրջանի ժամկետի ավարտից հետո ԿԲ-ի խորհուրդը որոշում է կայացնում տվյալ կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ որակելը դադարեցնելու վերաբերյալ կամ որոշում է կայացնում շարունակելու տվյալ կազմակերպություններին դիտարկել որպես ֆինանսական խումբ: Կազմակերպություններին ֆինանսական խումբ ճանաչելու մասին որոշումը կայացնելուց հետո այդ որոշման կայացման համար հիմքերի վերացման դեպքում, եթե պատասխանատու անձը չի դիմում ԿԲ՝ առաջարկելով դադարեցնել կազմակերպություններին որպես ֆինանսական խումբ դիտարկելը, ապա ԿԲ-ը կարող է դադարեցնել կազմակերպություններին որպես խումբ որակելը:

Ֆինանսական խմբերի ռեեստրը տվյալների համակարգ է, որտեղ գրանցվում են տեղեկություններ ֆինանսական խմբերի վերաբերյալ: Ռեեստրը վարում է Կենտրոնական բանկը:

Ֆինանսական խմբի պատասխանատու անձը պարտավոր է իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել ֆինանսական խմբի (ֆինանսական խմբի առանձին տեսակի, ենթախմբի) վերաբերյալ ԿԲ-ի խորհրդի սահմանած հաշվետվությունները և տեղեկատվությունը:

ԿԲ-ի խորհուրդը կարող է ֆինանսական խմբի ռիսկերը զսպելու նպատակով ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի առանձին տեսակի և (կամ) ենթախմբի համար սահմանել հետևյալ **հիմնական տնտեսական նորմատիվները.**

- *Ֆինանսական խմբի ընդհանուր կապիտալի, ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքության նվազագույն չափերը,*
- *Ֆինանսական խմբի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը),*

- *Ֆինանսական խմբի ներխմբային գործարքների գծով ռիսկերի առավելագույն չափը (չափերը):* **Ներխմբային գործարք** է համարվում ֆինանսական խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև կամ այդ կազմակերպությունների (դրանցից մեկի) և այդ կազմակերպությունների (կամ դրանցից մեկի) հետ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով կապված անձանց հետ գործարքները,
- *Ֆինանսական խմբի բոլոր խմբի անդամ չհանդիսացող խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը):* Փոխառուների խոշոր համարվելու չափանիշները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ,
- *իրացվելիության նորմատիվ(ներ),*
- *արտարժույթի տնօրինման նորմատիվ(ներ),*
- *ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի նորմատիվ,*
- *տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների նորմատիվ:*

ԿԲ-ը կարող է առանձին ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի տեսակի և (կամ) ենթախմբի համար սահմանել ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ, քան սահմանված են այլ ֆինանսական խմբերի և (կամ) ֆինանսական խմբի տեսակների և (կամ) ենթախմբերի համար, եթե տվյալ ֆինանսական խմբի և (կամ) ֆինանսական խմբի տեսակի և (կամ) ենթախմբի ֆինանսական ցուցանիշները ԿԲ-ի հիմնավոր կարծիքով վատթարացել են, կարող են վատթարանալ, կամ ֆինանսական խումբը և (կամ) ֆինանսական խմբի տեսակը և (կամ) ենթախումբը գործունեություն է ծավալում բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում:

Ֆինանսական խմբի նկատմամբ կիրառվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները:

ՕՖՉՈՐԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օֆշորային բանկային բիզնեսը հանդիսանում է միջազգային բանկային բիզնեսի գրավիչ ուղղությունը: Օֆշորային բանկային բիզնեսի զարգացման սկիզբ կարելի է համարել 1965թ.: Այդ տարիներին Բահամյան կղզիներում ազգային և օֆշորային բանկերի միջև կար իրավասությունների սահմանազատում՝ առաջինները սպասարկում էին ռեզիդենտներին, երկրորդները՝ ոչ ռեզիդենտներին: Բահամյան կղզիների ֆինանսական զարգացումը նպաստեց այլ երկրներում օֆշորային գոտիների զարգացմանը, որոնք սկսեցին կիրառել օտարերկրյա կապիտալի ներդրման այդ փորձը:

Օֆշորային բանկային բիզնեսն իրենից ներկայացնում է արտոնյալ ռեժիմներով (հարկային, արժույթային, բանկային, վարչական) միջազգային բանկային բիզնեսը: *Օֆշորային է համարվում այն բանկը, որը գրանցված է օֆշորային գոտում:* **Օֆշորային բանկերին արգելված են** բանկի գրանցման երկրի ռեզիդենտների սպասարկումը և բանկային հաշվարկներում բանկի գրանցման երկրի ազգային արժույթի օգտագործումը: Սակայն այս սահմանափակումները հարաբերական բնույթ են կրում:

Օֆշորային բանկի առավելություններն են՝

1. Կանոնադրական կապիտալի մեծության և լիցենզիայի ստացման ոչ բարձր պահանջները (օֆշորային գոտում առևտրային բանկերի գրանցման համար կանոնադրական կապիտալի նվազագույն մեծությունը զգալիորեն ցածր է): Լիցենզիայի ստացման նկատմամբ լիբերալ պահանջներ են գործում, ինչն ընդլայնում է բիզնեսի դիվերսիֆիկացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն օֆշորային գոտիներ, որտեղ լիցենզիան տրամադրվում է նախ և առաջ համաշխարհային դասի բանկերին, որոնց բաժնետոմսերը գնանշվում խոշորագույն բոքսաներում:

2. Լայնածավալ հարկային արտոնություններ գրանցման երկրներում- սա հնարավորություն է տալիս օֆշորային բանկերին ստանալ բավականին մեծ զուտ շահույթ, ապահովել իրենց կայունությունը:

3. Մուտքը (ներթափանցումը) միջազգային միջբանկային շուկա և միջազգային վարկային շուկա: Օֆշորային բանկը հնարավորություն է տալիս միանալ միջբանկային թղթակցային հարաբերությունների համակարգին, ինչպես նաև միջազգային բանկային ընկերակցությանը: Օֆշորային բանկը հնարավորություն է ստանում փոխառություններ վերցնել կապիտալի միջազգային շուկայից բարենպաստ պայմաններով: Օֆշորային բանկի եկամուտները արժույթային գործառնություններից, սինդիկացված (մի քանի հոգի) փոխառությունների տրամադրումից և դրամական շուկայում մասնակցությունից,

ավանդներից, արժեթղթերով գործառնություններից պաշտպանված են բարձր հարկադրույքներից: Օֆշորային բանկերի դեպքում շահութահարկ, բանկային տոկոսների, շահաբաժինների նկատմամբ հարկեր և նմանատիպ այլ վճարներ չեն գանձվում:

4. Օֆշորային բանկերի գործառնությունների և հաճախորդների գաղտնիության բարձր մակարդակ: Գործնականում բոլոր միջազգային օֆշորային ֆինանսական կենտրոններում ապահովված է բանկային հաշիվների գաղտնիությունը: Տրամադրվում են նաև օֆշորային բանկային ծառայություններ անանուն հաշիվների բացման գծով:

5. Ավանդների մուլտիարժույթային (բազմաարժույթային) դիվերսիֆիկացիա: Օֆշորային բանկային բիզնեսի գլոբալ բնույթը հնարավորություն է տալիս բաշխել ավանդատուների ակտիվները այլ երկրներում և պաշտպանել վերջիններս արժույթային ռիսկերից, արժեզրկումից:

6. Մրցունակ տոկսադրույքներ – հարկային արտոնությունները նպաստում են բարձր տոկոսադրույքով ավանդների ներգրավմանը:

7. Հաճախ որպես առավելություն է նաև բանկային կարգավորման խիստ նորմերի բացակայությունը: Կապիտալի, պահուստների, իրացվելիության, ավանդների ապահովագրման նկատմամբ նվազագույն պահանջներ են ներկայացված կամ ընդհանրապես բացակայում են: Բայց միևնույն ժամանակ օֆշորային բանկերի հաճախորդների առջև պատասխանատվության բարձրացման նպատակով, պայմանավորված հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացմամբ, կասկածելի գործարքներին մի շարք օֆշորային բանկերի մասնակցությամբ օֆշորային բանկային բիզնեսը խստանում է: Օֆշորային բանկային բիզնեսը ենթադրում է հաշվետվության խստացում, կանոնավոր աուդիտորական ստուգումներ և այլն:

ՕՇՇՈՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Վերահսկողության աստիճանը, բնույթը և լիցենզիայի տրամադրման պայմանները տարբեր օֆշորային իրավասություններում տարբեր են: Խոշոր օֆշորային բանկային կենտրոններում գործում է բանկային վերահսկողության խիստ ռեժիմ՝ մոտ համաշխարհային ստանդարտներին, որը պայմանավորված է տվյալ օֆշորային բանկային գոտիների բարձր համբավի պահպանմամբ: Միևնույն ժամանակ գոյություն ունեն մի շարք «երիտասարդ» բանկային իրավասություններ, որտեղ միջազգային բանկային գործունեության նկատմամբ վերահսկողության պայմանները նվազագույնն են: Ներկայումս օֆշորային իրավասությունների մեծամասնությունը բանկերից պահանջում է անցում լիցենզիայի ընթացակարգին: **Օֆշորային բանկերին տրամադրվող տարատեսակ լիցենզիաները կարելի է խմբավորել 3 կատեգորիաներում.**

A տիպի լիցենզիա - հիմնականում նախատեսված է կայուն գործնական համբավ ունեցող բանկերի համար, նախ և առաջ խոշոր համաշխարհային բանկերի, որոնց բաժնետոմսերը գնանշվում են համաշխարհային ֆոնդային բորսաներում: Օֆշորային բանկերին իրավունք են տալիս իրականացնել ցանկացած բանկային գործառնություն ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ ցանկացած արտարժույթով, բացի գրանցման երկրի ազգային արժույթից: Այս տիպի լիցենզիան տրամադրվում է 1-5 տարի ժամկետով: Լիցենզիայի երկարաձգումը կատարվում է ավտոմատ կերպով, եթե լիցենզավորված անձը չի խախտել գործող նորմերը տվյալ իրավասությունում: Նման լիցենզիայի համար սահմանված են բարձր պահանջներ կանոնադրական կապիտալի մեծության, գրանցման ու լիցենզիայի տրամադրման տուրքերի (վճարների) նկատմամբ:

B տիպի լիցենզիա - թույլ է տալիս բանկերին իրականացնել բոլոր կամ համարյա բոլոր գործառնությունները ոչ ռեզիդենտների հետ ցանկացած արտարժույթով, բայց միաժամանակ արգելում է գրանցման երկրի ռեզիդենտների բանկային սպասարկումը: Այս տիպի լիցենզիան տրամադրվում է 1 տարի ժամկետով և ավտոմատ կերպով երկարաձգվում է, եթե չեն արձանագրվել տեղի օրենսդրության խախտումներ: Կանոնադրական կապիտալի մեծության, գրանցման տուրքի (վճարի) նկատմամբ պահանջները այդքան էլ խիստ չեն: Օֆշորային բանկերի մեծամասնությունը աշխատում է այս տիպի լիցենզիայով:

C տիպի լիցենզիա - թույլ է տալիս բանկերին իրականացնել սահմանափակ թվով գործառնություններ որոշ երկրների արժույթով և որոշակի թվով ոչ ռեզիդենտների հետ՝ միաժամանակ արգելելով գործառնությունների իրականացումը բանկի գրանցման երկրի տեղական շուկայում: Նման լիցենզիայի համար սահմանված են կանոնադրական կապիտալի, գրանցման ու լիցենզիայի տրամադրման

տուրքերի (վճարների) նվազագույն մեծություններ: Այս տիպի լիցենզիայի գործունեության ժամկետը սովորաբար 1 տարի է՝ հնարավոր երկարաձգմամբ: Շ տիպի լիցենզիայով օֆշորային բանկերը սպասարկում են փոխկապակցված ոչ ռեզիդենտ ընկերություններին, որոնց կազմի մեջ է մտնում նաև օֆշորային բանկը:

Հիմնականում օֆշորային բանկն իրականացնում է նույն գործառնությունները, ինչ սովորական բանկը, բայց մինևույն ժամանակ կան բացառություններ: Օրինակ, սահմանափակ լիցենզիայով օֆշորային բանկերը, որոնք կարող են դեպոզիտներ ընդունել և սպասարկել միայն բանկային լիցենզիայում կամ կանոնակարգում նշված իրավաբանական և ֆիզիկական անձանց: Օֆշորային բանկի ակտիվները մշտապես գտնվում են շարժման մեջ՝ բարձր եկամուտներ բերելով նրանց սեփականատերերին:

ՕՖՇՈՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Օֆշորային բանկային իրավասություն կամ օֆշորային բանկային գոտի *ասելով հասկանում են ցանկացած երկիր՝ առկա ցածր հարկադրույթներով կամ դրա բացակայությամբ, բանկային գաղտնիության որոշակի մակարդակով, նվազագույն պահուստային պահանջներով կամ լրիվ բացակայությամբ, արտարժույթի փոխանակման սահմանափակումներով:* Օֆշորային գոտիների բանկային օրենսդրությունը ոչ ռեզիդենտ բանկերի նկատմամբ գործում է լիբերալ սկզբունքով: Օֆշորային բանկերի իրավասությունները տարբերվում են միմյանցից ըստ օֆշորային բանկային բիզնեսի իրականացման պայմանների: Գոյություն ունեն դժվարամատչելի և հեղինակավոր օֆշորային բանկային իրավասություններ (օրինակ, Բահամյան, Կայմանյան կղզիներ և այլն), ինչպես նաև լիբերալ օֆշորային գոտիներ: Օրինակ, Բահամյան, Կայմանյան կղզիներում օֆշորային գոտիները գրավիչ են միջազգային բանկային բիզնեսի իրականացման համար, քանի որ բացակայում են ոչ ռեզիդենտների ուղղակի հարկերը և արժույթային վերահսկողությունը: Բահամյան կղզիները առաջին միջազգային բանկային կենտրոնն են եղել: Բահամյան կղզիների օֆշորային իրավասությունը ամենահեղինակավորներից է, իսկ բանկի գրանցումը՝ բավականին թանկ և բարդ: Լիցենզիան տրամադրվում է միջազգային համբավ ունեցող ֆինանսական հաստատություններին:

Կախված ստեղծման նպատակից՝ բոլոր բանկերը, որոնք գրանցվում են օֆշորային գոտիներում, ստորաբաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- **Ապրանքադիվերսիֆիկացված բանկային հաստատություններ** (ստեղծվում են հաճախորդների լայն շրջանակներին ծառայությունների ողջ փաթեթի տրամադրման համար):
- **«Գերի, կապված» (կեպտիվ) բանկային հաստատություններ** (ստեղծվում են ֆինանսաարդյունաբերական խմբերի ներսում գործառնությունների իրականացման համար):
- **Բանկային հաստատություններ առանձին տեսակի գործառնությունների իրականացման կամ հիմնադիրների ակտիվների կառավարման համար:**

Առանձնացնում են օֆշորային բանկերի հետևյալ տեսակները.

- ❖ **Ռեզիդենտ բանկ** – այսինքն՝ ունի ռեալ գործող գրանցված գրասենյակ: Օֆշորային բանկը պետք է ունենա գրանցված գրասենյակ, տնօրեններ և սեփականատերեր: Օֆշորային բանկի կառավարման ապարատը, ներառյալ գրասենյակները և հաշվապահությունը, գտնվում են բանկի սեփականատերերի գրանցման երկրում:
- ❖ **Կառավարվող բանկ կամ «բանկ առանց անձնակազմի»** - այդպիսի բանկը գործում է ընդհանուր լիցենզիայով ռեզիդենտ բանկի բազայի վրա՝ հատուկ համաձայնագրերի հիմքով: Ռեզիդենտ բանկն իրականացնում է հովանավորյալ բանկի աշխատանքի կազմակերպման վարչական գործառնությունները (տեխնիկական գործառնություններ, հաշվապահություն, գործառնությունների ձևակերպում): Բանկի սեփականատերերն ընդունում են կարևոր (վճռական) որոշումները: Որոշ իրավասություններում «առանց անձնակազմի» օֆշորային բանկն իրավունք ունի ծառայություններ մատուցել անսահմանափակ թվով հաճախորդների (բացառությամբ տվյալ իրավասության ռեզիդենտների):
- ❖ **Սահմանափակ բանկային լիցենզիայով «առանց անձնակազմի» բանկեր** - այդպիսի բանկերը չունեն ռեալ գործող գրասենյակ իրավասությունում, որտեղ նրանք պաշտոնապես գրանցված են: Հաճախորդների շրջանակը սահմանափակված է (բաժնետերեր, լիցենզիայում նշված անձիք): Այս

տիպի օֆշորային բանկերը պատկանում են ներֆիրմային բանկերի կատեգորիային, սակայն վերջիններս, էլնելով իրենց սեփականատերերի շահերից, կարող են իրականացնել մի շարք այլ գործառույթներ, այդ թվում՝ թղթակցային հարաբերություններ հաստատել այլ բանկերի հետ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ժամանակակից ֆինանսական համակարգը բնութագրվում է փոխկապվածության բարձր աստիճանով: Փոխկապվածությունը բնորոշ է թե՛ երկրների ֆինանսական շուկայի առանձին հատվածներին ու մասնակիցներին, թե՛ միջազգային շուկաներին ու մասնակիցներին: Այն առավելապես բնորոշ է ֆինանսական միջնորդներին՝ բանկերին, որոնք փոխկապակցված լինելով ընթացիկ գործունեությամբ և ամենօրյա գործարքներով, միասնաբար կրում են իրենց վրա նաև ֆինանսական շուկայի ներքին ու արտաքին միջավայրի փոփոխությունների ազդեցությունը: Նշված պարագայում բանկերի ամենօրյա գործունեությունը ենթակա է որոշակի ռիսկերի, որոնք կարող են հանգեցնել մեծածավալ կորուստների, իսկ մեկ բանկի անվճարունակության շղթայական տարածումը կարող է ազդեցություն ունենալ այլ բանկերի և ֆինանսական միջնորդների վրա՝ ձևավորելով ճգնաժամային իրավիճակներ:

Ճգնաժամը ֆինանսական համակարգի կտրուկ և էական անկայունությունն է, որն արտահայտվում է համակարգի գործունեության հիմնական ցուցանիշների զգալի անկմամբ: Բանկային ճգնաժամերը, անկախ ծագման պատճառներից, բնորոշվում են բանկերի անվճարունակությամբ, երբ բանկերը չեն կարողանում բավարարել հաճախորդների նկատմամբ պարտավորությունները:

Յուրաքանչյուր բանկային ճգնաժամ ունի իր առանձնահատկությունները, սակայն դրանք բոլորն ունեն ընդհանուր գծեր, որոնք առկա են գրեթե բոլոր դեպքերում: **Բանկային ճգնաժամերը կարելի է բաժանել արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ ձևավորված ճգնաժամերի: Արտաքին գործոններով պայմանավորված ճգնաժամերն** ունեն կարևոր առանձնահատկություն, որի էությունը բխում է ճգնաժամի փոխանցման մեխանիզմներից: Առավել ծանր և բազմաբնույթ են արտաքին պատճառներով պայմանավորված ճգնաժամերը, քանզի, ի տարբերություն ներքին պատճառների, առավել անկանխատեսելի են և դժվար կառավարելի: Սակայն **արտաքին գործոնները ի վերջո հանգեցնում են ճգնաժամի ներքին գործոնների դրսևորմանը:**

Ճգնաժամի ներքին պատճառների շարքում կարելի է առանձնացնել մի քանի ընդհանրականներ՝

- ✓ երկրի իշխանությունների հանդեպ վստահության կորուստը,
- ✓ միջնաժամկետ մակրոտնտեսական քաղաքականության հուսալիության և հիմնավորվածության վերաբերյալ կասկածները,
- ✓ միկրոտնտեսական կամ սխալ բանկային գործունեության հետևանքները,
- ✓ մակրոտնտեսական կամ գործունեության միջավայրի վատթարացման հետևանքները:

Ներքին պատճառների հիմքում առավելապես ընկած է տնտեսության մեջ առկա պակասուրդների և չվճարումների խորացումը, նախ, պետական բյուջեի դեֆիցիտի խորացումը և որպես դրա հետևանք՝ ստանձնած պարտավորությունները կատարելու կառավարության անկարողությունը:

Միկրոտնտեսական կամ սխալ բանկային գործունեության հետևանքով ծագած բանկային ճգնաժամերը պայմանավորված են լինում հետևյալ հիմնական գործոններով՝

- *վարկային ռիսկերի թերագնահատում,*
- *չափից ավելի բարձր ռիսկային գործունեություն,*
- *թույլ կորպորատիվ կառավարում,*
- *ներքին վերահսկողության լծակների անկատարություն,*
- *արժույթների և ժամկետայնության գեպի (ճեղքվածքի) սխալ կառավարում:*

Այս պայմաններն ավելի են վատթարանում, եթե բանկի փայտերերը ի վիճակի չեն ներդնել մեծածավալ կապիտալ և չունեն բավարար շահագրգռվածություն խնդիրների լուծման հարցում: Նույն իրավիճակը կարող է ստեղծվել, եթե բանկի կառավարիչները պատասխանատու չեն բանկի կառավարման համար: Օրինակ, անցումային և զարգացող երկրներում բավականին տարածված են գրպանային և առանձին արդյունաբերական խմբերին պատկանող բանկերը, որոնցում փոխկապակցված վարկավորումը, ինսայդերական գործառնությունները կամ պաշտոնական չարաշահումները կարող են սովորական երևույթ դառնալ:

Զգալի կորուստների կամ ճգնաժամի կարևոր նախադրյալներից կարող է լինել **բանկային գործունեության վերահսկողության և կարգավորման ոչ բավարար կանոնների առկայությունը կամ թույլ վերահսկողությունն ընդհանրապես**: *Բանկային վերահսկողության և կարգավորման անարդյունավետ համակարգը հանգեցնում է ակտիվների կառավարման մակարդակի, ակտիվային գործառնությունների որակի, վարկառուի ռիսկերի սխալ գնահատման: Թույլ վերահսկողությունը և կարգավորումը կարող են հետևանք լինել նաև՝*

- *վերահսկող մարմնի օրենսդրական լիազորությունների սահմանափակվածության,*
- *բանկերի սնանկացման հստակ կանոնների բացակայության,*
- *բանկերի հաշվետվության համակարգի անկատարության,*
- *հայտնաբերված բացթողումների վերացման իրավական մեխանիզմների բացակայության կամ անբավարարության:*

Բանկային ճգնաժամը կարող է ծագել նաև մակրոտնտեսական քաղաքականությունում առկա բանկային համակարգի հետ անմիջական կապ չունեցող խնդիրների պատճառով: Նույնիսկ **լավ կառավարվող և ուժեղ վերահսկողական դաշտով բանկային համակարգը կարող է լուրջ վնասներ կրել մակրոտնտեսական ոչ բավարար հաշվեկշռված քաղաքականության հետևանքով**: Մակրոտնտեսական միջավայրի վատթարացումը կարող է տեղի ունենալ բազմաթիվ պատճառներով, որոնց մի մասը ոչ միշտ է գտնվում երկրի իշխանությունների վերահսկողության ներքո: Այնուամենայնիվ երկրի իշխանությունները պետք է պատրաստ լինեն ճգնաժամային իրավիճակում իրականացնել տնտեսական քաղաքականության այնպիսի ճշգրտումներ, որոնք պահանջում են բանկերում համակարգային խնդիրների լուծման ուղիների բացահայտում և միջոցառումների իրականացում: Տվյալ դեպքում վտանգն այն է, որ որոշակի իրավիճակներում նման գործողությունները կարող են հանգեցնել նաև բանկային համակարգի հանդեպ ավանդատուների և վարկառուների վստահության կորստին:

Բանկային համակարգում ճգնաժամի նախադրյալ կարող են դառնալ նաև՝

- *մեկ կամ մի քանի բանկերում իրացվելիության կտրուկ նվազումը,*
- *ֆինանսական համակարգի վաղաժամ ազատականացումը,*
- *իշխանությունների նկատմամբ վստահության կորուստը,*
- *միջնաժամկետ մակրոտնտեսական քաղաքականության հուսալիության և հիմնավորվածության հանդեպ կասկածները:*

Մեկ բանկում իրացվելիության կտրուկ նվազումը, մեկ բանկի անվճարունակությունը կարող են շատ արագ տարածվել այլ բանկերի վրա: Մա կարող է տեղի ունենալ մի քանի պատճառներով՝

- ✓ *վճարահաշվարկային համակարգում խափանումների առաջացման,*
- ✓ *անվճարունակ բանկի ավանդատուների խնդիրների ազդեցության ներքո ընդհանուր բանկային համակարգի նկատմամբ ավանդատուների վստահության կտրուկ անկման:*

Նման պայմաններում անգամ ֆինանսապես առողջ և կայուն բանկը կարող է հայտնվել կարճաժամկետ անվճարունակության վիճակում, որը շղթայաձև կարող է տարածվել ամբողջ բանկային համակարգի վրա: Այս դեպքում **բանկային ճգնաժամը կրում է տեղական բնույթ, սակայն ճգնաժամը կարող է վերածվել նաև միջազգայինի**, երբ ճգնաժամ ապրող երկիրը սերտ ֆինանսական և առևտրային կապեր ունի որևէ այլ երկրի կամ երկրների հետ:

Եթե ֆինանսական համակարգի վաղաժամ ազատականացումը չի ուղեկցվում բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործմամբ, ապա այն նույնպես կարող է դառնալ բանկային ճգնաժամի պատճառ: Բանկերը կարող են պատրաստ չլինել գործելու այդպիսի միջավայրում, քանի որ ազատականացման արդյունքում զանազանվում են ռիսկերի տեսակներն ու բարդության մակարդակները: Բանկերից կարող են պահանջել ռիսկերի գնահատման ավելի բարձր հմտություններ, քան կիրառելի էին մինչև ազատականացումը: Նույն պայմանն առկա է նաև վերահսկող և կարգավորող մարմինների համար, որոնց մասնագետները ուղղակի կարող են պատրաստ չլինել նոր, ավելի բարդ որակի ռիսկերի բացահայտմանը, գնահատմանը և կանխարգելմանը:

Բանկային ճգնաժամը ավելի բարդ է կառավարել, երբ երկիրը կուտակել է ծավալուն արտաքին պարտք:

Արտաքին պարտքի ազդեցությունը բանկային ճգնաժամի վրա կախված է մի շարք չափանիշներից՝

- ✓ *բանկերի հանդեպ կառավարության պարտավորությունների ծավալը,*
- ✓ *պարտավորությունների արժույթի տեսակը,*
- ✓ *պարտավորությունների ժամկետայնությունը:*

Բանկային ճգնաժամը կարող է հետևել նաև երկրի արժույթի կտրուկ անկմանը:

Արժույթային ճգնաժամով պայմանավորված **բանկային ճգնաժամի առանձնահատուկ դրսևորումներից է տնտեսության դուլարացման բարձր մակարդակով պայմանավորված ճգնաժամը:** Դուլարացման բարձր մակարդակը հատկապես դժվարեցնում է բանկերի արտարժույթային պարտավորությունների կատարումը ավանդատուների կողմից մեծածավալ պահանջների ներկայացման պարագայում: Այս երևույթի պատճառն այն է, որ ազգային արժույթի կտրուկ արժեզրկման պայմաններում մեծածավալ արտարժույթային պարտավորությունների կատարման համար բանկերը չեն կարող ազատորեն դիմել ԿԲ-ի աջակցությանը, քանի որ ԿԲ-ի արտարժույթային պահուստների ծավալը սահմանափակ է, ինչն ինքնին կարող է դրդել ավանդատուներին առավել արագ հանել ավանդները բանկերից: Այս պայմաններում բանկային համակարգի կայունության պահպանման համար իշխանությունները հաճախ դիմում են վարչական սահմանափակումների:

Ճգնաժամերի հետ կապված էական խնդիրը բանկային ճգնաժամի առանձնահատուկ պատճառների բացահայտումն է: Կարևոր է, որ երկրի իշխանությունները ժամանակին ճանաչեն ընդհանուր հիմնախնդիրը, մշակեն դրա լուծման ռազմավարություն ու իրականացնեն անհրաժեշտ միջոցառումներ:

90-ական թվականների ընթացքում մի քանի խոշոր բանկային ճգնաժամեր են գրանցվել, նախ սկանդինավյան, ապա ասիական և լատինաամերիկյան երկրներում: Այս ճգնաժամերի կարևոր նախադրյալը թույլ ֆինանսական համակարգն էր, ինչը ոչ հստակ մակրոտնտեսական քաղաքականության, բանկային գործունեության վերահսկողության ու կարգավորման անկատարության հետևանքն էր:

Արձագանքելով հաճախակի ու ավելի ծավալուն դարձող ճգնաժամերին, միջազգային ֆինանսական կազմակերպություններն առաջարկեցին **ճգնաժամերի հաղթահարման որոշակի միջոցառումներ**, որոնք ուղղված էին *բանկային վերահսկողության ուժեղացմանը, սնանկության օրենսդրության և բանկերի ակտիվների որակի գնահատման համակարգերի արդիականացմանը:* Սակայն միջազգային ֆինանսական կազմակերպությունների դերը ճգնաժամերի հաղթահարման հարցում միանշանակ չի գնահատվում: Գոյություն ունի կարծիք, որ հաճախ միջազգային ֆինանսական կազմակերպությունները ոչ թե վերացնում են ճգնաժամի նախադրյալները, այլ հրահրում են ճգնաժամի ծավալումը:

Փաստորեն ասիական, ռուսական և լատինաամերիկյան ճգնաժամերը, որոնք դրսևորվել են պետական ծավալուն պարտքի առկայության և դուլարացման բարձր աստիճանի պայմաններում, ինչ-որ չափով նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների քաղաքականության հետևանք էին: Այս տեսանկյունից բացառություն չէր նաև 2007-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Բանկային համակարգի վրա էական ազդեցության կարևոր պատճառներից է համարվում բանկային գործունեության կարգավորման բնագավառում Բազելյան համաձայնագրի շրջանակներում պահանջների մեղմացումը: Իհարկե նշված գործոնները ունեցել են որոշակի ազդեցություն տնտեսական իրավիճակի վրա, սակայն հիմնարար պատճառներ են հանդիսանում համաշխարհային տնտեսության անհամաչափ զարգացումը, ԱՄՆ տնտեսության մեջ կառուցվածքային տեղաշարժերը, երբ համաշխարհային ՀՆԱ-ում ԱՄՆ մասնաբաժնի նվազման պայմաններում ֆինանսական հատվածի մասնաբաժինը, մասնավորապես երկրորդային, ածանցյալ գործիքների առումով շարունակում է մնալ որոշիչը: Գնաժամի առաջին լուրջ ահազանգը ԱՄՆ անշարժ գույքի շուկայում գների աճի դանդաղումն ու անկումն էր, որը դրսևորվեց դեռ 2006թ.-ից: Սակայն ֆինանսական հաստատությունները, մասնավորապես հիփոթեքային ընկերությունները շարունակում էին ավելացնել այդ հատվածի ֆինանսավորումը կիրառվող գործիքների գնի նվազեցման, հաճախորդներին ավելի մատչելի պայմաններ առաջարկելով:

Կարելի է առանձնացնել մի քանի մակրոտնտեսական երևույթներ, որոնց միջոցով հնարավոր է մեկնաբանել ճգնաժամերի առանձին դրսևորումները:

- Առաջին, *ճգնաժամերը գոյանում են ֆինանսական կենտրոններում և տարածվում այլ շուկաներ տոկոսադրույքների շուկերի ու անշարժ գույքի գների անկման միջոցով:*
- Երկրորդ, *ճգնաժամերը հաջորդում են կապիտալի միջազգային շարժունակության բարձր մակարդակների ժամանակահատվածներին:*
- Երրորդ, *զարգացող և զարգացած երկրները հավասարապես են հակված ճգնաժամերի:*
- Չորրորդ, *ճգնաժամերի հետևանքները սովորաբար լինում են զգալի և երկարատև, միջինում 4 տարի տևողությամբ՝ ուղղորդվելով անշարժ գույքի գների էական անկումով, գործազրկության աճով և հարկային եկամուտների կտրուկ նվազումով:*

ԲԱՆԿԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Կարելի է առանձնացնել երկու խումբ տեսություններ, որոնք փորձում են մեկնաբանել ճգնաժամերի առկայությունը: Առաջին խումբ տեսությունները շեշտում են հիմնարար գործոնների կարևորությունը ճգնաժամերի ձևավորման ընթացքում: Օրինակ, **ըստ Ռեյ Դալիոյի՝ տնտեսության մեջ առկա են երեք շարժող ուժեր՝ արտադրողականությունը, պարտքի երկար պարբերաշրջանը և գործարար պարբերաշրջանը: Ըստ Դալիոյի՝ ճգնաժամերը ձևավորվում են այն ժամանակ, երբ պարտքի երկար պարբերաշրջանը կամ բիզնեսի պարբերաշրջանը գտնվում է ստորին կետերին մոտիկ, իսկ եթե երկու պարբերաշրջանների ստորին կետերը համընկնում են, ապա ճգնաժամն ավելի ուժգին է լինում:** Դալիոյի տրամաբանությունը բավականին հստակ է և բխում է պահանջարկով պայմանավորված գործարար ցիկլի քեյնսյան տրամաբանությունից, հասարակությունը բարեկեցիկ է, երբ տնտեսությունն աշխատում է հզորությունների առավելագույն զբաղվածության պայմաններում, այսինքն՝ պահանջարկը հանգեցնում է գների բարձրացմանը՝ ստեղծելով առաջարկն ընդլայնելու կարիք: Մինևույն ժամանակ առաջարկն ընդլայնվում է պարտքի և վարկային միջոցների հաշվին՝ համապատասխանաբար հանգեցնելով արտադրական գործոնների գների բարձրացմանը, ինչը ևս ստեղծում է լրացուցիչ պահանջարկ: Սա էլ հանգեցնում է պահանջարկ պարտքի նկատմամբ և այս ցիկլը կրկնվում է: Սա կարող է շարունակվել այնքան ժամանակ, որքան վարկառուների եկամուտները թույլ են տալիս սպասարկել պարտքը՝ վճարելով պարտքի մայր գումարը և տոկոսները: **Ըստ Դայլոյի, արտադրողականության աճով պայմանավորված պարտքի մակարդակի աճը և անշարժ գույքի գների գերազանցատումով ու գերլավատես ակնկալիքներով պայմանավորված սպասվածից ցածր եկամուտների պայմաններում հետագա ապապարտքավորումն իրենցից ներկայացնում են պարտքի երկար ցիկլ, որը տևում է 50-70 տարի:**

Ուշացած զսպողական դրամավարկային քաղաքականությունը կարող է անկումը կանգնեցնելու փոխարեն արագացնել այն:

Կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականությամբ պայմանավորված պարտքի ցիկլերը սովորաբար տևում են 5-7 տարի: Կարճ պարտքային ցիկլը դրամավարկային քաղաքականության հետևանք է: Այս տեսությունը փորձում է բացատրել ֆինանսական ճգնաժամերի ձևավորումը և զարգացումը պարտքի մակարդակի տատանումներով, սակայն չի բացատրում տնտեսությունում պարտքի մակարդակի տատանումների բուն պատճառը: Ակնհայտ է, որ պարտքի բարձր մակարդակը էապես ազդում է ֆինանսական ճգնաժամի ուժգնության վրա, բայց բոլորովին անհասկանալի է, թե ինչու են մարդիկ նախընտրում ավելի շատ վարկ վերցնել որոշ ժամանակահատվածում և գերծ մնալ վարկից այլ ժամանակահատվածում: Այս առեղծվածը փորձում է բացահայտել տեսությունների մեկ այլ խումբ, որոնց հիմքում ընկած են երկու տեսական ուղղություններ՝ **Հայման Մենսկու ֆինանսական փխրունության տեսությունը և վարքագծային տնտեսագիտության տեսությունը:**

Հ.Մինսկին պնդում էր, որ ֆինանսական համակարգը արագ փոփոխվող դինամիկ համակարգ է, որը տատանվում է կայուն և փխրուն վիճակների միջև: Այս վիճակները բնորոշվում են **վարկ տվողների և վարկ վերցնողների տրամադրվածությամբ:**

Մինսկին առանձնացնում էր **տրամադրվածության երեք աստիճան՝ նորմալ, սպեկուլյատիվ և գերսպեկուլյատիվ:** **Նորմալ տրամադրվածության** դեպքում վարկի արժեքը զգալիորեն փոքր է գրավի արժեքից, և վարկառուի եկամուտները բավարար են վարկի մայր գումարն ու տոկոսները մարելու համար: **Սպեկուլյատիվ տրամադրվածության** դեպքում վարկի արժեքը հավասարվում է գրավի արժեքին, իսկ վարկառուի եկամուտները բավարար են միայն վարկի տոկոսների մարման համար: Վարկատուները ակնկալում են, որ գրավի արժեքը աճելու է և անհրաժեշտության դեպքում ապահովելու է վարկի մայր գումարի մարումը: **Գերսպեկուլյատիվ կամ պոնզի տրամադրվածության** դեպքում վարկի գումարը գերազանցում է գրավի գումարը, իսկ վարկառուի միջոցները բավարար չեն նույնիսկ վարկի տոկոսների մարման համար: Վարկատուն ակնկալում է, որ գրավի արժեքը պարբերաբար աճելու է և ապահովելու է թե՛ տոկոսների, և թե՛ մայր գումարի մարումն՝ անկախ վարկառուի եկամտի մակարդակից: Ուստի, եթե ֆինանսական համակարգի մասնակիցների գերակշռող մասն ունի սպեկուլյատիվ և պոնզի տրամադրվածություն, ապա ֆինանսական համակարգը կայուն վիճակից շեղվում է դեպի անկայուն վիճակ և դառնում փխրուն: Իսկ այս դեպքում յուրաքանչյուր նվազագույն բացասական ազդակ բազմապատիկ ազդեցություն է թողնում ֆինանսական համակարգի վրա՝ հանգեցնելով ֆինանսական ճգնաժամի

սկզբնավորմանը և տարածմանը: Ֆինանսական ճգնաժամի բացակայությունը դրդում է շուկայի մասնակիցներին դրսևորել սպեկուլյատիվ տրամադրվածություն, ինչն էլ իր հերթին պայմանավորում է ճգնաժամի ծավալումը:

Վարքագծային տնտեսագիտությունը եկել է հակադրելու դասական տնտեսագիտության այն դրույթին, որ տնտեսավարող սուբյեկտները գործում են ռացիոնալ, և նրանց որոշումների հիմքում ընկած է **ռացիոնալ ընտրությունը**: Վարքագծային տեսությունը պնդում է, որ մարդիկ, թեև ունեն ռացիոնալ (բանական) դատողության ունակություն, հաճախ դրսևորում են ոչ ռացիոնալ (ոչ բանական) վարքագիծ՝ պայմանավորված մարդու նյարդաբանական, հոգեբանական և սոցիալական էվոյուցիայի առանձնահատկություններով: Օրինակ, ֆինանսական շուկաներում հաճախ դիտարկվում է հոտային վարքագիծը, երբ ներդրողները սկսում են կրկնել այլ ներդրողների ոչնչով չհիմնավորված քայլերը: Այս տեսությունը, ի տարբերություն ռացիոնալության կանխավարկածի, ունի բազմաթիվ փորձնական ապացույցներ և սկսում է լայն տարածում գտնել տեսաբանների շրջանում:

Ֆինանսական ճգնաժամերի վերաբերյալ տեսությունների երկրորդ խումբը պնդում է, որ **ֆինանսական ճգնաժամերի հիմքում ընկած է մարդկանց ոչ ռացիոնալ վարքագիծը**:

Ֆինանսական ճգնաժամերի բազմազանության մեջ ի հայտ է գալիս մի ընդհանրություն՝ դա *ճգնաժամերի տարածման հաջորդականությունն է*: **Ճգնաժամերի ծավալումը ենթարկվում է հետևյալ օրինաչափությանը**

- *սկզբնական շոկ,*
- *դրական հետադարձ սնուցման մեխանիզմ (positive feedback mechanism),*
- *սնուցման աղբյուր,*
- *բացասական շոկ:*

Առաջին երեք փուլերը նպաստում են ակտիվային փուչիկների (պղպձակների) աճին, իսկ բացասական շոկը այն ասեղն է, որ պայթեցնում է փուչիկը:

Ֆինանսական ճգնաժամերը սկիզբ են առնում աննախադեպ իրադարձություններից, որոնք կոչվում են սկզբնական շոկեր: *Սկզբնական շոկեր են համարվում տեխնոլոգիական առաջընթացը, ֆինանսական նոր գործիքները, ֆինանսական կամ այլ շուկաների ապակարգավորումը կամ քաղաքական իրադարձությունները:* Սրանք կատարում են կատալիզատորի դեր՝ հանրության և ներդրողների ուշադրությունը սևեռելով մի նոր հնարավորության վրա, ինչն իր հերթին ապահովում է որոշակի տեսակի ակտիվների գների աճ:

Ինչպես փուչիկը փչելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ճնշում, այդպես էլ ֆինանսական փուչիկն ուռճացնելու համար անհրաժեշտ է ներդրողների հետաքրքրության պահպանումն ապահովող գործիք, այսպես կոչված՝ **դրական վերասնույց**: *Այդպիսի գործիք է մարդկային վարքագծին բնորոշ հակումների (շեղումների) համակարգը, որի հիման վրա մարդիկ գործում են իռացիոնալ կերպով:* Մասնավորապես, այդ շեղումների շարքին է դասվում «հաստատման» հակվածությունը, որը ստիպում է մարդկանց տվյալների մի ամբողջությունից ընտրել այն տվյալը, որը հաստատում է մարդու նախապես ձևավորված համոզմունքը: Բացի այդ, գերվստահության հակվածությունը ստիպում է մարդկանց գերվստահ չարդարացված որոշումներ կայացնել: Կան նմանօրինակ այլ հակումներ ևս, որոնք հանգեցնում են ոչ ռացիոնալ որոշումների կայացմանը ներդրողների կողմից: Արդյունքում, ինչ որ պատճառով որոշակի ընթացքում որևէ ապրանքի գնի աճը հանգեցնում է ներդրողների մոտ այնպիսի համոզման, որ գները շարունակելու են աճել տեսանելի ապագայում: Սա ինքնին արդեն բերում է լրացուցիչ պահանջարկի ձևավորման և գների աճի՝ ստեղծելով վերարտադրող ցիկլ, որն էլ հանդես է գալիս որպես դրական վերասնույցի մեխանիզմ:

Միաժամանակ գնային փուչիկի ձևավորման ընթացքում գնողունակ պահանջարկի գոյացման համար անհրաժեշտ է **սնուցման կամ ֆինանսավորման աղբյուր**: Այսինքն, կարևոր է, որ ներդրողները ոչ միայն հավատան ապագայում ակտիվի գնի աճին, այլև կարողանան ներդրում կատարել տվյալ ակտիվում: Այս դեպքում իբրև աղբյուրներ կարող են հանդես գալ օտարերկրյա կապիտալի ներհոսքը, դրամի էմիսիան, գաղութային հարստությունը, սպառման սահմանափակումը, ներդրումների ավելացումը և առկա ներդրումների ուղղումը տվյալ ակտիվի ձեռք բերմանը:

Նման իրավիճակը չի կարող երկար տևել, քանի որ մակրոտնտեսական տեսանկյունից վերոնշյալ բոլոր աղբյուրներն ինքնին հանգեցնում են տնտեսությունում կառուցվածքային շեղումների՝ գնաճի խորացման, պահանջարկի նվազման և այլն, որոնք արդյունքում զսպում են գնային փուչիկի աճը: Ֆինանսական ճգնաժամի դրսևորման գործում բեկումնային դերը պատկանում է **բացասական շոկին**: *Բացասական շոկն*

այն իրադարձությունն է կամ իրադարձությունների շարքը, որը կտրուկ կարգավորում է գների մակարդակը տվյալ ակտիվի շուկայում: Օրինակ, 2007-2009թթ. ճգնաժամի համար բացասական շուկր մեկ հիփոթեքային ընկերության սնանկացումն էր, որը բացահայտեց հիփոթեքային շուկայի ուռճեցրած պատկերը:

Որևէ առանձին տեսություն չի տալիս ֆինանսական ճգնաժամի մեխանիզմի կատարյալ նկարագրությունը: Նշված տեսություններն օգտակար են ճգնաժամի պատճառները հասկանալու և այն կանխելու կամ ազդեցությունը նվազեցնելու համար: Որոշ տեսաբաններ պնդում են, որ ճգնաժամերը կանխելով, մարդկությունը արագ աճն ու շուկաների տատանումները կփոխարինի դանդաղ կամ զրոյական աճով ու գերկայուն շուկաներով:

ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

II համաշխարհային պատերազմից սկսած՝ ազատ աշխարհի տնտեսությունների աճը սահմանափակող խոր ճգնաժամն ավարտվեց 1982-1983թթ-ին՝ թողնելով բավական չլուծված խնդիրներ՝ կապված վերականգնման համար անհրաժեշտ ժամանակահատվածի և զարգացող երկրների ֆինանսական պարտավորություններն իրականացնելու հնարավորությունների հետ, այսինքն՝ մինչև ճգնաժամը և ճգնաժամից հետո առաջացած պարտքերի վճարման ժամկետների ապահովման հետ: Տնտեսական կառուցվածքների պահպանումը և միջազգային հիմնական սնանկացումներից խուսափելը, հավանաբար, **Արժույթի միջազգային հիմնադրամի (International Monetary Fund-IMF)**, քան թե այլ ազգային կամ միջազգային մարմնի շնորհիվ էր:

Տեղակայված է Վաշինգտոնում, Դ.Ս., 1944թ-ի դրությամբ 44 անդամ երկրներ ներառող IMF-ը ներկայումս ընդհանուր առմամբ դարձել է 190 անդամ երկրներով մի կառույց: Յուրաքանչյուր անդամ երկիր վճարումներ է կատարում IMF-ին, իսկ հավաքված գումարները ներդրվում են IMF փոխառվական գործառնությունների ֆինանսավորման մեջ: Երբ նոր երկրներ են միանում IMF-ին, նրանց համար սահմանվում է որոշակի մեծության անդամավճար, որն ուղղվում է IMF-ի կապիտալի ձևավորմանը: Բոլոր անդամ երկրները դրա դիմաց ստանում են քվեարկման իրավունք և հատուկ փոխառության իրավունք՝ համամասնական իրենց մուծումներին: IMF-ի հիմնական նպատակն է վերաֆինանսավորել այն անդամ երկրներին, որոնք արտաքին առևտրում և վճարային հաշվեկշիռներում ունեն ֆինանսական դժվարություններ:

Արժույթային միջազգային աջակցությունը կարող է կենսական նշանակություն ունենալ զարգացող երկրների համար: Երկրի ֆինանսական դժվարությունները կարող են գերազանցել Հիմնադրամին նրա կատարած հատկացումները: Եվ որքան ավելի շատ զարգացող երկրներ են անդամակցում, այնքան ավելի մեծ աջակցություն կարող է պահանջվել մնացած անդամներից:

Միացյալ Նահանգներում քաղաքական գործիչները IMF-ում սեփական անդամավճարի չափի մեծացման վերաբերյալ ունեն իրենց տեսակետը: Իրականում, երկրներին պարտքերից «ազատելուն» ուղղված խստորեն մշակված ծրագրերը կարող են կարճաժամկետում բացասական ազդեցություն ունենալ այն զարգացած երկրների վրա, որոնք սատարում են Հիմնադրամին: Օրինակ, ֆինանսական աջակցություն ստացող երկրներից պահանջվող պարտադրիք ցուցանիշներից է ներմուծման կրճատումը: Իսկ այդ ներմուծումների մեծ մասը կատարվում է զարգացած երկրներից, այդ թվում նաև Միացյալ Նահանգներից: Պարտադրված պահանջների ոչ հազվադեպ արդյունքներից է նաև՝ IMF-ի օգնության հետևանքով սահմաններով անօրինական տեղաշարժերի աճը: Նման կարգի անօրինական էմիգրացիան՝ դեպի ավելի հարուստ երկրներ, անթիվ սոցիալական խնդիրների առաջացման պոտենցիալ է պարունակում:

Այդ իսկ պատճառով, IMF-ի համար կարևոր է հավասարակշռել զարգացող երկրների ֆինանսական համապատասխան քաղաքականությունը՝ զարգացած երկրների արտահանման կարիքների հետ: Բացի այդ, զարգացող երկրներին ֆինանսական խնդիրներում աջակցելիս, IMF-ն պետք է կարողանա զարգացող երկրներին բնորոշ նորմալ պակասուրդը նրբորեն տարբերակել, հատկապես այն պակասուրդներից, որոնք ինֆլյացիոն քաղաքականության հետևանք են:

Կապված միջազգային պարտքի համատարած խնդիրների հետ՝ 1982թ-ին դիմեցին Միացյալ Նահանգներին, որպեսզի վերջինս իր բաժնեչափն ավելացնի 8.5 մլրդ ԱՄՆ դոլարով: Այդ ժամանակ, Կոնգրեսի կողմից նման լրացուցիչ բաժնեչափի հաստատման ձախողումը կարող էր դիտարկվել որպես Միացյալ Նահանգների անպատրաստակամություն՝ շարունակելու սատարել զարգացող երկրների

պարտքերի հետ կապված խնդիրների լուծմանը: Հանգամանալի քննարկումներից հետո Կոնգրեսը հաստատեց այն:

Երբ IMF-ը Բրետոն-Վուդսի համաժողովով 1944թ-ին հիմնադրվեց, նրա նպատակն էր աջակցել երկրներին՝ կարճաժամկետ ֆինանսական դժվարությունները հաղթահարելու համար: Երբ այս խնդիրները լուծվեցին, սպասվում էր, որ առևտրային նորմալ հարաբերություններ կհաստատվեն: Այսօր, IMF-ի ռեսուրսները նաև ուղղված են ավելի երկար ժամկետներում մեծածավալ խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ միջազգային պարտավորություններից խուսափումը:

1970-ական թթ. նավթի գների կտրուկ բարձրացումը հանգեցրեց խիստ լարվածության շատ ազգերի տնտեսություններում, և այդ երկրների կառավարությունները, որոնք անդամ էին, դիմեցին IMF-ին՝ լրացուցիչ վերաֆինանսավորման համար: Նոր փոխատվությունների նկատմամբ աճող պահանջները բավարարելու համար՝ IMF-ը ստիպված էր պարբերաբար դիմել իր անդամներին՝ արագ կատարելու անդամավճարները, հատկապես՝ 1998թ-ին մի շարք նոր զարգացող ազգերի տնտեսությունների անկումից հետո: Պահուստային հիմնադրամները (նաև հայտնի է որպես պահուստներ կամ ապահովության պահուստներ) այն ապրանքների քանակն են, որն առանձնացված է և պահվում է պահանջարկի անկանխատեսելի նվազման կամ ավելցուկի հետևանքով գների նշանակալի տատանումները կանխելու նպատակով:

IMF-ի պահուստային միջոցների ֆինանսական գործիքը (Buffer Stock Financing Facility-BSFF) ստեղծվել է 1969թ-ին իրավասու անդամ երկրների վճարային հաշվեկշռում տեղ գտած դժվարությունների հաղթահարմանը աջակցելու նպատակով՝ կապված Պահուստային հիմնադրամի համաձայնագրերում պարտադիր անդամավճարների ֆինանսավորման հետ, որը համապատասխանում է Հիմնադրամի չափանիշներին: